

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷՎՈՅԱՆ ԼԻԱ ՍԱՄՎԵԼԻ

**ԹՈՒՐՔԻԱ-ԱԴՐԲԵՋԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1991-2010ԹԹ.**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է. 00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐՍԵՆ ԳԱԳԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ԳԼՈՒԽ 1. ԹՈՒՐՔԻԱ-ԱԴՐԵՋԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ.....	14
1.1 ԽՍՀՄ փլուզումը և Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների հաստատումը. Թուրքիայի արտաքին քաղաքականությունում «նեո-պանթուրանական» և «թուրքական մոդելի» կիրառման շրջան.....	14
1.2. Թուրքիայի հարաբերությունները Ադրբեջանի հետ Աբուլֆազ Էլչիբեյի կառավարման օրոք.....	25
ԳԼՈՒԽ 2. ԹՈՒՐՔԻԱ-ԱԴՐԵՋԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ.....	41
2.1 Թուրքիայի հարաբերություններն Ադրբեջանի հետ Հեյդար Ալիևի կառավարման ժամանակաշրջանում. Տարածաշրջանային ռազմավարական նախագծերը Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում. «Դարի Պայմանագիրը»՝ որպես աշխարհատնտեսական գործոն.....	41
2.2 Թուրքիայի հարաբերությունները Ադրբեջանի հետ Իլհամ Ալիևի կառավարման ժամանակաշրջանում. 2010թ. «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագիրը.....	72
2.3 Վրաստանի ներգրավումը Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքի ազդեցության ոլորտում.....	100
ԳԼՈՒԽ 3. ԹՈՒՐՔԻԱ-ԱԴՐԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	108

3.1 Հայկական գործոնի դերը Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում.....	108
3.2 Կրոնական գործոնը Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում.....	116
3.3 Քրդական գործոնը Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում.....	121
3.4 Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքի սպառնալիքը ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությանը.....	131
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	139
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	145
ՀԱՎԵԼՎԱԾ	

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: 1991-2010թթ. Թուրքիա-Ադրբեջան համագործակցության ուսումնասիրությունը կարևոր նշականություն ունի ինչպես երկկողմ, այնպես էլ Հարավային Կովկասի տարածաշրջանում ձևավորված այդ երկու պետությունների ռազմաքաղաքական դաշինքի միջև քաղաքական, իրավական, ռազմական, տնտեսական համագործակցության հիմքերի և պատճառների վերհանման համատեքստում: Այս խնդիրն անմիջական կապ ունի ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգության համակարգի ձևավորման հետ, ուստի ուսումնասիրությունը զուտ գիտական ուսումնասիրության շրջանակներից ելնելով՝ նաև ունի կիրառական բնույթ:

Թեմայի ուսումնասիրությունն առնչություն ունի Հայաստանի Հանրապետության Ազգային Անվտանգության Ռազմավարության և Հայաստանի Հանրապետության Ռազմական դոկտրինի հետ: Մասնավորապես՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ որպես արտաքին սպառնալիք նշված է, որ Ադրբեջանի Հանրապետության կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանդեպ զինված ուժի կիրառման բացահայտ սպառնալիքների պարագայում Թուրքիայի Հանրապետությունը՝ լինելով Ադրբեջանի ռազմավարական դաշնակիցը, նույնպես կարող է սպառնալիք ստեղծել:¹

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է Թուրքիա-Ադրբեջան քաղաքական համագործակցության համակողմանի ուսումնասիրման ու վերլուծության անհրաժեշտությամբ, տվյալ ժամանակաշրջանում Հարավային Կովկասում թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքի ձևավորման գործընթացով:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է Հարավային Կովկասի տարածաշրջանում ուժերի հարաբերակցության ձևավորման վրա ազդող հիմնարար գործոններից մեկի՝ թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքի

¹ Տես՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 18:

ձևավորված գործընթացի ուսումնասիրությամբ և այդ դաշինքի ազդեցության ոլորտում Վրաստանին ներգրավելու գործընթացի վերլուծությամբ: Միաժամանակ, կարևորվում է միջազգային ասպարեզում թուրք-ադրբեջանական հակահայկական գործունեության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու անհրաժեշտությունը:

Ատենախոսության նպատակներն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակներն են Թուրքիա-Ադրբեջան երկկողմ համագործակցության հիմքերը և էությունը հնարավորին չափով համապարփակ վերլուծությունը, հարաբերությունների զարգացման տրամաբանությունը պայմանավորող պետական և խմբային շահերի համընկման ու բախման, ինչպես նաև երկկողմ հարաբերություններում արտաքին և ներքին գործոնների դերակատարման բացահայտումը, Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների համատեքստում տարածաշրջանային ընթացիկ քաղաքական զարգացումների հնարավոր միտումների վերհանումը:

Նկատի ունենալով ուսումնասիրվող թեմայի լայն ու բազմակողմանի բնույթը՝ աշխատանքի գիտական ուսումնասիրության խնդիրներն են հետևյալ կետերը.

- 1991-2010թթ. Թուրքիա-Ադրբեջան համագործակցության հիմնական ուղղությունների զարգացման և խորացման գործընթացները,
- Թուրքիա-Ադրբեջան համագործակցության քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական բաղադրիչները,
- երկու պետությունների հարաբերությունների վրա ազդեցություն գործող արտաքին և ներքին գործոնները,
- Թուրքիա-Ադրբեջան համագործակցության իրավական և իրավապայմանագրային հիմքը,
- Թուրքիա-Ադրբեջան երկկողմանի հարաբերությունների համակողմանի դիտարկումը՝ համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության միտումների համատեքստում,
- Թուրքիայի և Ադրբեջանի միջև կնքված իրավական փաստաթղթերի քաղաքագիտական վերլուծությունը, և 2010թ. օգոստոսի 16-ի Թուրքիա-

Ադրբեջանի ռազմավարական համաձայնագրի բովանդակության վերլուծությունը,

- Թուրքիա-Ադրբեջանի ռազմաքաղաքական դաշինքի կողմից ՀՀ ազգային անվտանգությանը սպառնացող մարտահրավերները:

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսությունը 1991-2010թթ. Թուրքիա-Ադրբեջանի քաղաքական համագործակցությունը գիտական համապարփակ ուսումնասիրության առաջին փորձն է հայրենական պատմագրության և քաղաքագիտության ասպարեզում: Նորույթ են նաև ատենախոսության հավելվածում զետեղված Թուրքիա-Ադրբեջանի իրավապայմանագրային հիմքը կազմող փաստաթղթերի հրապարակումը, ինչպես նաև 2010թ. ստորագրված «Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմավարական գործընկերության և փոխադարձ աջակցության մասին» համաձայնագրի բովանդակային վերլուծությունը:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ուսումնասիրությունն ընդգրկում է 1991-2010 թթ. ժամանակահատվածում Թուրքիայի և Ադրբեջանի միջև համագործակցության ձևավորման գործընթացը և հիմնական ուղղությունները: Հետազոտության ժամանակագրության սահմանների ընտրությունը պայմանավորված է 1991թ. ԽՍՀՄ կազմալուծման արդյունքում նորանկախ Ադրբեջանի Հանրապետություն-Թուրքիա հարաբերությունների վերականգնման ակտիվ գործընթացի, ինչպես նաև 2010թ. Թուրքիա-Ադրբեջանի հարաբերությունների իրավաքաղաքական՝ ռազմավարական դաշինքի կազմավորման հանգամանքներով: Այդուհանդերձ, նյութն ավելի համապարփակ ներկայացնելու, ինչպես նաև թեման առավել համակողմանի և ամբողջական մոտեցում ցուցաբերելու նպատակով՝ ատենախոսության որոշ հատվածներում անդրադարձ է կատարվում նաև այլ ժամանակահատվածի որոշ իրադարձություններին կամ իրողություններին:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Աշխատությունը կատարված է գիտահետազոտական արդի մեթոդներով ու սկզբունքներով: Կիրառվել են պատմաքննական, պատմահամեմատական, պատմահամադրական եղանակները, օգտագործվել է նախորդ ուսումնասիրողների փորձն ու ձեռքբերումները, որոնք առկա են քաղաքագիտական - պատմագիտական աշխատություններում:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև՝ գործնական-կիրառական նշանակություն: Ատենախոսության մեջ ներկայացված փաստերը, առաջադրված դրույթները, մեկնաբանությունները և եզրահանգումները կարող են օգտակար լինել ինչպես Թուրքիա-Ադրբեջան համագործակցության առանձին հիմնախնդիրների ուսումնասիրման, այնպես էլ արդի փուլում տեղի ունեցող մի շարք տարածաշրջանային գործընթացների վերլուծման առումով: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել տարածաշրջանային քաղաքականության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման նպատակով:

Աշխատանքի փորձաքննությունը: Աշխատանքի հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնում:

Սկզբնաղբյուրների և օգտագործված գրականության համառոտ տեսություն: Ատենախոսությունը շարադրված է ՀՀ-ում, Ժնևի Միջազգային և զարգացման ուսումնասիրությունների ինստիտուտում և ՄԱԿ-ի գրադարանում պահվող հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն և ադրբեջաներեն լեզուներով պաշտոնական փաստաթղթերի, ժամանակակիցների հուշերի, հոդվածների ու հարցազրույցների, հայ, թուրքական, ադրբեջանական և միջազգային մամուլի հրապարակումների, հայ և օտարազգի գիտնականների աշխատությունների ու հոդվածների հետազոտության և վերլուծության հիման վրա: Աշխատանքի արխիվային բազան հիմնվում է Ժնևի միջազգային և զարգացման ուսումնասիրությունների ինստիտուտի, ՄԱԿ-ի, Ֆրիբուրգի համալսարանի և Ֆեդերալիզմի ինստիտուտի գրադարաններում հասանելի աղբյուրների, ինչպես նաև ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվների վրա:²

Ատենախոսության մեջ օգտագործված սկզբնաղբյուրները բաղկացած են Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները կարգավորող իրավական

² The Graduate Institute of International and Development Studies, <http://graduateinstitute.ch>, The UN Geneva archives and library, <http://unog.ch/>, L'Université de Fribourg, <http://www.unifr.ch>, Institut du Fédéralisme, http://www.unifr.ch/ius/federalism_fr/surlefederalisme, ՀՀ ԱԳՆ՝ Սահմանակից երկրների վարչության ընթացիկ արխիվ:

փաստաթղթերից:³ Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ մի շարք սկզբնաղբյուրների օգտագործումն անհնարին է նրանց անհասանելիության պատճառով՝ պայմանավորված համապատասխան արխիվային նյութերի գաղտնիության ժամկետի հետ:

ԼՂ զինված հակամարտության համատեքստում Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների ուսումնասիրության համար օգտագործվել են հայ և օտարազգի հեղինակների մի շարք գիտական ուսումնասիրություններ: Հատկապես կարևորում ենք Թ. դե Վաալի⁴, Ս. Չերնյավսկու⁵, Ն. Փեքմեզչիի և Ն. Բյույուքլըլըզի⁶, Հ. Դեմոյանի⁷, Ն. Հովհաննիսյանի⁸ աշխատությունները: 1995թ. «մարտյան իրադարձությունների» մասին ուշագրավ տեղեկություններ են զետեղված Ֆ. Դեմիրքուլի⁹, Թ. Էրի¹⁰ և Ի. Սադիգովի¹¹ հուշերում, որոնք օգնում են լույս սփռել թուրք-ադրբեջանական հարաբերությունների մի շարք կնճռոտ խնդիրների, այդ թվում ԼՂ պատերազմի տարիներին Թուրքիա-Ադրբեջան ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության հարցի վրա: Վերոնշյալ աշխատություններն աչքի են ընկնում հակաալիկյան ուղղվածությամբ և տարբերվում են թուրքական և ադրբեջանական քաղաքական և պատմագիտական ընդհանուր տեսակետներից: Ադրբեջանի ներքին քաղաքական զարգացումների լուսաբանման տեսակետից արժեքավոր են ադրբեջանցի քաղաքագետների և քաղաքական գործիչների՝ Ա. Մուֆալիբովի¹²,

³ Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Dostluk,İşbirliği ve İyi Komşuluk Anlaşmasının Onaylanmasının Uygun Bulunduğuna Dair Kanun, Ocak 24; 1992, Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Stratejik Ortaklık ve Karşılıklı Yardım Anlaşması”, Bakü, 16 Ağustos, 2010; Türksoy’un Kuruluşu ve Faaliyet İlkeleri Hakkında Anlaşmanın Onaylanmasının Uygun Bulunduğuna Dair Kanun, Kanun No. 3973, 22.02.1994.

⁴ T. de Waal, “Black Garden: Armenia and Azerbaijan Through Peace and War”, NYU Press, 2003, pp.360.

⁵ С.И. Чернявский, “Новый путь Азербайджана”, Москва,Азер-Медиа, 2002г., -349с.

⁶ N. Pekmezci, N. Büyükyıldız, “Ülkücüler. Ötekidevletin şehitleri.”, Istanbul,1999, s. 309.

⁷ Հայկ Դեմոյան, Ղարաբաղյան Հակամարտությունը և Թյուրքական Գործոնը, Երևան, 2002, էջ -136, Hayk Demoyan, “Karabagh Drama:Hidden Acts”, Yerevan, 2003, pp. 116, Г. Демоян, Л. Мелик-Шахназарян, “Ходжалинское дело: особая папка”, Ереван, 2003, -48с., Г. Демоян, “Турцияи Карабахский конфликтв конце 20-гоначала 21-говека: историко-сравнительный анализ”, Ереван, 2006, -255с..

⁸ Ն. Հովհաննիսյան, “Հայաստանը Անդրկովկասյան-Մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի գործոն”, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 1999, Հ. 18, էջ 16-39:

⁹ F. Demirkol, “Diktatörleri uyku tutmaz”, Istanbul, 2002, - 328s..

¹⁰ T. Er, “Azadlıktan Tiranlığa”, Ankara, 2010, -448s..

¹¹ И. Садыгов, “Записки полковника”, 16/03/2012, http://www.radioazadlyg.org/archive/isa_sadigov

¹² Интервью с А. Муталибовым, “Независимая газета”, 02.04.1992, Интервью с А. Муталибовым, Политический журнал, 24.05.2004.

Ա.Էլչիբեյի¹³, Զ.Ալիզադեի¹⁴, Ա. Յունուսովի¹⁵, Վ. Հուսեյնովի¹⁶, Է. Օրուջևի¹⁷, Ի. Սադիգովի¹⁸ հարցազրույցները, հուշապատումները և մենագրությունները:

Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների խորքային գործընթացների բացահայտման գործում օգտակար են եղել քաղաքագետների և միջազգային հարաբերությունների տեսաբանների՝ Զ. Բզեթինսկու¹⁹, Գ. Ֆուլլերի²⁰, Ա. Հանթինգթոնի²¹, Ֆ. Ֆուկույամայի²², Ա. Դավութօղլուի²³, Բ. Օրանի²⁴ և այլոց աշխատությունները:

Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների տարբեր ասպեկտներ, ինչպես նաև երկու պետությունների արտաքին քաղաքականության վերաբերյալ ուսումնասիրություններ ներկայացված են նաև Թուրքիայի վերլուծական կենտրոնների՝ Տնտեսական ու սոցիալական հետազոտությունների թուրքական հիմնադրամի (ԹԵՍԵՎ, Türkiye Ekonomik ve Sosyal Etudler Vakfi, TESEV)²⁵, Քաղաքական, տնտեսական ու սոցիալական հետազոտությունների հիմնադրամի (ՍԵԹԱ, Siyaset Ekonomi Ve Toplum Araştırmaları Vakfi, SETA),²⁶ Միջին Արևելքի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (ՕՐՍԱՄ, Ortadoğu Stratejik Araştırmalar Merkezi, ORSAM),²⁷ Միջազգային ռազմավարական վերլուծությունների

¹³ Interview with Abulfaz Elchibey, former President of Azerbaijan and leader of Democratic Congress and People's Front. LiteraturnayaGazeta, 4 March 1998, No. 9.

¹⁴ Յ. Ալիզադե, Բ. Ագաև, “Ադրբայձան. Կոնեց վոթորոյ ռեսպուբլիկի (1988–1993 ց.)”, Իզձ. Դոմ ”Դրանիցա”, Մոսկվա, 2006, 615 շ.

¹⁵ Ա. Յունոսով, “Իսլամ վ Ադրբայձանե”, Յաման, Բակու, 2004, 388շ., Ա. Յունոսով, “Ադրբայձան վ Նաչալե ՄՄԻ վեկա: Կոնֆլիկտի վ Փոտենցիալնե Մցրոզի”, Բակու, 2007, 241շ.

¹⁶ Յ. Դուսեյնով, “Բոլշե, շեմ ռձնա յիզն”, Կն. 1, 2, Իզձ. ձոմ “Կրասնայա Յվեզձա”, Մոսկվա 2013. 384 շ., 424 շ.

¹⁷ Էլձար Օրուձևե, “Մուշա. Մայ 1992ց. Տվեդեթելստվո ռձեվիձցա”, 2008, <http://azdiaspora.org/>

¹⁸ Ի. Տաձյոց, “Յափիսկի թոկոմնիկա”, 16/03/2012, http://www.radioazadlyg.org/archive/isa_sadigov

¹⁹ Z. Brzezinski, “The Grand Chessboard: American Primacy and Its Geostrategic Imperatives”, New York: Basic Books, 1998, p. 240.

²⁰ G. Fuller, “The New Turkish Republic: Turkey as a Pivotal State in the Muslim World”, Washington, DC: United States Institute of Peace Press, 2008, pp.196, Graham E. Fuller, Ian O. Lesser, “ Turkey’s New Geopolitics: From the Balkans to Western China”, Boulder, Colorado: Westview Press, USA, 1993, G. Fuller, “Turkey in the New International Security Environment,” Dis Politique, 16, Nos. 3-4, 1992, pp. 29-44.

²¹ S. Huntington, “The Clash of Civilizations and the Remaking of World Order”, Simon and Schuster, New York, 1996, 367 pp..

²² F. Fukuyama, “State-Building: Governance and World Order in the 21st Century”, Cornell University Press, 2004, 137pp., F. Fukuyama, “The End of History and the Last Man”, Free Press, New York, 1992, p. 432.

²³ Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik, Küre Yayınları, İstanbul 2009, s.584.

²⁴ B.Oran, “Türk Dış Politikası Cilt 2: 1980-2001 (Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar)”, İletişim Yayınları, İstanbul, 2001, -637s., B.Oran, “Türk Dış Politikası Cilt 3: 1980-2001 (Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar)”, İletişim Yayınları, İstanbul, 2013, 885 s..

²⁵ Türkiye Ekonomik ve Sosyal Etüdler Vakfi, <http://www.tesev.org.tr>

²⁶ Siyaset, Ekonomi ve Toplum Araştırmaları Vakfi, <http://www.setav.org>

²⁷ Ortadoğu stratejik araştırmalar merkezi, <http://www.orsam.org.tr>

հիմնադրամի (ՈՒՍԱՔ, Uluslararası Stratejik Araştırmalar Kurumu, USAK),²⁸ Ռազմավարական հաղորդակցության կենտրոնի (ՍԹՐԱԹԻՄ, Stratejik İletişim Merkezi, STRATİM),²⁹ Թուրք-ասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (ԹԱՍԱՄ, Türk Asya Stratejik Araştırmalar Merkezi, TASAM)³⁰ հետազոտություններում:

Ատենախոսության մեջ մեծապես օգտագործվել են նաև օտարերկրյա վերլուծական կենտրոնների ու գիտահետազոտական ինստիտուտների՝ ՌԱՆԴ-ի³¹, Չեթհեն Հաուսի³², Բրուքինգսի³³, Ջեյմսթաուն հիմնադրամի³⁴, Վաշինգտոնի Մերձավոր Արևելքի ինստիտուտի³⁵, Եվրոպական քաղաքականության հետազոտության կենտրոնի /CEPS/³⁶, Կարնեգիի հիմնադրամի³⁷, Ատլանտիկ Քանսլի³⁸ զեկույցները և ուսումնասիրությունները:

Ատենախոսության մեջ նաև լայնորեն օգտագործվել է հայ և արտերկրյա մամուլում, միջազգային հարաբերություններն ուսումնասիրող հեղինակավոր պարբերականներում հրապարակված տվյալները, ինչպես նաև տարածաշրջանային քաղաքականության փորձագետների, վերլուծաբանների, քաղաքագետների և քաղաքական գործիչների հոդվածները և հարցազրույցները³⁹:

Պաշտոնական տեղեկատվություն ստանալու համար օգտագործվել են Թուրքիայի, Ադրբեջանի, Նախիջևանի ԻՀ, ՀՀ, ԼՂՀ, Վրաստանի, ՌԴ Արտաքին

²⁸ Uluslararası Stratejik Araştırmalar Kurumu, <http://www.usak.org.tr>

²⁹ Stratejik İletişim Merkezi, <http://www.stratim.org.tr>

³⁰ Türk Asya Stratejik Araştırmalar Merkezi, <http://www.tasam.org>

³¹ RAND Corporation, <http://www.rand.org>

³² Chatham House, <http://www.chathamhouse.org>

³³ Brookings, <http://www.brookings.edu>

³⁴ The Jamestown Foundation, <http://www.jamestown.org>

³⁵ The Washington Institute of Near Eastern Policy, <http://www.washingtoninstitute.org>

³⁶ The Center of European Policy Studies, <http://www.ceps.be>

³⁷ Carnegie Endowment for International Peace, <http://carnegieendowment.org>

³⁸ Atlantic Council, <http://www.atlanticcouncil.org>

³⁹ "Коммерсантъ", №109 (332), 11.06.1993, №144 (367), 31.07.1993; №63 (1021), 13.04.1996, Известия, 09.03.1992, 04.08.1993 г.; "Независимая газета", 20.08.2010; The Economist, "Russian Pressure on Azerbaijan," Foreign Report, 14.07. 1994; The Washington Times, March 9, 1992, p. A 9; Al Jazeera, "Turkey's new visionary: One Middle East country is forging ahead with plans to become a regional superpower", 18.07. 2010; " Türkiye bolgede superguc olabilir", Hurriyet, 23 Eylul, 1991, 05.03.1992; Milliyet, 08.04.1993; Takvim, 24.11.2009; Shahin Abbasov, Azerbaijan-Turkey Military Pact Signals Impatience with Minsk Talks – Analysts, 18 January 2011 (<http://www.eurasianet.org/node/62732>); ИА "REGNUM,"Парламент Азербайджана ратифицировал военное соглашение с Турцией", 21.12.2010; СергейМаркедонов, Соседи Грузии: доипосле «Пятидневной войны», 22.08.2008, <http://www.politcom.ru>;

C.Ariel, "The New 'Great Game': Oil Politics in the Caucasus and Central Asia", The Heritage Foundation Backgrounder No. 1065, Washington, DC, January 25, 1996; C. Svante, "Turkey and the Conflict in Nagorno-Karabakh: A Delicate Balance," Middle Eastern Studies, Vol. 34, No. 1, January 1998, pp. 51–72; Aydin, M., "Turkish Foreign Policy; Framework and Analysis", SAM, Papers, No.1, Ankara, Centre for Strategic Research, 2004; А.Муталибов, "В 55 летмнепришлосьначатьс нуля", Политический журнал, 24. 05. 2004

գործերի նախարարության,⁴⁰ Թուրքիայի և Ադրբեջանի Խորհրդարանների⁴¹, Թուրքիայի և Ադրբեջանի Էկոնոմիկայի նախարարության⁴² պաշտոնական կայքերը:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը համապատասխանեցված է հետազոտության նպատակներին և խնդիրներին: Այն ունի երեք գլուխ և ինը ենթագլուխ:

Առաջին գլուխը՝ «Թուրքիա-Ադրբեջան քաղաքական համագործակցության ձևավորման շրջան» վերնագրով, փորձ է ներկայացնելու և վերլուծության ենթարկելու ԽՍՀՄ կազմալուծումից հետո Ադրբեջանի նորանկախ հանրապետության հետ Թուրքիայի հարաբերությունների վերականգնման գործընթացը, և այն պայմանավորող արտաքին և ներքին գործոնները: Առաջին ենթագլխում ներկայացվում է Թուրքիա-Ադրբեջան պաշտոնական դիվանագիտական հարաբերությունների ձևավորման գործընթացը Թուրքիայի «նեո-թուրանական» արտաքին քաղաքականության համատեքստում, ինչպես նաև 1991-1995թթ. «թուրքական մոդելի» կիրառումը Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններում: Նպատակը Ադրբեջանի նկատմամբ Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության գաղափարական-քաղաքական հիմքերի վերլուծությունն է: Երկրորդ ենթագլուխը Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյի կառավարման ժամանակաշրջանում՝ 1992-94թթ., Թուրքիա-Ադրբեջան սերտ համագործակցության հաստատման գիտական վերլուծության փորձ է:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Թուրքիա-Ադրբեջան քաղաքական համագործակցության զարգացման շրջան. ռազմավարական դաշինքի ինստիտուցիոնալ ամրապնդումը» և բաղկացած է երեք ենթագլուխներից: Ներկայացվում է Ադրբեջանի նախագահներ Հեյդար և Իլհամ Ալիևների օրոք Թուրքիա-Ադրբեջան քաղաքական համագործակցության զարգացումն ու ինստիտուցիոնալ ամրապնդումը, 2010թ. «Ադրբեջանի և Թուրքիայի միջև

⁴⁰ Türkiye Cumhuriyeti Dışişleri Bakanlığı, <http://www.mfa.gov.tr>, Azərbaycan Respublikası Xarici İşlər Nazirliyi, <http://www.mfa.gov.az>, Azərbaycan Respublikası Xarici İşlər Nazirliyinin Naxçıvan Muxtar Respublikasındakı İdarəsi, <http://dmfa.nakhchivan.az>, ՀՀ ԱԳՆ, <http://www.mfa.am>, ԼՂՀ ԱԳՆ, <http://www.nkr.am>, Ministry of Foreign Affairs of Georgia, <http://www.mfa.gov.ge>, Министерство Иностранных Дел Российской Федерации, <http://www.mid.ru>,

⁴¹ Türkiye Büyük Millet Meclisi, <http://www.tbmm.gov.tr>, Azərbaycan Respublikası Milli Məclisi, <http://www.meclis.gov.az/>

⁴² Türkiye Cumhuriyeti Ekonomi Bakanlığı, <http://www.ekonomi.gov.tr>, Azərbaycan Respublikasının İqtisadi İnkişaf Nazirliyi, <http://www.economy.gov.az>

ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագրի և դրա քաղաքական հետևանքների վերլուծությունը: Առաջին ենթագլուխը ներկայացնում է Հ. Ալիևի կառավարման տարիներին երկու պետությունների միջև զարգացող քաղաքական և տնտեսական համագործակցությունը՝ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործընթացների համատեքստում, դիվանագիտական հարաբերությունների, պաշտոնական այցերի դինամիկան, ինչպես նաև հարաբերություններում որոշակի «լարվածության» շրջանի պատճառների և հետևանքների վերլուծությունը: Երկրորդ ենթագլխում վերլուծության է ենթարկվում Հ. Ալիևի որդի՝ Իլիամ Ալիևի օրոք հոր վարած հիմնական քաղաքական ուղու շարունակումը, և Թուրքիա-Ադրբեջան քաղաքական համագործակցության ամրապնդումն ու իրավաքաղաքական նոր հարթության տեղափոխումը՝ 2010թ. կնքված «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագրի հաստատմամբ: Ներկայացվում է վերոնշյալ համաձայնագրի բովանդակության, քաղաքական նախադրյալների, տարածաշրջանում ուժերի հավասարակշռության վրա հնարավոր ազդեցության վերլուծությունը՝ տարածաշրջանային զուգահեռ քաղաքական գործընթացների համատեքստում: Երրորդ ենթագլխում քննարկվում են թուրք-ադրբեջանական դաշինքում Վրաստանի ներգրավման քաղաքականության միտումները:

Երրորդ գլուխը վերնագրված է «Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների բնույթը պայմանավորող հիմնական գործոններ և հակասություններ» ու բաղկացած չորս ենթագլխերից:

Առաջին ենթագլխի բովանդակությունը թուրք-ադրբեջանական հարաբերություններում հայկական գործոնի նշանակության վերլուծությունն է:

Երկրորդ ենթագլուխը նվիրված է երկու պետությունների հարաբերություններում կրոնական գործոնի ուսումնասիրմանը:

Երրորդ ենթագլուխը ներկայացնում է Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում քրդական գործոնի դերի վերլուծությունը՝ «Մեծ Մերձավոր Արևելք» ԱՄՆ-ի ռազմավարության համատեքստում:

Չորրորդ ենթագլխում տարածաշրջանային զարգացումների միտումների համատեքստում քննարկվում է ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությանը սպառնացող Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքի ձևավորումը:

Աշխատանքն ունի նաև առանձին բաժին՝ «Հավելված», որտեղ զետեղված է Թուրքիայի և Ադրբեջանի միջև ըստ ոլորտների ստորագրված առավել նշանակալից հրավական փաստաթղթերի ցանկը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԹՈՒՐԹԻԱ-ԱԴՐԲԵՋԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ

1.1 ԽՍՀՄ փլուզումը և Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների հաստատումը. Թուրքիայի արտաքին քաղաքականությունում «նեո-պանթուրանական» և «թուրքական մոդելի» կիրառման շրջան

Ադրբեջանն իր գերակշիռ թյուրքալեզու մահմեդական բնակչության, աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական ռազմավարական նշանակության, հարուստ բնական ռեսուրսների (մասնավորապես՝ նավթի և բնական գազի) շնորհիվ եղել է Թուրքիայի ուշադրության կենտրոնում դեռևս նախախորհրդային շրջանում: 1918 – 1920թթ. Օսմանյան կայսրության, այնուհետև քեմալական Թուրքիայի իշխանությունները մեծ դերակատարում ունեցան Ադրբեջանի Ժողովրդավարական հանրապետության ստեղծման, ինչպես նաև հետագայում խորհրդայնացման գործում: Սակայն, 1922թ. ԽՍՀՄ-ի կազմավորմամբ, Թուրքիան զրկվեց Ադրբեջանի ՍՍՀ-ի վերաբերմամբ ուղղակի հարաբերությունների ճանապարհով սեփական քաղաքականությունը վարելու հնարավորությունից: Ուստի Ադրբեջանում իր ազգային շահերը ներկայացնելու համար՝ Թուրքիան հարկադրված էր գործել ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների սահմանափակ շրջանակում: Այսպես, 1967թ. ԽՍՀՄ այցելության շրջանակներում Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելն այցելեց նաև Ուզբեկստան ու Ադրբեջան⁴³: Բաքվում Ս. Դեմիրելը հատուկ նշել էր, թե «Բաքու ոտք դնելու առաջին իսկ պահից մենք զգում ենք, որ մենք նույն ավանդույթների, լեզվի ու մշակույթի կրողն ենք հանդիսանում»⁴⁴:

Միաժամանակ, նույնիսկ ԽՍՀՄ գոյության ժամանակ, Թուրքիան փորձում էր թյուրքալեզու խորհրդային հանրապետությունների հարցում վարել իր ուրույն գիծը, որը հիմնականում արտահայտվում էր այդ ժողովուրդների քաղաքական

⁴³ Hulusi Turgut, Adriyatik'ten Çin Seddi'ne Avrasya ve Demirel. Doğu Yakası'nın Hikayesi, İstanbul, 2001, s. 24-25.

⁴⁴ Նույն տեղում, էջ 25.

վտարանդիությանը ապաստանելու և սատարելու ձևով: Այսպես, Թուրքիան հանդիսանում էր Ադրբեջանի քաղաքական վտարանդիությանը («Մուսավաթ») ապաստանող պետությունը: Սակայն 1985թ. գորբաչովյան «վերակառուցման» և «հրապարակայնության» պայմաններում քաղաքական ճգնաժամ ապրող ԽՍՀՄ-ը, և դրանով պայմանավորված աշխարհաքաղաքական գործընթացները, Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը, ինչպես նաև Ադրբեջանի ՍՍՀ-ում տեղի ունեցող ներքին զարգացումները հնարավորություն ընձեռեցին Թուրքիային՝ համապատասխան քայլեր ձեռնարկել տարածաշրջանում, մասնավորապես, Ադրբեջանում իր ազդեցության հաստատման համար: 1980-ական թթ. վերջում, երբ ԽՍՀՄ գրեթե ողջ տարածքում սոցիալ-քաղաքական ճգնաժամի պայմաններում սկսվեցին ազգամիջյան բախումները, և ուրվագծվեց ԽՍՀՄ մոտալուտ կազմալուծումը, Թուրքիայում նկատվեց ազգայնամոլական ուժերի համախմբում պանթուրանական տրամադրության շուրջ: Թուրքական քաղաքական վերնախավի կողմից Կովկասում և Միջին Ասիայում ազգակից, լեզվական և պատմա-մշակութային կապեր ունեցող նորանկախ թյուրքալեզու պետությունների հնարավոր ստեղծումն ընկալվեց որպես իր ազդեցությունը թյուրքալեզու հանրապետությունների վրա տարածելու «պատմական հնարավորություն»:⁴⁵ Վերլուծելով ԽՍՀՄ-ի թուլացման ազդեցությունը Թուրքիայի ներքին քաղաքական զարգացումների վրա, կարելի է պնդել, որ 1980թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում կատարված ռազմական հեղաշրջումից հետո առաջին անգամ, ազգայնամոլական ուժերը, օգտագործելով 1989թ. Բուլղարիայում և Ադրբեջանում տեղի ունեցած իրադարձությունները, հնարավորություն ստացան քաղաքական ասպարեզում ներկայանալ որպես արտաքին դերակատարությամբ օժտված ուժ և հանդիսանալ «արտաքին թուրքերի» հովանավորը:⁴⁶

Պետական մակարդակով գործելու անհնարինության դեպքում թե ներքին, թե արտաքին քաղաքական ասպարեզում ազգայնական ուժերի օգտագործման քաղաքական ավանդույթը Թուրքիայի Հանրապետությունում ձևավորվել էր դեռևս 1940-ական թվականներին, երբ այդ պետությունը, համակրելով ֆաշիստական

⁴⁵ П. Сафронов, “ Турецкая внешняя политика и государства Центральной Азии и Кавказа”, Центральная Азия и Кавказ, 1998, # 1, стр. 18.

⁴⁶ Ա. Ավագյան, «Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994թթ.», Հայկական բանակ, # 3 /49/, 2006, էջ 48:

Գերմանիային և խուսափելով ակնհայտ աջակցություն ցուցաբերելուց, իր կապերն ամրապնդում էր, օգտագործելով Նուրի փաշայի, գեներալ Էրքիլեթի և այդ կարգի ազգայնամոլներին⁴⁷: 1980-ական թթ. վերջում, երբ թուլացած ԽՍՀՄ օրոք Թուրքիան չէր կարող ուղղակի կապեր հաստատել Ադրբեջանի ԽՍՀ-ի հետ, կիրառվեց նույն քաղաքական գործելաճր: Տարբերությունը, 1940-ական թթ. համեմատությամբ, այն էր, որ 1980-ական թթ. թուրք ազգայնամոլները չունեին արտաքին գործունեության փորձ, և 1960-70թթ. պետության կողմից օգտագործվել էին ներքաղաքական կյանքում ձախակողմյան կազմակերպությունների դեմ, չնայած «արտաքին թուրքերի» գործոնը կամ պանթյուրքական գաղափարախոսությունը մշտապես օգտագործվել է Ազգային Շարժում կուսակցության (ԱՇԿ) առաջնորդ Ալիարսլան Թյուրքեշի կողմից:⁴⁸ 1966թ. Էրզրումի համալսարանում իր ունեցած ելույթի ժամանակ նա շեշտել է. «Թուրքիայի սահմաններից դուրս գտնվող բոլոր թուրքերի բարգավաճումը մեր ազգային և մարդկային պարտականությունն է: ...Թուրքերը, աշխարհի որ ծայրում էլ լինեն, իմ մարդիկն են: Եթե «արտաքին թուրքերով» հետաքրքրվելը, նրանց սիրելը թուրանականություն է, ուրեմն ես թուրանական եմ»:⁴⁹

Ի տարբերություն ուտոպիական «Թուրանի» ստեղծման 20-րդ դարասկզբի երիտթուրքերի պանթուրանականությանը, ԹՀ նախագահներ Թուրգութ Օզալի և նրան հաջորդած Սուլեյման Դեմիրելի նեո-պանթյուրքականությունն ավելի պրագմատիկ էր: Վերջինս նախատեսում էր նորանկախ թյուրքալեզու հանրապետությունների գործոնն օգտագործելու միջոցով Թուրքիան վերածել գերտերության: Այսպես, 1991թ. «Հյուրիեթ» թերթի «Թուրքիան կարող է տարածաշրջանում գերտերություն դառնալ» խմբագրական հոդվածում ասված էր. «Հիմնական ներուժը, որը կարող է Թուրքիային գերտերություն դարձնել, Թյուրքեստանն է: Թուրքերեն խոսող և թյուրքական ռասայից սերող

⁴⁷ Ավելի հանգամանալից տես. Ա. Ավագյան, Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920-1971թթ.), Եր., 2011, էջ 234-240.

⁴⁸ Ա. Ավագյան, «Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994թթ.», Հայկական քննակ, # 3 /49/, 2006, էջ 49:

⁴⁹ «Ülkücü Komando Kampları. AP Hukümetinin 1970’te Hazırlattığı MHP Raporu”, İstanbul, 1997, s. 27.

թյուրքեստանցիները, անկասկած, իրենց համարում են Թուրքիային շատ հարազատ»:⁵⁰

Ուստի, դեռևս մինչև ԽՍՀՄ կազմալուծումը, ԼՂ-ում հայ-ադրբեջանական առաջին բախումներից հետո, Թուրքիայի կառավարող շրջանակները ազգայնամոլական ուժերի միջոցով սկսեցին նախագծել Ադրբեջանին օգնություն ցուցաբերելու և Ադրբեջանի նկատմամբ իր ազդեցության լծակները ուժեղացնելու հնարավոր ուղիները: Քանի որ պաշտոնապես Թուրքիան չէր կարող գործել դեռևս դե յուրե ԽՍՀՄ կազմում գտնվող Ադրբեջանում, այդ պատճառով մի շարք ծրագրեր իրականացվում էին ընդհատակյա ձևով՝ Թուրքիայի ազգայնամոլական ուժերի կողմից: Այսպես, Նևրուզ Էմին, ով ԽՍՀՄ օրոք ՆԳՆ աշխատակից էր, հայ-ադրբեջանական բախումների ժամանակ կազմավորում էր ադրբեջանական միլիցիան և զբաղվում էր «Գորշ գայլերի» զինված գումարտակների ձևավորմամբ Թուրքիայից ժամանած ազգայնամոլների հետ: Ազգայնական Շարժում կուսակցությանը պատկանող Milliyetçi Hareket /Ազգայնական շարժում/ ամսագրի 1988թ. օգոստոսի 17-ի համարում Վաքըֆ Թուրանի կողմից գրված «Ադրբեջանի իրական հերոսները» վերլուծականում գովերգվում է Նևրուզ Հասանօղլուի /Նևրուզ Էմին/ վաստակը թուրք ազգայնամոլներից «Գորշ գայլերի» ջոկատներ կազմելու աջակցության գործում:⁵¹

1991թ. դեկտեմբերի 8-ին Վիսկուլիում / Բելլովեժյան անտառ, Բելառուս/ ՌՄՖՍՀ, ՌԽՍՀ և ԲՍՍՀ ղեկավարների կողմից ստորագրվեց «Անկախ Պետությունների Համագործակցության / ԱՊՀ/ ստեղծման մասին» համաձայնագիրը, ըստ որի «ՍՍՀՄ-ը որպես միջազգային իրավունքի և աշխարհաքաղաքական իրողության սուբյեկտ դադարեց գոյություն ունենալ»⁵²:

1991թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության /ԱԽՍՀ/ Բարձրագույն Խորհրդի արտահերթ նիստում Ադրբեջանը պաշտոնապես հռչակեց իր անկախությունը՝ ընդունելով «Ադրբեջանի Հանրապետության անկախության վերականգնման մասին» հռչակագիրը: Ադրբեջանի Կենտկոմը դուրս է ելնում ԽՄԿԿ կազմից և լուծարվում, իսկ նախկին Գլխավոր

⁵⁰ “Türkiye bölgede supergüç olabilir”, Hürriyet, 23 Eylül, 1991.

⁵¹ Pekmezci N., Büyükyıldız N., Ülkücüler. Öteki devletin şehitleri, Analiz Basın Yayın, İstanbul, 1999, s.186.

⁵² Соглашение о создании Содружества Независимых Государств, 08. 12.1991 г., <http://www.cis.minsk.by/page.php?id=176>, http://www.cismission.mid.ru/ii1_4.html

քարտուղար Այազ Մուֆալիբովը դառնում է պետության նախագահ: Հիմք ընդունելով 1918թ. մայիսի 28 -ին Ադրբեջանի Ազգային խորհրդի կողմից ընդունված Անկախության և 1991թ. օգոստոսի 30 -ի հռչակագրերը՝ 1991թ. հոկտեմբերի 18 -ին, Ադրբեջանի Գերագույն խորհուրդն ընդունում է Ադրբեջանի Հանրապետության պետական անկախությունը հաստատող սահմանադրական ակտը, որի երկրորդ հոդվածի համաձայն՝ Ադրբեջանը հայտարարվում է 1918 - 20թթ. ԱԴՀ /Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետություն/ իրավահաջորդը⁵³: Այդ փաստաթղթում ամրագրված դրույթները հիմք են հանդիսանում նորանկախ Ադրբեջանի քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական ոլորտների կազմակերպման, իսկ հետագայում՝ 1995թ. նոր սահմանադրության համար:

1991թ. դեկտեմբերի 29 -ին հանրաքվեին մասնակցած ադրբեջանցիների / 95, 27 տոկոս/ 99, 58 տոկոսը քվեարկում է հոգուտ վերոնշյալ Սահմանադրական Ակտի ընդունմանը⁵⁴: Մինչ այդ, 1991թ. դեկտեմբերի 10-ին, ԼՂ-ի բնակչությունը հանրաքվեով ամրագրել էր անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը, և նախկին Ադրբեջանական ԽՍՀ տարածքում ձեւավորվել էին երկու իրավահավասար պետական կազմավորումներ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը եւ Ադրբեջանի Հանրապետությունը:

Ի դեպ, նույն թվականի դեռևս մարտ ամսին, ԽՍՀՄ տարածքում (անցկացված հանրաքվեին չմասնակցեցին Հայաստանը, Վրաստանը, Մոլդավիան, Մերձբալթյան հանրապետությունները) տեղի ունեցած հանրաքվեի⁵⁵ արդյունքների համաձայն՝ Ադրբեջանի ՍՍՀ-ի բնակչության 93, 3 տոկոսը քվեարկել էր ԽՍՀՄ – ը պահպանելուն կողմ ⁵⁶:

Սկսվում է, որպես միջազգային սուբյեկտ, նորանկախ Ադրբեջանի Հանրապետության ճանաչման գործընթացը: Զուգահեռաբար ընթանում էր նաև

⁵³ Конституционный акт о восстановлении государственной независимости Азербайджана, 18.10.1991 г., http://files.preslib.az/projects/republic/ru/azr4_2.pdf

⁵⁴ Central Election Commission of the Republic of Azerbaijan, Elections and Referendums, 1991. <http://www.cec.gov.az/en/common/election-referendum/1991.htm>

⁵⁵ Հարկ է նշել, որ Լեռնային Ղարաբաղում հանրաքվեն կայացել էր ավելի վաղ՝ 1991թ. դեկտեմբեր 10-ին, և ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը՝ 99,89% արտահայտվել էր Ադրբեջանից ամբողջովին անկախանալու օգտին:

⁵⁶ Central Election Commission of the Republic of Azerbaijan, Elections and Referendums, 1991. <http://www.cec.gov.az/en/common/election-referendum/1991.htm>

միջազգային կազմակերպություններում նորանկախ Ադրբեջանի Հանրապետության անդամակցության գործընթացը: Ադրբեջանը նախ անդամակցում է Իսլամական Կոնֆերանս Կազմակերպությանը (ԻԿԿ, 1991թ. դեկտեմբեր), որի անդամ են 57 իսլամական պետություն: Հարկ է նշել, որ Ադրբեջանը նաև առաջինն էր նախկին ԽՍՀՄ մահմեդական հանրապետություններից, որը անդամակցության համար հայտ ներկայացրեց ԻԿԿ-ին⁵⁷:

1991թ. նոյեմբերի 9-ին ՄԱԿ - ի անդամ պետություններից առաջինը Թուրքիան է ճանաչում Ադրբեջանի Հանրապետության անկախությունը⁵⁸: 1992թ. հունվարի 14-ի արձանագրությամբ վերականգնվում են դիվանագիտական հարաբերությունները երկու պետությունների միջև:⁵⁹ Այսպիսով, Թուրքիան Հարավային Կովկասում ստեղծված նոր համակարգը համակերպում է 1921թ. իրավապայմանագրային հենքին:

1992թ. հունվարի 24-ին Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ստորագրվում է համաձայնագիր «Բարեկամության, համագործակցության և բարիդրացիական հարաբերությունների մասին», որի հիմքում 1921թ. Կարսի պայմանագիրն էր⁶⁰:

1992թ. հունվարին բացվում է Թուրքիայի դեսպանատունը Ադրբեջանում, իսկ նույն թվականի օգոստոսին՝ Ադրբեջանի դեսպանատունը Անկարայում: Ավելի ուշ՝ 1993թ. հունվարին Ստամբուլում հիմնադրվում է Ադրբեջանի Գլխավոր հյուպատոսությունը:

Երկու պետությունների հարաբերությունների հետագա զարգացմանը նպաստեցին փոխադարձ պաշտոնական և գործնական այցերը: 1992թ. մայիսի 1-3-ը Թուրքիայի նախագահ Թ. Օզալը առաջին անգամ պաշտոնական այց կատարեց նորանկախ Ադրբեջան, որի շրջանակներում ստորագրվեց հետագա

⁵⁷ Управление делами Президента Азербайджанской Республики, Президентская Библиотека, Внешняя Политика Азербайджана, <http://files.preslib.az/projects/azerbaijan/rus/gl8.pdf>

⁵⁸ Türkiye Cumhuriyeti Dışişleri Bakanlığı, <http://www.mfa.gov.tr/relations-between-turkey-and-azerbaijan.en.mfa>

⁵⁹ Azərbaycan Respublikası Xarici İşlər Nazirliyi, <http://www.mfa.gov.az/files/file/Azerbaijan%20-%20Turkey%20relations.pdf>

⁶⁰ Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Dostluk, İşbirliğine İyi Komşuluk Anlaşmasının Onaylanmasının Uygun Bulunduğuna Dair Kanun, Ocak 24, 1992, <http://www.tbmm.gov.tr/sirasayi/donem23/yil01/ss645.pdf>

համագործակցության հիմնական սկզբունքները և զարգացման հնարավորությունները սահմանագծող «Համատեղ հայտարարությունը»:⁶¹

Այսպես, սկիզբ է դրվում Թուրքիա-Ադրբեջան պաշտոնական համագործակցությանը:

Նախկին ԽՍՀՄ-ի տարածքում տեղի ունեցող զարգացումները նպաստեցին Թուրքիայում պանթուրքական⁶² տրամադրությունների առավել ընդգծված աճին՝ թուրքական հասարակությունում խորացնելով թյուրքալեզու հանրապետությունների միջոցով գերտերության վերածվելու գաղափարները: Հաշվի առնելով, որ այս ծրագիրն ընդհանուր գծերով մշակվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կառավարման օրոք /1908-1918թթ./ Ջիա Գյոքալփի ղեկավարած մի խումբ պանթուրքիստների կողմից, այն ստացավ նեո-պանթուրքիզմ անվանումը: Փաստացիորեն, 1990 թվականից մինչև 1990-ական թթ. վերջը Ադրբեջանի և Միջին Ասիայի թյուրքալեզու հանրապետությունների հետ Թուրքիայի արտաքին քաղաքականությունում նկատելի էին նեո-պանթուրքական նկրտումներ:

Այդ իսկ պատճառով, ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի՝ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում գերտերություն դառնալու ձգտման իրագործման համար անհրաժեշտ էր ընդլայնել քաղաքական ազդեցությունը թիրախային պետություններում: Ուստի, Թուրքիան սկսում է տարբեր միջոցներով ազդել նախ Ադրբեջանի, ապա Կենտրոնական Ասիայի թյուրքախոս պետությունների վրա: Օգտագործելով Ադրբեջանի բնակչության մեծ մասամբ թյուրքական ծագումը, լեզվական, մշակութային մի շարք ընդհանրությունները՝ Թուրքիան, պետական մակարդակով հարաբերությունների ամրապնդման հետ մեկտեղ, Ադրբեջանի վրա անուղղակիորեն ազդելու և վերջինին դեպի իրեն կողմնորոշելու մարտավարություն է ընտրում ազգայնական, մասնավորապես պանթուրքական գաղափարախոսության, ինչպես նաև սուննի իսլամի և նուրջուական շարժման ներդրումը Ադրբեջանում: Դրան նպաստել է նաև Արևմուտքի կողմից մշակված և սատարվող զարգացման «թուրքական

⁶¹ “Heydar Aliyev Heritage” International Online Library, <http://lib.aliyev-heritage.org/ru/4610295.html>

⁶² Պանթուրքիզմը քաղաքական գաղափարախոսություն է, որը ենթադրում է թյուրքական բոլոր ժողովուրդների միավորում մեկ միասնական պետության կազմում՝ հենվելով մշակութային, էթնիկ և լեզվական ընդհանրությունների վրա: Ստեղծվել է 19-րդ դարի երկրորդ կեսին: Տես՝ Зареванд, “Турция и Пантүранизм”, Париж, 1930.

մոդելը», որը 1990-ական թթ. սկզբներին օգտագործվում էր որպես հակակշիռ Իրանից իսլամական արմատականության տարածման դեմ: 1990-ական թթ. սկզբին Թուրքիայի հասարակական կարծիքում պանթուրանական զարթոնքի և ոգևորության պայմաններում՝ Ադրբեջանի անկախացման առաջին տարիներից ի վեր, թուրք ազգայնականները և կրոնական կազմակերպությունները լայն գործունեություն ծավալեցին Ադրբեջանում: Ստեղծվում են մի շարք թուրք ազգայնական և իսլամական ենթակառույցներ, Ա. Էլչիբեյի նախագահության օրոք թուրքերենը հռչակվում է Ադրբեջանի պետական լեզուն, ակտիվորեն կիրառվում է «ազերի թուրք» եզրույթը՝ շեշտելու համար նույն ազգային պատկանելության գործոնը: Հ. Ալիևի օրոք «Մեկ ազգերկու պետություն» կարգախոսը դառնում է Ադրբեջան-Թուրքիա երկկողմ հարաբերությունների ուղղորդող սկզբունքը: Միևնույն ժամանակ, Թուրքիայում օգտագործվում է «ազգայնական» գործոնը՝ թուրք ժողովրդի շրջանում Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի թյուրքախոս ժողովուրդների նկատմամբ ազգակցային-բարեկամական զգացմունքներ առաջացնելու նպատակով: Ավելի ուշ՝ 2000-ական թթ. զուգահեռաբար շրջանառվում է նաև «իսլամական» գործոնը՝ մահմեդական աշխարհում «իսլամական համերաշխության» սկզբունքի համատեքստում Թուրքիայի տարածաշրջանային դիրքի ամրապնդման և քաղաքական հեղինակության աճի նպատակով: Ուստի, տվյալ դեպքում «ազգայնական» և «իսլամական» գործոնների կիրառումը կարելի է դիտել քաղաքագիտության մեջ հայտնի եզրույթի՝ «փափուկ ուժի» /soft power/ համատեքստում:⁶³ Հարկ է նշել սակայն, որ Թուրքիայի քաղաքականության տեսանկյունից այդ երկու՝ «ազգայնական» և «իսլամական» գործոնները միմյանցից խիստ տարանջատելը կամ, առավել ևս, հակադրելը ճիշտ չէ, քանի որ շատ դեպքերում դրանք կիրառվել են զուգահեռաբար կամ նույնիսկ համատեղ:

Թյուրքական ժողովուրդների հետ մերձեցման գործընթացը խթանելու համար 1990-ական թթ. սկզբին քննարկվում էր անգամ «Թյուրքական աշխարհի

⁶³ Առաջին անգամ օգտագործել է Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջոզեֆ Նայը 1990թ.հրատարակված “Bound to Lead: The Changing Nature of American Power” գրքում, ապա կատարելագործել այդ հասկացությունն իր “Soft Power: The Means to Success in World Politics”/ 2004թ./ աշխատությունում: «Փափուկ ուժը» կոդմի կարողությունն է՝ իրեն ցանկալի արդյունքներ արձանագրել մյուս կողմի կամավոր մասնակցությամբ և հավանությամբ: Դրան հակադրվում է «կոշտ ուժ» տերմինը, որը նշանակում է արդյունքների ձեռքբերում՝ բռնությամբ և հարկադրանքով:

նախարարության» և «Թյուրքական աշխարհի ընդհանուր շուկայի» ստեղծումը, որը, սակայն, մնաց չիրագործված:⁶⁴ Դա պայմանավորված էր հիմնականում Թուրքիայի տնտեսական ռեսուրսների սահմանափակության և ՌԴ-ից Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետությունների տնտեսական կախվածության զուգորդմամբ:

Թուրքիայի տարածաշրջանային գերակայությանը նպաստում էր նաև Արևմուտքը, որը, զգուշանալով Իրանի հակաարևմտյան, իսլամական ֆունդամենտալական ազդեցության ծավալումից, աջակցում էր իր ռազմավարական դաշնակից, ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային: ԽՍՀՄ փլուզումից հետո, Ռուսաստանը, ունենալով բազմաթիվ ներքին խնդիրներ, ավելի շատ կարևորություն էր տալիս երկրում քաղաքական կայունության ապահովմանը և չէր դրսևորում անհրաժեշտ քաղաքական կամք տարածաշրջանում իր ազդեցությունը պահպանելու համար:

Օգտագործելով տվյալ հանգամանքը, Արևմուտքը, ԱՄՆ-ի գլխավորությամբ սկսում է դիրքերն ամրապնդել ռազմավարական նշանակության այդ տարածքում: Ինչպես գրել է Զ. Բեզգինսկին «Շախմատային մեծ խաղատախտակ» գրքում՝ «Անկախ Ադրբեջանը կարող է դառնալ միջանցք Արևմուտքի համար դեպի էներգետիկ ռեսուրսներով հարուստ Կասպիականի ավազան և Միջին Ասիա Ամերիկայի կողմից հզորագույն աշխարհաքաղաքական աջակցության արժանի պետություններն են Ադրբեջանը, Ուզբեկստանը և Ուկրաինան. այս երեքը աշխարհաքաղաքական կենտրոններ են»:⁶⁵

1990-ական թթ. սկզբին Արևմուտքը ձգտում է իր ազդեցությունը հաստատել Ադրբեջանում և Միջին Ասիայի հանրապետություններում՝ վերջիններիս հետ ազգակցական, լեզվական, կրոնական, պատմամշակութային կապեր ունեցող Թուրքիայի միջնորդությամբ: Այդ նպատակով Արևմուտքում, մասնավորապես ԱՄՆ-ում մշակվում և 1990-ականներին առաջադրվում է Ադրբեջանում և Միջին Ասիայի տարածաշրջանի երկրներում պետական կարգն ըստ «թուրքական մոդելի» կառուցելու քաղաքականությունը: Այս նախագծի իրագործման պարագայում Թուրքիան՝ որպես մահմեդական ազգաբնակչություն ունեցող և, միաժամանակ արևմտյան արժեքներ ու տրամադրություններ ներկայացնող աշխարհիկ երկրի մոդել, ենթադրաբար պետք է

⁶⁴ И. Добаев, “Из истории пантюркизма: национализм против веры”, <http://evrazia.org/article/1733>

⁶⁵ Zbigniew Brzezinski, “The Grand Chessboard: American Primacy And Its Geostrategic Imperatives”, 1998, p.47.

ստանար տարածաշրջանային տերության կարգավիճակ, այն է՝ քաղաքական և տնտեսական առաջնորդ ու առաջատար պետություն նկատվեր տարածաշրջանում.⁶⁶

«Թուրքական մոդելի» գաղափարի գործարկումը համապատասխանում էր Արևմուտքի շահերին՝ Ադրբեջանում ու միջինասիական հանրապետություններում Իրանի իսլամական հանրապետության՝ մեկ այլ տարածաշրջանային տերության կարգավիճակի հավակնորդ տերության ազդեցության տարածմանը դիմակայելու համար: Իրանի իսլամական արժեհամակարգային բնույթը ու աստվածապետական պետական կառուցվածքը, ինչպես նաև Արևմուտքի աշխարհակարգի դեմ արմատական կեցվածքը, և Իրան-Ռուսաստան հնարավոր ռազմաքաղաքական համագործակցության հեռանկարը, նպաստեցին «թուրքական մոդելի» լիարժեք աջակցությանը Արևմուտքի կողմից:⁶⁷

Այսպիսով, Ադրբեջանում ու միջինասիական հանրապետություններում «թուրքական մոդելի» իրագործմանն արդյունավետ այլընտրանք էր դիտվում Իրանի իսլամական հանրապետության (ԻԻՀ) «Խոմենիստական իսլամական հեղափոխության արտահանման ուղղվ համաշխարհային մեծ իսլամական հանրույթի (ումմա) ստեղծմանը Իրանի հովանու ներքո»⁶⁸ գաղափարախոսությանը, ինչը նշանակում է իսլամական քաղաքակրթության ինստիտուցիոնալ կազմավորում:

1992թ. ՄԱԿ-ում ԻԻՀ ներկայացուցիչ Քամալ Խարազին հայտարարեց, թե վերոհիշյալ տարածաշրջանի ժողովուրդներն իրավասու են ընտրելու իրենց ուղին, և Իրանը նրանց չի պարտադրի իր բարեկամությունը, այնուամենայնիվ հուսով են ունենալ բարիդրացիական հարաբերություններ նրանց հետ⁶⁹: 1993թ. ԻԻՀ արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին իր հերթին նշեց, որ տարածաշրջանում Իրանն իր քաղաքականությունը կառուցում է Ռուսաստանի հետ շահերի բախումից խուսափելու նկատառումներով⁷⁰: Այդուհանդերձ, Իրանն աշխատել է իրագործել

⁶⁶ М.А. Астахов, "Турецкая модель развития" и причины ее несостоятельности для Постсоветских стран Прикаспийского региона: (1992–1993 годы)", Известия Саратовского университета, Сер. История. Международные отношения, Т. 11. вып. 1, 2011, с. 88.

⁶⁷ Idris Bal, "The Turkish Model and the Turkic Republics", Journal of International Affairs, September-November 1998, Vol.3, # 3, www.sam.gov.tr

⁶⁸ Сажин В.И. К вопросу о цивилизациях, исламе и войнах / В.И. Сажин // Ближний Восток и современность. Сборник статей (выпуск пятый) / отв.ред. Исаев В.А., Филоник А.О. – М.: ИИИиБВ, 1998. – С.212

⁶⁹ Menashri L. Iran and Central Asia // Central Asia meets the Middle East. L., 1998. P. 83.

⁷⁰ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 80:

հեղափոխության արտահանման գաղափարը, որի համար բարենպաստ պայմաններ եղել են առավելապես շիականություն դավանող Ադրբեջանում: Մասնավորապես, Թեհրանը համակողմանի աջակցություն է ցուցաբերել Ադրբեջանի իսլամական կուսակցությանը, ինչի հետևանքով ԼՂ-ի հակամարտության ռազմական փուլի ավարտից հետո, երբ իսլամական գաղափարների օգտագործման անհրաժեշտությունը նվազեց, 1995-1998թ.թ. երկրում արմատական իսլամիզմի հաստատման մեղադրանքով արգելվեցին ու փակվեցին բազմաթիվ կազմակերպություններ ու կենտրոններ: Ստեղծված իրավիճակում իր ազդեցության տարածման համար հիմնավոր բազա ունենալու նպատակով, Թեհրանն առաջնային համարեց մշակութային գերակայության հաստատումը, որդեգրելով տարածաշրջանի ժողովուրդների ընդհանուր մշակութային վերածնունդի անհրաժեշտությունը: Գլխավորապես շեշտադրվում էր այն միտքը, թե իրական անկախություն նվաճելու համար անհրաժեշտ է ապրել մշակութային վերածնունդ: Այդ նպատակով ստեղծվեցին տարաբնույթ մշակութային ընկերություններ ու կազմակերպություններ, որոնց թվում նաև Ադրբեջանում ու Իրանում գործող Նիզամիի անվան կազմակերպությունը:

Միաժամանակ, ԽՍՀՄ կազմալուծմամբ և Ղարաբաղյան հակամարտության պայմաններում «թուրքական մոդելի» գործարկմամբ ստեղծված իրավիճակը մի կողմից հնարավորություն ընձեռեց Իրանին վերականգնել իր նախկին ներկայությունը հատկապես Հվ. Կովկասում, մյուս կողմից սպառնալիքներ առաջացրեց սեփական անվտանգության համար: Նորանկախ Ադրբեջանի կողմից «Հարավային Ադրբեջան» անվանվող իրանական տարածքի նկատմամբ հավակնությունների հիմքով «Մեծ Ադրբեջան» նախագծի վերակենդանացումը, բացի արտաքին սպառնալիք լինելուց, նաև Իրանի ներքաղաքական դրության պոտենցիալ ապակայունացման գործոն էր, հաշվի առնելով երկրի հյուսիսային շրջաններում բնակվող մոտ 20 մլն «իրանական ադրբեջանցիների» կողմից անջատողականության վտանգը: Եվ եթե Ադրբեջանում Իրանն աջակցում է հեղափոխության արտահանման գաղափարախոսությունը կրող ուժերին, ապա Ադրբեջանն իր հերթին սատարում է Իրանում գործող անջատողական կազմակերպություններին, մասնավորապես, «Հարավային Ադրբեջանի ազատագրության ազգային կոմիտեին»: 1995թ. Ադրբեջանը, թեև Արևմուտքի

ճնշմամբ, հրաժարվեց Բաքու-Ջեյհան նավթամուղի շահագործման մասին միջազգային ընկերությունների հետ կնքած նավթային գործարքին Իրանին ներգրավվելու ծրագրից: Նույն՝ տարածաշրջանում Իրանի քաղաքական մեկուսացման նպատակով, նաև մերժվեցին ԼՂՀ և վրաց-աբխազական հակամարտությունների կարգավորման հարցերում Իրանի միջնորդական առաքելության վերաբերյալ առաջարկությունները: Այս պայմաններում, Իրանի քաղաքական ու վերլուծական հանրության մեջ ավելի հիմնավորվեց համաթուրանականությունը որպես ազգային սպառնալիքի⁷¹ ընկալումը և, հետևաբար, այն չեզոքացնելու քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, տարածաշրջանային գերակայության հաստատելու համար ռազմավարական դիրքի պատճառով առանցքային նշանակություն ներկայացնող Ադրբեջանի շուրջ, 1990-ական թվականներին միմյանց հետ մրցակցում էին Արևմուտք - Թուրքիա և Ռուսաստան - Իրան ռազմաքաղաքական ուժերը:

1990-ական թթ. երկրորդ կեսից հետո, Ադրբեջանում Թուրքիայի կողմից «ազգայնական գործոնի» կիրառումը և դրանով պայմանավորված թուրք ազգայնականների գործունեությունը տեղատվություն է ապրում, սակայն Թուրքիա-Ադրբեջան պաշտոնական հարաբերություններում «ազգայնական հոետորաբանությունը» շարունակում է պահպանվել: Դա է վկայում մինչև օրս պաշտոնական մակարդակում հնչող «Մեկ ազգ-երկու պետություն», «եղբայր ժողովուրդներ» և այդօրինակ նման այլ արտահայտությունների կիրառումը տարբեր առիթներով:

1.2 Թուրքիայի հարաբերությունները Ադրբեջանի հետ Աբուլֆազ Էլչիբեյի կառավարման օրոք

1991-94թթ. իր ազդեցությունն Ադրբեջանում ամրապնդելուն ուղղված Թուրքիայի քաղաքականությունը համընկավ Ադրբեջանի քաղաքական էլիտայի ցանկության հետ, որը մեծապես պայմանավորված էր Թուրքիայի օգնությամբ և անմիջական ներգրավվածությամբ ԼՂ հակամարտությունն իր օգտին լուծելու տեսլականով: 1992-

⁷¹ Аббас Малеки, “Иран и Туран: К вопросу об отношениях Ирана с государствами центральной Азии и Закавказья”, http://www.ca-c.org/journal/2001/journal_rus/cac-05/11.malru.shtml

94թթ. Թուրքիայի և Ադրբեջանի հարաբերություններում, որպես որոշիչ գործոն, հանդես են գալիս Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի վարած «պանթուրանական» քաղաքական նկրտումները, որոնք պայմանավորեցին տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը:

Այս փուլում, Ադրբեջանը, ինչպես և այլ խորհրդային հանրապետությունները, 1989-1992թթ. աշխարհաքաղաքական կազմաձևման փոփոխության պայմաններում կանգնած էր ուժային կենտրոնների միջև ընտրանքի առաջ: Ընտրանքի առանձնահատկությունը, սակայն, Լեռնային Ղարաբաղի ռազմական հակամարտության պայմաններում ուժային կենտրոնների կողմից իրենց ազդեցությունը հաստատելուն միտված պայքարն էր Ադրբեջանում: Ներքաղաքական ասպարեզում դիմակայող կողմերն էին խորհրդային քաղաքական-կուսակցական վերնախավն՝ ի դեմս Ս. Վեզիրովի, Ա. Մութալիբովի ու նորաստեղծ Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի(ԱԺԾ-ի) ազգայնական-թուրքամետ վերնախավը՝ ի դեմս Ա. Էլչիբեյի: Ոչ բացահայտորեն, սակայն, իշխանության համար մղվող պայքարի երրորդ և առավել ազդեցիկ կողմն էր, այսպես կոչված «նախիջևանյան» կլանը՝ ադրբեջանական ՊԱԿ-ի(KGB) նախկին նախագահ, ԽՍՀՄ կառավարության նախկին առաջին փոխնախագահ և Քաղբյուրոյի անդամ Հ. Ալիևի գլխավորությամբ:

Նշյալ երեք ուժերից իբրև Թուրքիայի շահերի արտահայտիչ ու իրականացմանը նպաստող «գործոն» նկատվող առաջին քաղաքական կազմակերպությունը համարվում էր Ադրբեջանի Ժողովրդական Ճակատը՝ Ա.Էլչիբեյի առաջնորդությամբ: Բնականաբար, ազգայնական-թուրքամետ քաղաքական ուժն Ադրբեջանում կարող էր «իր դերն» արդյունավետորեն կատարել՝ լինելով իշխանության ղեկին: Իրավիճակի նման փոփոխությունը ձեռնառու էր նաև Արևմուտքին, քանի որ 1991թ. անկախության հռչակումից հետո Ադրբեջանը ղեկավարում էր խորհրդային իշխանական-կուսակցական վերնախավը՝ Մութալիբովի առաջնորդությամբ: Հարկ է նշել, որ ադրբեջանական հասարակությունում այս ուժի դիրքերը բավականին թույլ էին, իսկ նորանշանակ ղեկավարը, բնականաբար, լիովին չէր կարող վերահսկել իրավիճակը պետական կառույցներում:

Ադրբեջանում վիճակն անկայուն էր հետխորհրդային բոլոր երկրներին բնորոշ քաղաքական ու տնտեսական ճգնաժամերի պայմաններում: Ա.Մուֆալիբովի և վարչակարգի նկատմամբ անվստահության ու դժգոհության հիմնական պատճառը ղարաբաղյան ռազմաճակատում տեղի ունեցող ադրբեջանական ուժերի համար անբարենպաստ իրադարձություններն էին: Հայտնի է, որ պատերազմական վիճակում գտնվող պետության համար ռազմաճակատում կրած հաղթանակները կարող են ամրապնդել, իսկ պարտությունները՝ հիմնովին թուլացնել երկրի իշխանությունը: Ավելին, պատերազմական գործողությունները կարող են վճռորոշ դեր խաղալ հասարակարգային փոփոխությունների անցումային փուլում գտնվող երկրի ոչ այնքան իշխանության, որքան քաղաքական ուղեգծի ու զարգացման վեկտորի փոփոխության հարցում:

Այս օրինաչափության համատեքստում, ստորև դիտարկենք 1992թ. տեղի ունեցած «Խոջալուի դեպքերը», որի արդյունքում Ադրբեջանի խորհրդային քաղաքական-կուսակցական վերնախավը հեռացվեց իշխանությունից՝ կառավարումը զիջելով ազգայնական-թուրքամետ քաղաքական ուժին:

1992թ. փետրվարի 25-ին, նախապես զգուշացնելով մոտալուտ հարձակման մասին և կոչ անելով դուրս բերել խաղաղ բնակչությանը տրամադրված միջանցքով դեպի Ադղամ⁷², հայկական զինուժը սկսում է Խոջալուի գրավման գործողությունը: Հաջորդ իսկ օրն Ադրբեջանում քննարկման գլխավոր առարկան «հայերի կողմից բարբարոսությունների ու դաժան սպանդի» և 800-1000 զոհերի պատասխանատուների մասին հարցն էր: ԱԺԾ-ն անմիջապես պահանջում է Ադրբեջանի Բարձրագույն Խորհրդի արտահերթ նիստ, որի ժամանակ լրագրող Չ. Մուստաֆանը ցուցադրում է Խոջալուի «կոտորածի» կադրերը: Այնուհետև, դա ցուցադրվում է Ադրբեջանի, ապա միջազգային տարբեր հեռուստաալիքներով՝ բողոքի ալիք առաջացնելով նախագահի դեմ: Մարտի 6-ին Մուֆալիբովը ստիպված է լինում հրաժարական տալ:

Եթե մինչև Խոջալուի դեպքերը, Թուրքիան փորձում էր որոշ հավասարակշռություն պահպանել, բանակցություններ վարելով նաև Հայաստանի

⁷² «Бакинский рабочий», 3 марта, 1992.

հետ, առաջարկելով ԼՂ-ի հիմնահարցում և Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում զիջումների դիմաց հյուպատոսական հարաբերություններ հաստատել և ներկայացնելով համագործակցության առավելությունները, ապա Խոջալուից հետո Թուրքիան բացահայտ որդեգրում է միանշանակորեն ադրբեջանամետ դիրքորոշում: 1992թ. մայիսի 2-ին Բաքվում Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Յադուբ Մամեդովի հետ հանդիպումից հետո ԹՀ վարչապետ Սուլեյման Դեմիրելը հայտարարում է, որ Թուրքիան «բոլոր պայմաններում ազերի եղբայրների կողքին է և կշարունակի կողքին լինել»⁷³: Շարունակելով իր խոսքը Դեմիրելը նշում է. «Մենք տեղյակ ենք Ադրբեջանի խնդիրներից: Ղարաբաղում զոհված մեր եղբայրների հոգիների համար Աստծուց հանգստություն ենք խնդրում ու աղոթում: Ձեռքներիցս եկածն անում ենք, որպեսզի աշխարհին լսեցնենք Ադրբեջանի ժողովրդի արդար խնդրի մասին»⁷⁴:

1992թ. հունիսին, Ադրբեջանի ժողովրդական Ճակատի իշխանության գալուց անմիջապես հետո, պաշտոնական Բաքվի քաղաքական ուղեգիծը կտրուկ փոխվում է: Թուրքիան հայտարարվում է հիմնական ռազմավարական դաշնակից, իսկ թուրք ու ադրբեջանցի ժողովուրդները մեկ ազգություն: «Մեկ ազգ-երկու պետություն» կարգախոսը դառնում է Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմնական ուղեգիծը:⁷⁵ Ինչպես ներկայացնում է Ադրբեջանում Թուրքիայի դեսպանատան նախկին մամլո խոսնակ Թուրգուբ Էրը, «Էլչիբեյը երբեք ոչինչ չի ստորագրում առանց Թուրքիայի հետ նախապես համաձայնեցնելու» և «Թուրքիային միշտ ընդգրկում է բոլոր միջազգային նշանակության հարցերում»⁷⁶:

Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը սկսում է վարել բացահայտ թուրքամետ և արևմտամետ քաղաքականություն՝ սառեցնելով հարաբերությունները Իրանի և Ռուսաստանի հետ: «Հարավային Ադրբեջանը» իրանական տիրապետությունից ազատագրելու և Ադրբեջանին «վերամիավորելու» անհրաժեշտության մասին պաշտոնական մակարդակով արված բազմաթիվ հայտարարությունները լարեցին հարաբերությունները Իրանի հետ: Ինչ վերաբերում էր

⁷³ Hulusi Turgut, Եզվ. աշխ., էջ 108.

⁷⁴ Նույն տեղում, էջ 80:

⁷⁵ С.И. Чернявский, “Новый путь Азербайджана”, Москва, 2002г, стр 96, 227.

⁷⁶ T. Er, “AzadlıktanTiranlığa”, Ankara, 2010, s. 48.

Ռուսաստանին, ապա ԱԺԾ-ն ձգտում էր խզել վերջինիս հետ ամեն կարգի՝ քաղաքական, ռազմական և անգամ տնտեսական կապերը: 1992թ. հոկտեմբեր 12-ին Ադրբեջանի Միլլի Մեջլիսը մերժում է վավերացնել Ադրբեջանի անդամակցությունը ԱՊՀ-ին, իսկ երկրի նախագահը հաստատում է, որ Ադրբեջանը չի պատրաստվում անդամակցել այդ կառույցին վերջինիս անհեռանկար լինելու պատճառով:⁷⁷ Այսպիսով, բարենպաստ պայմաններ են ստեղծվում Թուրքիայի համար իր գերակշիռ ազդեցությունը Ադրբեջանում վերահաստատելու համար: Եվ առաջին հերթին Թուրքիան սկսում է հնարավորին քաղաքական ու ռազմական օժանդակություն ցուցաբերել Ադրբեջանին՝ Ղարաբաղյան հակամարտությունը հոգուտ վերջինի լուծելու նպատակով:

1991-92 թթ. Թուրքիան իր ռազմատեխնիկական օգնությունն Ադրբեջանին հասցնում էր Նախիջևանի տարածքում իրագործվող գաղտնի գործողությունների միջոցով: Թուրքական բանակի մոտ 150 բարձրաստիճան սպա, այդ թվում 10 գեներալներ, 1992թ. մասնակցել են ռազմական գործողությունների մշակմանը և ադրբեջանական բանակի կադրային վերապատրաստմանը: 1992թ. մարտ-ապրիլ ամիսներին ՆԳՆ բազայում թուրք զինվորականների կողմից պատրաստվել են 450 ադրբեջանցի կամավորներ, որոնք կազմել են Էթիբար Մամեդովի ենթակայության ներքո գտնվող այսպես կոչված «Համալսարանական գումարտակը»⁷⁸: Վերջինս կազմավորվել էր բացառապես Բաքվի համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողներից: Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյի ռազմական խորհրդական է նշանակվում Թուրքիայի բանակի գեներալ Յաշար Դեմիրբուլաքը⁷⁹, իսկ 1992թ. օգոստոսին Բաքվում ռազմական կցորդ գեներալ-մայոր Խալիլ Քալայչին անձամբ համակարգում էր Լաչինի միջանցքը վերացնելու նպատակով ադրբեջանական զորքերի հակահարձակողական գործողության մշակումը:⁸⁰

ԼՂ-ում տեղի ունեցող մարտերում իր մասնակցությունը քղարկելու համար՝ Ադրբեջանին աջակցելու աշխատանքներում Թուրքիան ներգրավում է նաև Ալ.

⁷⁷ С.И. Чернявский, “Новый путь Азербайджана”, Москва, 2002г, стр. 298-302.

⁷⁸ T.Goltz, “Azerbaijan Diary”, Armonk, New York, 1998, p. 150.

⁷⁹ Hayk Demoyan, “Karabagh Drama:Hidden Acts”, Yerevan, 2003, p. 56.

⁸⁰ Г. Демоян, “Турция и Карабахский конфликт в конце 20-го в начале 21-го века: историко-сравнительный анализ”, Ереван, 2006, с.116.

Թյուրքեշի «Ազգայնական շարժում» (ԱՇԿ) կուսակցությանը: Այդ նպատակով Թյուրքեշը մի քանի հանդիպումներ է ունենում Ա. Էլչիբեյի հետ: Արդյունքում որոշվում է նախագահին հավատարիմ 1500-2000 կազմով ռազմական հատուկ ստորաբաժանում ստեղծել, որը հետագայում պետք է դառնար ԱԺԸ-ի իշխանության անվտանգության երաշխավոր պետական կանոնավոր բանակի միջուկը:⁸¹ Այդ նպատակով «Ազգայնական օջախներ» կազմակերպության (ԱՕԿ) նախկին ղեկավար Ի. Օզջանը և ԱՕԿ ղեկավար Աթիլա Քայան, Թուրքիայի հետախուզական ծառայության նախկին գործակալ Նևրուզ Հասանօղլուի օգնությամբ և Թյուրքեշի գլխավորությամբ՝ Ադրբեջանում ստեղծեցին «Գորշ գայլերի» ճամբարը, որը Թյուրքեշի առաջարկությամբ անվանվեց «Rüzgâr» (քամի)⁸²: 1996թ. Սուսուրլուքի աղմկահարույց դեպքից հետո պարզվեց, որ այդ ճամբարի ստեղծման նախագծի իրական հեղինակը եղել է ոչ թե Թյուրքեշը, այլ Թուրքիայի Ազգային Հետախուզության Կազմակերպությունը՝ Milli Istihbarat Teşkilatı (MIT)–ը, և այդ կառույցին սերտորեն առնչվում էր այդ ժամանակ իշխանության ղեկին գտնվող «Ճշմարիտ ուղի» կուսակցությունը: Բացահայտվեց նաև Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերի հիմնադրամից մեծ գումարի փոխանցման փաստը ԱՇԿ-ին՝ Ադրբեջանում որոշակի գործունեություն ծավալելու նպատակով: «Rüzgâr» ճամբարում, բացի զինավարժություններից, դասավանդում էին նաև դիվերսիայի տակտիկա, որն օգտագործվում էր ինչպես Արցախում հայերի դեմ, այնպես էլ Ղարաբաղից ադրբեջանցիների արտագաղթը խափանելու համար:⁸³ Հայտնի է Հայաստանի դեմ կազմակերպված դիվերսիոն ակտը՝ Ա. Քայայի, Յ. Արփաջըքի և նրանց զինակցի մասնակությամբ, որոնք, հատելով Հայաստանի սահմանը, պայթեցրել էին Հայաստանի երկաթուղու մի հատված:⁸⁴

Այնուամենայնիվ, Թուրքիայի աջակցությունը չնպաստեց ադրբեջանական բանակի մարտունակությանը, որը շարունակում էր պարտություն կրել Ղարաբաղի ինքնապաշտպանության բանակի կողմից: Այդ պայմաններում, Թուրքիան սկսում է

⁸¹ Necdet Pekmezci, Nurşen Büyükyıldız, “Ülkücüler. Ötekidevletin şehitleri”, 1999, s. 186.

⁸² Ա. Ավագյան, «Թուրք ազգայնամուլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994թթ.», Հայկական քանակ, # 3 /49/, 2006, էջ 53:

⁸³ N.Pekmezci, N. Büyükyıldız, “Ülkücüler.Ötekidevletin şehitleri.”, 1999, s.187.

⁸⁴ Տես՝ նույն տեղում՝ էջ 188:

ուժեղացնել Հայաստանի վրա ճնշումը, մասնավորապես գործադրվում է տնտեսական շրջափակման մեխանիզմը, այնուհետև շրջանառվում է Հայաստանի դեմ ռազմական գործողության սպառնալիքը⁸⁵։ Առաջին անգամ դա եղավ 1992թ. մայիսին, Շուշի քաղաքի ազատագրումից հետո, Թուրքիայի կառավարության ու Մեջլիսի նախագահի կողմից Հայաստանին ուղղված նախազգուշացումներով⁸⁶։ Ապա արդեն հայտարարվեց, թե Երրորդ բանակի ստորաբաժանումները, որի կազմում էին 7000 զինվորական, 1500 տանկ, 1100 հրետանի, 2500 ականանետ ու հրաձգային զենքեր և 270 կործանիչներ, ռազմական պատրաստության են բերվել Կարս-Սարիղամիշ-Իգդիր սահմանագծով և պատրաստ են մարտական գործողությունների⁸⁷։

Այդ մասին սկսեցին գրել թուրքական մամուլում, իսկ Թուրքիայի նախագահ Թ. Օզալը Ղրղզստան պաշտոնական այցի ժամանակ շեշտեց, որ «վերևից ու ներքևից միջանցք բացեցին ու փաստորեն այդ շրջանը կցեցին Հայաստանին։ Այլևս Ղարաբաղի խնդիր չկա, կան հայերի նկրտումները Մեծ Հայաստանի վերաբերյալ... Ինձ մի հարցրեք, թե արդյոք մենք կներխուժենք Հայաստան, թե՛ ոչ, բայց Թուրքիան իր քայլերը պետք է լավ հաշվարկի⁸⁸»։

Միջազգային հանրության, հատկապես Ռուսաստանի և ԱՄՆ-ի խիստ արձագանքները հաշվի առնելով, Թուրքիան չհամարձակվեց կատարել ռազմական միջամտություն⁸⁹, այլ սահմանափակվեց միայն Հայաստանի նկատմամբ տնտեսական շրջափակմամբ և դիվանագիտական դեմարշներով։ Միաժամանակ, Թուրքիան խրախուսեց Ադրբեջանի կողմից մարտնչող թուրք ազգայնամոլական կամավորների քանակի աճը։ Մասնավորապես, 1993թ. հուլիսի 20-ին Բաքու ժամանեց թուրք կամավորների մի մեծ խումբ, որն անմիջապես ուղարկվեց Աղդամ⁹⁰։

⁸⁵ Hürriyet, 05.03.1992

⁸⁶ Ազգ, 20.05.1992, Time, 01.06. 1992

⁸⁷ Известия, 09.05.1992

⁸⁸ Milliyet, 08.04.1993

⁸⁹ 1992թ. ԱՊՀ գլխ. հրամանատար Ե.Շապոշնիկովը ասաց, «եթե որևէ այլ կողմ ներքաշվի այստեղ, մենք կարող ենք Երրորդ համաշխարհային պատերազմի շեմին հայտնվել» (Независимаягазета, 22.05.1992, «The Financial Times», 22.05.1992), իսկ 1993թ. Սպիտակ տունը զգուշացրեց, թե «չի հանդուրժի որևէ երրորդ երկրի միջամտություն հայ-ադրբեջանական հակամարտությանը» (Ազգ, 17.04.1993)

⁹⁰ Ա. Ավագյան, «Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994թթ.», Հայկական բանակ, # 3 /49/, 2006, էջ 55:

Այսպիսով, թուրք-ադրբեջանական հարաբերությունները ԱԺԾ-ի իշխանության օրոք թեևակոխում են որակական նոր փուլ:

Արտաքին քաղաքականության ոլորտում Թուրքիայի հետ հարաբերությունների սերտացման և փաստացիորեն տարածաշրջանային քաղաքականությունում միավելտոր՝ թուրքական կողմնորոշում որդեգրած Էլչիբեյի քաղաքականությունը նպաստում է Ադրբեջանում ներքին քաղաքական լարվածության խորացմանը:

Այս ամենին զուգընթաց, ներքաղաքական իրավիճակն Ադրբեջանում շարունակում էր մնալ լարված և անկայուն: Թուրքական ուժերի կողմից ցուցաբերվող ռազմական օժանդակությունը չէր կարող էական նշանակություն ունենալ ռազմաճակատում իրավիճակի փոփոխման վրա: Աստիճանաբար սկսում է աճել իշխանափոխության նոր հավանականությունը: Մարտակերտի ու Շահումյանի շրջանում ռազմական հաջողություններ գրանցած 500-800 մարտակազմով «Գյանջայի գումարտակի» հրամանատար գնդապետ Սուրեթ Հուսեյնովի ազդեցությունը սկսեց մեծանալ երկրում: Ս. Հուսեյնովը նաև մտերիմ ու գործնական հարաբերություններ ուներ Գյանջայում ՌԴ զորամիավորման հրամանատար Շչերբակի հետ, որի հրամանատարության ներքո գտնվող ռազմադեսանտային/ԹԺԹ/ դիվիզիայի մի շարք ստորաբաժանումների մասնակցությամբ էր պայմանավորված Շահումյանի և Մարդակերտի գրավումը 1993թ.: Այսպիսով, Ս. Հուսեյնովը մարմնավորում է «ռուսամետ» ուղղությունն Ադրբեջանում:

1993թ. մարտին Քելբաջարի /Քարվաճաղ/ ազատագրումը հայկական ուժերի կողմից առիթ դարձավ Ա.Էլչիբեյի կողմից բանակում «զտումներ» կազմակերպելու համար: «Թայֆուն» գործողության շրջանակներում, առաջին հերթին, պաշտոնանկվում է ռուսաստանամետ համարվող ՊՆ նախարար Ղազիևը, իսկ Ս. Հուսեյնովը ճանաչվում «ազգի թշնամի» և, զրկվելով իր զինվորական և հերոսի կոչումներից, ձերբակալման հրաման ստանում:⁹¹ Նա հրաժարվում է կատարել զինաթափման ու Բաքու ներկայանալու հրամանը, փոխարենը, իր գումարտակով գնում է Գյանջա, որտեղ դեռևս տեղակայված էր ռուսական ստորաբաժանումը: 1993թ. մայիսի 28-ին, ժամկետից շուտ, ռուսաստանյան զորամիավորումը հեռանում է Գյանջայից՝ թողնելով

⁹¹ С.И. Чернявский, “Новый путь Азербайджана”, Москва, 2002г., стр. 110.

զենքը Ս. Հուսեյնովի զինյալներին: Առիթից օգտվելով՝ հունիսի 4-ին, կառավարական զորքերը տանկային գրոհ են կազմակերպում Հուսեյնովի շտաբի վրա, որն ավարտվում է վերջինիս հաղթանակով: Հուսեյնովի զինյալներին հաջողվում է գերի վերցնել գլխավոր դատախազ Ի. Շիրինովին, որին անմիջապես կարգադրվում է ստորագրել Ա. Էլչիբեյի ձերբակալման հրամանը: Հունիսի 10-ին, խռովարար ջոկատները շարժվում են դեպի Բաքու: Զուգահեռաբար, ԱԺԾ անդամ, Ռ. Ղազիևի զինակից Ալիաքրամ Հումբաթովի գլխավորությամբ՝ Ադրբեջանի Լենքորանի շրջանում (բնակչության մեծ մասը կազմում են իրանական ծագման թալիշները) հայտարարվում է անկախ «Թալիշ-Մուղանական հանրապետության» կազմավորման մասին:⁹² Միևնույն ժամանակ, դարաբաղյան ռազմաճակատում ադրբեջանական կողմը շարունակում է կրել է պարտություն պարտության ետևից: Երկրում ճգնաժամային դրություն է ստեղծվում, որը հաղթահարելու համար երկրի նախագահը, խորհրդարանի ղեկավարը ու վարչապետը դիմում են Նախիջևանի Մեջլիսի նախագահ Հ. Ալիևին աջակցության խնդրանքով, ինչի արդյունքում նա հունիսի 9-ին ժամանում է Բաքու: Նույն օրը վարչապետը և Միլլի Մեջլիսի նախագահ Իսա Ղամբարը հրաժարական են տալիս: Հունիսի 15-ին Միլլի Մեջլիսի նախագահ է ընտրվում Հ. Ալիևը, հունիսի 18-ի գիշերը Էլչիբեյը չտեղեկացնելով զինակիցներին, հեռանում է Նախիջևան, իսկ ամսի 25-ին խորհրդարանը նրան պաշտոնանկ է անում՝ երկրի նախագահի լիազորությունները հանձնելով Հ. Ալիևին: Վերջինիս և Ս. Հուսեյնովի բանակցությունների արդյունքում, զինյալ ջոկատները հեռանում են Բաքվի մատույցներից, իսկ Ս. Հուսեյնովը նշանակվում է երկրի վարչապետ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Ս. Հուսեյնովի և Ա. Հումբաթովի «խռովությունները» կազմակերպված էին երկրում «ներքաղաքական քաոս» ստեղծելու միջոցով՝ Էլչիբեյ-Ալիև փոխատեղումն իրագործելու համար:

Այս համատեքստում արդիական է «արտաքին գործոնների» ազդեցության դիտարկումը: Գոյություն ունի երկու հիմնական վարկած Հուսեյնովի և Հումբաթովի «արտաքին հովանավորյալների» հետ կապված: Ամենատարածված վարկածը, թերևս, «ռուսաստանյան գործոնի» ազդեցությունն է: Այդ վարկածը հիմնավորվում է 1992-

⁹² T. Goltz, "Azerbaijan Diary", Armonk, New York, 1998, p. 412.

93թթ. ադրբեջանա-ռուսական հարաբերությունների կտրուկ սառեցմամբ, և Ադրբեջանի արևմտամետ դիրքորոշման փաստով, որն, իհարկե, չէր համապատասխանում Ռուսաստանի շահերին տարածաշրջանում: Վերջին շրջանում հատկապես բացասական ընթացք ունեին Բաքվից 250կմ հեռավորության վրա գտնվող «Գաբալա» ռադիոտեղորոշիչ կայանի ապագա կարգավիճակի շուրջ վարվող բանակցությունները Ադրբեջանի և Ռուսաստանի ռազմական պատվիրակությունների միջև: Արդյունքում Ադրբեջանի ՊՆ նախարար Ղազիևը համաձայնում է Գաբալան 20 տարի ժամկետով վարձակալության տալ Ռուսաստանին՝ կայանը համատեղ շահագործելու պայմանով: Մարտ ամսին, ղարաբաղյան ճակատում ադրբեջանական բանակի կրած կորուստներից հետո, Ղազիևին փոխարինած ՊՆ նորանշանակ նախարար Դ. Ռզաևը փորձեց լուծել Գաբալայի խնդիրը՝ Ռուսաստանից պահանջելով ռազմամթերքի լայնածավալ մատակարարում ադրբեջանական զինուժի համար:⁹³ Պահանջը մերժվեց Ռուսաստանի կողմից, որին հաջորդեց շրջակա միջավայրի աղտոտման և ադրբեջանական ժողովրդի առողջության դեմ սպառնալիք հանդիսացող Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանին նվիրված Ադրբեջանի Միլլի Մեջլիսում երկրի գլխավոր բնապահպանի ելույթը: Բնապահպանական փորձագիտության փաստաթղթերը Ռուսաստանին չտրամադրվեցին, և խնդիրը սկսեց բացահայտ քաղաքական բնույթ ստանալ:⁹⁴

Հարևան երկրների հետ լարվածության այլ պատճառ էր նաև ԱԺԾ-ի վարած «նավթային քաղաքականությունը»: Ադրբեջանի կառավարությունը՝ ի դեմս ադրբեջանական SOCAR նավթային ընկերության, համաձայնության գալով AMOCO, British Petroleum/Statoil, UNOCAL, Pennzoil, McDermott, Turkish Petroleum նավթային ընկերությունների հետ, պատրաստվում էր պայմանագիր կնքել կասպյան նավթի արդյունահանման և շահագործման պայմանների շուրջ՝ շրջանցելով ռուսաստանյան և իրանական ընկերությունները: Հարկ է նշել, որ Ադրբեջանում «արտաքին ուժերի» ազդեցության գերակայության հիմնական նպատակներից մեկը կասպյան ավազանի նավթի ու բնական գազի շահագործման իրավունքի ձեռքբերումն էր, ուստի Ռուսաստանը չէր կարող համաձայն լինել վերը նշված պայմանագրի նախագծի հետ,

⁹³ С.И. Чернявский, “Новый путь Азербайджана”, Москва, 2002г., стр. 303.

⁹⁴ Տես՝ նույն տեղում:

որի ստորագրումը, ի դեպ, համընկավ Ս. Հուսեյնովի խոռվության ժամանակաշրջանին և, բնականաբար, հետաձգվեց Էլչիբեյի իշխանափոխության պատճառով:

Նախագահական պարտականությունները Հեյդար Ալիևի կողմից ստանձնելու պահին ադրբեջանա-ռուսաստանյան հարաբերությունները այնքան լարված էին, որ շատ քաղաքական գործիչներ և վերլուծաբաններ, հաշվի առնելով նաև Հ. Ալիևի կենսագրությունը, նրա իշխանության գալը դիտարկում են որպես Ռուսաստանի շահերին համապատասխանող իրողություն:⁹⁵ Նման եզրակացության համար հիմք էր ծառայում հատկապես հունիսի 15-ին Հ. Ալիևի ելույթը երկրի խորհրդարանում⁹⁶: Միննույն ժամանակ Ս. Հուսեյնովի և Ա. Հումբաթովի խոռվությունը համարվում է Ռուսաստանի կողմից եթե ոչ կազմակերպված, ապա առնվազն խրախուսված գործողություն: Հուսեյնով-Հումբաթով-Ղազիև եռանկյունին մի շարք վերլուծաբանների և քաղաքական մեկնաբանների կողմից ընդունված է համարել «ռուսաստանամետ»:⁹⁷

Հարկ է նշել, սակայն, որ Էլչիբեյի հեռացումը ձեռնտու էր նաև Իրանին, որը, ինչպես Ռուսաստանը, ուներ լուրջ խնդիրներ Ադրբեջանի հետ հարաբերություններում: Այդպիսիք էին Ադրբեջանի նախագահի մակարդակով պարբերաբար հնչեցվող կոչերը «Հարավային Ադրբեջանի» ազատագրմանն ու «Միացյալ Ադրբեջանի» կազմավորման մասին, ինչպես նաև վերը նշված նավթային պայմանագրի նախագծում իրանական նավթային ընկերությունների մասնակցության մերժումը: Իրանին նաև դուր չէր գալիս Ադրբեջանի չափազանց մերձեցումը Թուրքիայի հետ:

Դեռևս Նախիջևանում գտնվելու ժամանակ Հ. Ալիևը քաղաքական կապեր էր ստեղծել Իրանի հետ, ուստի Էլչիբեյի համեմատությամբ, Ալիևի իշխանությունն առավել նախընտրելի էր:⁹⁸ Իրանը կարող էր նպաստել Ադրբեջանում «ներքաղաքական քաոսի» ստեղծմանը՝ օգտագործելով «թալիշական գործոնը», դա է պատճառը, որ տվյալ ներքաղաքական իրավիճակում Ա. Հումբաթովի վերոհիշյալ գործունեությունը թույլ է տալիս եզրակացություններ անել 1993թ. իշխանափոխության ընթացքին Իրանի անուղղակի մասնակցության մասին:

⁹⁵ С.И. Чернявский, “Новый путь Азербайджана”, Москва, 2002г., стр. 304.

⁹⁶ «Бакинский рабочий», 12.11.1999.

⁹⁷ С.И. Чернявский, “Новый путь Азербайджана”, Москва, 2002г., стр. 304.

⁹⁸ Տես՝ նույն տեղում, էջ 124.

Ս. Հուսեյնովի խոռվության արդյունքում Հ. Ալիևի իշխանության գալն այլ կերպ է մեկնաբանում թուրք գիտնական Ֆերման Դեմիրքոլը: Վերջինիս տեսակետի համաձայն, Հ. Ալիևը, մինչ Մեջլիսի նախագահի պարտականությունները ստանձնելու առաջարկը ընդունելը, մեկնել է Գյանջա և անձամբ հանդիպել Սուրեթ Հուսեյնովի հետ, որին խոստացել է երկրի վարչապետի պաշտոնը՝ Էջիբեյի հրաժարականը պահանջելու դիմաց:⁹⁹

Հուսեյնովը համաձայնել է, իսկ Հ. Ալիևը, վերադառնալով Բաքու, Էջիբեյին հաղորդել է նրա հրաժարականի մասին Հուսեյնովի նոր պահանջը՝ միաժամանակ ընդունելով Մեջլիսի նախագահի պարտականությունները ստանձնելու առաջարկը: Այսպիսով, Դեմիրքոլը ժխտում է Էջիբեյ - Հ. Ալիև փոխատեղումն իրագործելու նպատակով Ս. Հուսեյնովի խոռվության նախապես կազմակերպված լինելը, փոխարենը բացահայտելով ստեղծված իրավիճակներն իր շահերին համապատասխանեցնելու Ալիևի ունակությունը:¹⁰⁰

Ադրբեջանում և նրա շուրջ ստեղծված իրավիճակի պայմաններում, Հ. Ալիևի իշխանության գալը ձեռնտու էր թե՛ ներքին թե՛ արտաքին ուժերին: Ադրբեջանում Ալիևն ուներ հասարակական մեծ հեղինակություն, փորձառու քաղաքական գործչի համբավ և, գլխավորը, համապատասխան մարդկային ու նյութական ռեսուրսներ: Ինչ վերաբերում է «արտաքին ուժերին», ապա հավասարակշռված քաղաքականություն վարելու ունակ ու կանխատեսելի Հ. Ալիևի վերադարձն Ադրբեջանի ղեկին՝ համապատասխանում էր մեծ քաղաքականության շահերին:

Թուրքիան, ԱԺԾ-ի «հովանավորյալը» լինելով հանդերձ, սերտ քաղաքական հարաբերությունների մեջ էր Հ. Ալիևի հետ: Այսպես, Հ. Ալիևի ու Թուրքիայի ղեկավար Ս. Դեմիրելի առաջին հանդիպումը եղել է 1967թ. վերջին՝ իր Բաքու կատարած այցի ժամանակ: Հետագայում նրանց հարաբերությունները շարունակվել են ոչ պաշտոնական և պարբերական հանդիպումների ու հեռախոսազրույցների միջոցով: Ըստ Դեմիրելի, իրենք եղել են մտերիմներ, խորհրդակցել են միմյանց հետ:¹⁰¹ 1992թ. մարտի 24-ին Հ. Ալիևը ու Ս. Դեմիրելը ստորագրում են Նախիջևանի և Թուրքիայի

⁹⁹ F. Demirkol, “Diktatörleriuykututmaz”, Istanbul, 2002, s. 30.

¹⁰⁰ Տես՝ նույն տեղում:

¹⁰¹ Интервью Т. Мустафаева с С. Демирелем, “С. Демирель: “О необходимости прихода к власти Гейдара Алиева Эльчибею сказал я”, <http://anspress.com/index.php?a=2&lng=ru&nid=118065>

միջև տնտեսական համագործակցության մասին պայմանագիր, որով Անկարայի կողմից տրամադրվում է նաև 100մլն դոլար վարկ:¹⁰² 1992թ. մայիսի 28-ին Սադարակում կայանում է Թուրքիայի օժանդակությամբ կառուցված Նախիջևան-Իգդիր կամուրջի բացումը Ս. Դեմիրելի գլխավորած թուրքական պատվիրակության մասնակցությամբ:

Ս. Դեմիրելի խոսքերով, ժամանակին ինքն անձամբ է կարգադրել Հ. Ալիևին Նախիջևանից Բաքու գնալ և վերցնել իշխանությունը: Միաժամանակ, Անկարայում Ս. Դեմիրելը Ա. Էլչիբեյին հորդորել է զիջել իշխանությունը Հ. Ալիևին: Դեմիրելը, ANS Press-ին տված իր հարցազրույցում նշել է, որ երկիրը ճգնաժամից հանելու համար Թուրքիան ամեն կերպ օժանդակել է Ալիևի վերադարձին:¹⁰³ Թուրքիայի ղեկավարի հետ իր սերտ հարաբերությունների մասին վկայել է նաև Հ. Ալիևը. «Նախիջևանում եղած ժամանակ նախագահ Դեմիրելն ինձ առաջարկել է 100մլն վարկ...Ես ճանապարհ եմ սարքել դեպի Թուրքիա, կամուրջ գետի վրա և կարգավորել ապրանքամատակարարումը¹⁰⁴»:

Ավելին, Հ. Ալիևի իշխանության առաջին ամիսներին նշմարվող ճգնաժամի հաղթահարումից հետո, թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը ստացանում է նոր որակ: Թուրքիան Հայաստանի դեմ գործողություններում փորձում է ընդգրկել Ռուսաստանի քաղաքական վերնախավի որոշակի մասին: 1993-1994թթ. ՀՀ-ում Հունաստանի դեսպան Լ. Խրիսանտոպուլոսը 2002թ. հրապարակած իր հուշերում, վկայակոչելով ֆրանսիական ու ամերիկյան հատուկ ծառայությունների տեղեկատվությամբ հիմնավորված ֆրանսիայի ու ԱՄՆ դեսպանների խոսքը, գրել է 1993թ. ՀՀ տարածք Թուրքիայի ներխուժման ծրագրի մասին՝ կապված ՌԴ-ում հոկտեմբերյան հեղաշրջման փորձի հետ¹⁰⁵: «Հոկտեմբերի 11-ին Ֆրանսիայի դեսպանը ինձ ասաց, որ Անկարայի և Խասսուլատովի միջև համաձայնություն կա, որ վերջինիս հաղթանակի դեպքում նա կթույլատրի Թուրքիային, օգտագործելով քրդական խնդրի պատրվակը, կատարել սահմանափակ բնույթի ռազմական ներխուժում Հայաստան և

¹⁰² И. Гусейнова, Гейдар Алиев, Баку, Тахсил, 2005, стр. 147.

¹⁰³ Интервью Т. Мустафаева с С. Демирелем, “С. Демирель: “О необходимости прихода к власти Гейдара Алиева Эльчибею сказал я”, <http://anspress.com/index.php?a=2&lng=ru&nid=118065>

¹⁰⁴ Азербайджан, 17.08.1993.

¹⁰⁵ Leonidas T. Chrysanthopoulos, Caucasus Chronicles: Nation-Building and Diplomacy in Armenia, 1993-1994, The Gomidas Institute, London, 2002, 200 p..

Վրաստան՝ Աբխազիայի անվտանգությունը ապահովելու համար: Թուրքիայի ներխուժումը Հայաստան, ըստ ֆրանսիական հատուկ ծառայությունների տվյալների, պետք է տեղի ունենար Խասբուլատովի կողմից ռուսաստանյան զորքերը Հայաստանից դուրս բերելուց անմիջապես հետո: Երկու լուրջ հատուկ ծառայություններ /ինչպիսին են Ֆրանսիային ու ԱՄՆ-ինը/...հաստատում են Խասբուլատովի և Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերի միջև գոյություն ունեցող պայմանավորվածության մասին, ըստ որի Թուրքիային թույլատրվում էր հարվածել Հայաստանին և Վրաստանին, որքանով էլ դա անհավատալի լինի»¹⁰⁶:

Իրանի համար ևս, Ա. Էլչիբեյ - Հ. Ալիև զուգընտրանքից, միանշանակ նախապատվելի էր վերջինը՝ երկկողմանի հարաբերությունները փակուղուց դուրս բերելու և նոր զարգացումներ ապահովելու ակնկալիքով: Հարկ է նշել, որ Հ. Ալիևը Նախիջևանի ղեկավար դառնալու առաջին իսկ օրից սերտ հարաբերություններ հաստատեց Թեհրանի հետ՝ ապահովելով ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական աջակցություն: Քաղաքական մակարդակում Թեհրանը ճնշում էր գործադրում հայկական կողմի վրա հատկապես Նախիջևանի հետ ռազմական գործողությունների ժամանակ: Մասնավորապես, 1993թ. սեպտեմբերին հայկական զինուժի առաջխաղացմանն ի պատասխան, իրանական ստորաբաժանումներ մտան Նախիջևան՝ Արաքսի ջրամբարտակի ու ադրբեջանցի փախստականների ճամբարների անվտանգությունն ապահովելու պատրվակով: Միայն ՌԴ ԱԳՆ զգուշացումից հետո կասեցվեց իրանական հատուկ գործողությունը¹⁰⁷: Տնտեսական հարաբերությունները ալիևյան Նախիջևանի ու Իրանի միջև կառուցվեցին իրավական հիմքերով, օրինակ, 1992թ. օգոստոսի 24-ին Թեհրանում ստորագրվում է արձանագրություն Նախիջևան-Բաքու մայրուղի կառուցելու մասին: Միաժամանակ, խոսուն են Թեհրանի կողմից Նախիջևանին հատկացված տնտեսական օգնության

¹⁰⁶ Տես՝ “The French Ambassador told me on October 11 that, according to French intelligence sources, there had been an agreement between Khasbulatov (a Chechen Moslem) and Ankara that, if he prevailed, he would allow Turkey to execute incursions of a limited nature into Armenia, using the Kurdish issue as a pretext, and into Georgia to secure Abkhazia. The Turkish incursion into Armenia, according to French intelligence sources, would take place immediately after Khasbulatov would have withdrawn the Russian troops from Armenia. ...Two serious intelligence services (those of France and the United States)...confirm that there was some kind of agreement between Khasbulatov and Turkish Prime Minister Tansu Ciller to permit surgical strikes by Turkey in Armenia and Georgia, as unbelievable as it may sound.”, The Armenian Weekly October, 2002.

¹⁰⁷ А.Рамезанзаде, Роль Ирана как посредника в нагорно-карабахском кризисе, Contested Borders in the Caucasus, 1996, <http://poli.vub.ac.be/publi/ContBorders/rus/ch0701.htm>

ծավալները. 30 մեգավատ էլեկտրաէներգիա, 520 տոննա դիզլառելիք, 540 տոննա մագուր, 220 տոննա քարածուխ, 955 տոննա կարտոֆիլ և այլն¹⁰⁸: Ի դեպ, այդ երկիր կատարած այցերի ժամանակ, որպես հատուկ վերաբերմունքի դրսևորում, Հ. Ալիևին տրամադրվել է Իրանի նախագահի ինքնաթիռը, ինչպես, օրինակ 1993թ. մարտի 16-19-ին Թեհրան կատարած պաշտոնական այցի ժամանակ¹⁰⁹:

Արևմուտքը՝ ի դեմս ԱՄՆ-ի և Բրիտանիայի նույնպես շահագրգռված էր Ադրբեջանի նախագահի պաշտոնում տեսնել երկրի կայունության և իրենց երկարաժամկետ շահերը տարածաշրջանում ապահովելու երաշխավոր քաղաքական գործչի, ում հետ կար երկարատև համագործակցության փորձ: Նախիջևանի ղեկավար Հ. Ալիևի հետ Բաքվում ԱՄՆ դեսպանատան աշխատակիցների պարբերաբար հանդիպումների շնորհիվ, նա կապեր էր հաստատել ԱՄՆ ղեկավարության, մասնավորապես Բ. Քլինթոնի հետ: Արդյունքում, ամերիկյան ինքնաթիռները պարենային և այլ օգնություն են հասցնում Նախիջևան: Ուշագրավ փաստ է 1993թ. փետրվարի 4-ին Նախիջևանում երկօրյա այցի ժամանակ Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռ. Մայլսի(1992թ սեպտեմբեր 16-1993թ. նոյեմբեր 5) «Həyat» թերթին տրված հարցազրույցում ընդգծված այն միտքը, թե Ադրբեջանում իր ճանաչողական այցերը որոշել է սկսել երկրի հասարակական-քաղաքական կյանքում մեծ դերակատարում ունեցող ինքնավարության ղեկավարի հետ ծանոթությամբ¹¹⁰:

Այսպիսով, «ներքին» և «արտաքին» ուժերի շահերի համընկման ու գործնական ջանքերի համատեղման արդյունքում Ադրբեջանում, ի վերջո, հաստատվում է «նախիջևանյան» կլանի իշխանությունը Հ. Ալիևի առաջնորդությամբ: Կարելի է եզրահանգել, որ ԽՍՀՄ փլուզմամբ պայմանավորված աշխարհաքաղաքական վերածնունդների այս փուլում «արտաքին ուժերը» ԼՂ հակամարտությունը ծառայեցնում էին Ադրբեջանում իրենց ազդեցության հաստատման նպատակով՝ օգտագործելով իշխանության համար պայքարում տեղի քաղաքական ուժերին որպես գործիք:

Ամփոփելով Ադրբեջան - Թուրքիա հարաբերությունների ձևավորման շրջանը կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

¹⁰⁸ И. Гусейнова, Гейдар Алиев, Баку, Тахсил, 2005, стр. 148.

¹⁰⁹ Э.Ахундова, Мгновения истины, Баку, Дом сказки, 2003, стр.18.

¹¹⁰ И. Гусейнова, Гейдар Алиев, Баку, Тахсил, 2005, стр. 150.

Առաջին, 1985թ. ԽՍՀՄ-ում «վերակառուցման» ժամանակաշրջանում քաղաքական ճգնաժամի պայմաններում, Լեոնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը, ինչպես նաև Ադրբեջանի ԽՍՀ-ում տեղի ունեցող ներքին զարգացումները հնարավորություն ընձեռեցին Թուրքիային համապատասխան քայլեր ձեռնարկել Ադրբեջանում իր ազդեցության հաստատման համար:

Երկրորդ, նորանկախ թյուրքալեզու հանրապետություններում (Ադրբեջանում ու Միջին Ասիա) իր ազդեցության հաստատման նպատակով և որպես հարաբերությունների հիմք Թուրքիան առաջադրեց պանթուրանականության գաղափարախոսությունը և «թուրքական մոդելի» գործոնը:

Երրորդ, Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում մեծ ազդեցություն ունեցավ ԼՂ հակամարտության ռազմականացումը, երբ վերոնշյալ երկու պետությունները սկսեցին կիրառել «ղարաբաղյան գործոնը» որպես միմյանց հետ հարաբերությունների զարգացման և ամրապնդման «պատմական» հնարավորություն:

Չորրորդ, Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները մեծապես պայմանավորված են եղել Ադրբեջանի միջկլանային ու ներիշխանական պայքարում միմյանց ներուժը և ռեսուրսները որպես գործիք օգտագործելու միջոցով մի կողմից տեղական որևէ կլանի իշխանությունը, մյուս կողմից՝ Թուրքիայի ազդեցությունը Ադրբեջանում հաստատելուն:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԹՈՒՐՔԻԱ-ԱԴՐԵՋԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

2.1. Թուրքիայի հարաբերություններն Ադրբեջանի հետ Հեյդար Ալիևի կառավարման ժամանակաշրջանում. Տարածաշրջանային ռազմավարական նախագծերը Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում. «Դարի Պայմանագիրը»՝ որպես աշխարհատնտեսական գործոն

1993թ. հոկտեմբերի 3-ին Ադրբեջանի հանրապետությունում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որոնց արդյունքում երկրի նախագահի հռչակվեց Հեյդար Ալիևը: Թուրքիայի կողմից այդ լուրը ընդունվեց ոչ միանշանակ. կար մտավախություն, որ նախկին Ադրբեջանի ԽՍՀ Կոմկուսի առաջին քարտուղարը նախապատվությունը կտա ՌԴ-ի հետ հարաբերությունների սերտացմանը և չի շարունակի Էլչիբեյի պանթուրանական քաղաքականության գիծը: Դա էր պատճառը, որ Հ. Ալիևի նախագահության առաջին երկու տարիներին Թուրքիայի հետ հարաբերություններն ունեին որոշակի լարված բնույթ: Այդուհանդերձ, Հ. Ալիևի կառավարման ժամանակաշրջանում են Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունները թևակոխում որակական նոր փուլ՝ կայուն, ինստիտուցիոնալ համագործակցության ստեղծմամբ և զարգացմամբ: Հարկ է նշել սակայն, որ նախագահի պաշտոնում Հ. Ալիևի առաջին և հիմնական քայլը ոչ թե Թուրքիայի, այլ Արևմուտքի հետ «Դարի գործարքի» կնքումն էր, ինչը մեծապես պայմանավորում է Ադրբեջանի տեղն ու դերը աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական զարգացումներում:

Հարավային Կովկասի ու Միջին Ասիայի տարածաշրջանի, մասնավորապես Ադրբեջանի շուրջ տեղի ունեցող աշխարհաքաղաքական պայքարն ընթանում էր Կասպից ծովի էներգապաշարների և էներգակիրների տարանցման ուղիների վերահսկման իրավունքի համար: Սա որպես ռազմավարական խնդիր հստակ ձևակերպված է Զ. Բժեզինսկու «Շախմատային մեծ խաղատախտակ»

աշխատությունում: «... Ադրբեջանն իր մեծ էներգետիկական պաշարների հետ՝ նաև աշխարհաքաղաքական առումով, ունի առանցքային նշանակություն: Այդ երկիրը կարելի է համարել Կասպից ծովի ու Միջին Ասիայի հարստություններն ամփոփող անոթի խցան: Թուրքալեզու անկախ Ադրբեջանը, որի տարածքով անցնող նավթամուղները ձգվում են ազգակից ու քաղաքական աջակցություն ցուցաբերող Թուրքիայի տարածքով, կխոչընդոտի Ռուսաստանին իրագործելու տարածաշրջանում իր մենիշխան դերը և դրանով կզրկի նրան Միջին Ասիայի նոր պետությունների նկատմամբ գլխավոր քաղաքական ներազդման լծակներից»:¹¹¹

1992թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյի № 200 հրամանագրով ստեղծվել էր Ադրբեջանի հանրապետության Պետական նավթային կազմակերպությունը՝ Azerbaijan Respublikasi Dövlət Neft Sirketi (State Oil Company of the Azerbaijan Republic-SOCAR), որը միավորել էր նախկինում հանրապետական յոթ նավթագազային ձեռնարկություններ:¹¹² Կազմակերպության նախագահ նշանակվել էր Ա. Էլչիբեյի խորհրդատու Սաբիթ Բաղիրովը՝ ի պաշտոնե անմիջականորեն ենթարկվելով վարչապետին: Սոցալ-ի առաջարկով, նոյեմբերի 9-ին SOCAR-ը ստորագրում է «Միասնական ծովային խողովակաշարերի ու թերմինալների համակարգի, մատակարարման միասնական բազայի մասին փոխըմբռնման հինգ հուշագիրը», ինչը BP-ի գլխավորությամբ դառնում է հետագա միասնական կոնսորցիումի ստեղծման հիմքը:¹¹³ Կարճ ժամանակ անց գործարքին միանում է Turkish Petroleum նավթային ընկերությունը՝ ստանալով բաժնեմաս BP-ից: Ըստ Ա. Բաղիրովի ու Ս. Ռեմիի, թուրքական ընկերության ներգրավումն Ադրբեջանն իրականացրել է երկրում առկա պանթուրքական տրամադրությունների ու պանթուրքական լրբինգի արդյունքում, միաժամանակ մերժելով ռուսաստանյան LUKoil-ի և Իրանի համարժեք առաջարկները:¹¹⁴

¹¹¹ 3. Бжезинский, Великая шахматная доска. Американское первенство в мире и геостратегические перспективы. Москва. Международные отношения, 1998, p.155.

¹¹² Eastern Europe, Russia and Central Asia, Europa Publications, 2004, p. 112.

¹¹³ N. Sagheb and M. Javadi, "Azerbaijan's "Contract of the Century" Finally Signed with Western Oil Consortium, Azerbaijan International, Winter 1994 (2.4), p. 26.

¹¹⁴ Klebnikov Paul, "The Quietly Determined American", Forbes, October 24, 1994, p. 49

BP-ն, Statoil-ը և Ramco-ն սկսեցին նավթային օբյեկտների կատարելագործման և նավթային սարքավորումների արտադրության վերականգնման աշխատանքները:¹¹⁵

Ջուզահեռաբար, Amoco, Pennzoil, McDermott և մյուս կազմակերպությունները նաև փորձում էին գտնել այլ հնարավորություններ՝ մեծածավալ մերձափնյա և ծովային բնական գազի պաշարները շահագործելու նպատակով: 1993թ. հոկտեմբերին SOCAR-ը և Pennzoil-ը ստորագրեցին գազի օգտահանման պայմանագիր՝ Գյունեշլի արդյունահանված գազը խտացնելու և Բաքվի հարավում գտնվող վերամշակման ձեռնարկություն տեղափոխելու մասին: McDermott-ը ընդգրկվեց գազը Pennzoil-ի վերամշակման օբյեկտներ փոխադրող խողովակաշարերի կառուցման աշխատանքներում:¹¹⁶

1993թ. հունիսի 5-ին SOCAR-ը արևմտյան ընկերություններին ներկայացրեց Հայտարարագիր օգտահանման մասին, որով միավորված Գյունեշլի, Չիրադ և Ազերի հանքավայրերը նախատեսվում էր շահագործել նոր պայմաններով:¹¹⁷ Նախկինում երեք տարբեր նախագծերում ընդգրկված Amoco, Pennzoil, Unocal, BP, Statoil, McDermott, Ramco and Türkiye Petrolleri Anonim Ortaklığı (TPAO) նավթային ընկերությունները ձևավորեցին կոնսորցիում՝ հետամուտ լինելու նոր համակցված գործարքին: 1993թ. հուլիսի 21-ին Լոնդոնում նախատեսվում էր կատարել պայմանագրի ստորագրության հանդիսավոր արարողությունը:

Մինչ նշանակված օրը, սակայն, Ադրբեջանում տեղի է ունենում պետական հեղաշրջում: Հունիսի 24-ից նախագահի պաշտոնակատարի լիազորությունները ստանձնած Հ. Ալիևը հուլիսին հրամանագիր է ստորագրում բանակցությունները կասեցնելու մասին: Ըստ նրա, 1993թ. հունիսի 6-ին հրաժարական ներկայացրած վարչապետ Փ. Հուսեյնովը ամսի 11-ին ստորագրել է պայմանագիրը կնքելու մասին կառավարության համաձայնագիրը, իսկ հաջորդ օրը Ս. Բադիրովը կնքել է պայմանագիրը: Խորհրդարանի նախագահ ընտրվելուց հետո, Հ. Ալիևի խոսքերով, վերջինս նրան զգուշացնում է գործարքի ինչ-որ մութ կողմերի մասին, և դա հիմք է դառնում պայմանագիրը չեղյալ հայտարարելու և բանակցությունները կասեցնելու

¹¹⁵ Տես՝ նույն տեղում:

¹¹⁶ Guy Chazan, “Western Oil Firms Help Azerbaijan on the Road to Economic Recovery,” AGBU News, Vol. 2, No. 4 (December 1992), p. 5.

¹¹⁷ Interfax Petroleum Report, December 11-18, 1992, p. 8.

որոշումն ընդունելու համար:¹¹⁸ Այնուհանդերձ, չնայած երկրում տիրող անկայուն իրավիճակին, նոր իշխանություններին խրախուսելու համար 1993թ. հունիսի 21-ին Կոնսորցիումի ութ ընկերությունները, որպես բոնուս, նախնական 81 մլն դոլար փոխանցեցին SOCAR-ին:¹¹⁹

Հ. Ալիևի գլխավոր նպատակներից մեկը բացահայտվում է, երբ օգոստոսին նավթային ընկերությունների ղեկավարների հետ հանդիպմանը նա հայտարարում է. «Եթե զարգացած պետությունների նավթային ընկերությունները հետաքրքրվում են Ադրբեջանի նավթահանքերով... ապա այդ երկրների պետական կառույցները պետք է ուշադրություն դարձնեն հանրապետության ներկա հասարակական-քաղաքական վիճակին»:¹²⁰

1994թ. փետրվարի 4-ին նախագահի հաջորդ հրամանագրով SOCAR-ը լիազորվեց շարունակել բանակցությունները արևմտյան ընկերությունների հետ՝ հիմք ընդունելով մինչ այդ մշակված սկզբունքները:¹²¹ SOCAR-ի նոր վարչակազմի նախագահ դարձավ Նաթիք Ալիևը, փոխնախագահ՝ Հ. Ալիևի որդի Իլհամ Ալիևը, իսկ բանակցային խմբի ղեկավար նշանակվեց Մանաֆովը: Բանակցությունները վերսկսվեցին Բաքվում, այնուհետև շարունակվեցին Ստամբուլում: Ստամբուլյան բանակցություններում ձեռքբերված փոխհամաձայնության, այն է՝ Ադրբեջանին ավելի մեծ շահութաբաժին(80%) հատկացնելու, նավթահանքերի արդյունահանման ու շահութաբաժնային վճարը 500 մլն դոլար սահմանելու արդյունքում, Բաքվում ստորագրվեց ստամբուլյան բանակցությունների ավարտի մասին փաստաթուղթը: Միաժամանակ, SOCAR-ի պատվիրակությունը Հյուսթոնում(ԱՄՆ) 45-օրյա աշխատանքի ընթացքում շահագրգիռ կողմերի հետ ավարտեց պայմանագրի նախագծի մշակումը: «Դարի Պայմանագիրը» հիմք հանդիսացավ Ադրբեջանի և 19 պետությունների 41 նավթային ընկերությունների միջև 26 այլ գործարքների կնքման համար:¹²²

¹¹⁸ Известия, 4 августа 1993 г.

¹¹⁹ O&GJ, June 28, 1993, p. 33-34

¹²⁰ И. Гусейнова, Гейдар Алиев, Баку, Тахсил, 2005, стр. 213.

¹²¹ Heydər Əliyev. Müstəqilliyimiz əbədidir. Bakı, 1997, II c., səh. 226; Azərbaycan: Oktyabr 94 - mart 95. Qəsd. Bakı, 1995, səh. 6-7

¹²² 3. Гулиев, “Контракт Века”: Завоевание и проблемы Азербайджана”, ИА REGNUM, <http://www.regnum.ru/news/1446785.html#ixzz2ScXnaHOv>

Վերոհիշյալ գործընթացին զուգահեռ, տեղի էին ունենում որոշակի զարգացումներ Ադրբեջան-ՌԴ հարաբերություններում: Պայմանագրով Արևմուտքը վերահսկողություն էր հաստատում Ադրբեջանի, ինչպես նաև տարածաշրջանային հիմնական էներգառեսուրսների նկատմամբ՝ զգալիորեն չեզոքացնելով տարածաշրջանում ՌԴ էներգետիկ մենաշնորհը և ազդեցությունն առհասարակ: Դեռևս 1994թ. հուլիսին Ադրբեջանում ՌԴ դեսպան Վ. Շոնիան հայտարարել էր. «Մենք 200 տարվա համագործակցության պատմություն ունենք Ադրբեջանի հետ: Որևէ քաղաքական գործիչ, ով կժխտի Ռուսաստանի ուժը, երկար չի մնա կառավարությունում: Ռուսաստանը հետաքրքրված է Արևմուտքի հետ Ադրբեջանի համագործակցությամբ, բայց եթե Ռուսաստանին հաշվի չառնելու ինչ-որ փորձեր լինեն, ապա կլինեն անցանկալի հետևանքներ»:¹²³

Այնուամենայնիվ, ԱՊՀ կազմում Ադրբեջանի անդամակցության մասին փաստաթուղթը ստորագրվելուց հետո (1993թ. սեպտեմբեր), 1993թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ռուսաստանյան LUKoil նավթային ընկերության հետ բանակցությունների ավարտին ստորագրվեց նաև փաստաթղթերի փաթեթ SOCAR-LUKoil համագործակցության վերաբերյալ: Վերջինս ստացավ 10% մասնաբաժին՝ ադրբեջանական երեսուն տոկոս բաժնեմասի հաշվին:¹²⁴ Ռուսաստանի կողմից փաթեթը վավերացրեց Վառելիքի և էներգետիկայի նախարար Յուրի Շաֆրաննիկը:

Պետք է նկատել, որ այս նույն ժամանակահատվածում ՌԴ այլ գերատեսչություններ, օրինակ ԱԳՆ-ը, ՊՆ-ը և Արտաքին հետախուզության ծառայությունը ակտիվ քայլեր էին ձեռնարկում պայմանագիրը խափանելու համար: Ռուսաստանի միջկառավարական նման հակասությունները որոշ փորձագետների կողմից դիտվում են որպես հետխորհրդային դեռևս նոր ու չկայացած կարգի դրսևորում:¹²⁵ Կար տեսակետ, որ ՌԴ իշխանություններում գործում էին երկու թևեր,

¹²³ Economist, "Russian Pressure on Azerbaijan," Foreign Report, July 14, 1994.

¹²⁴ Ara Sanjian, "The Negotiations of the "Contract of the Century" and the Political Background to the Revival of Azerbaijan's Oil Industry", Armenian Center of Armenian and International Studies, 1997, p. 10.

¹²⁵ N. Sagheband M. Javadi, "Azerbaijan's "Contract of the Century" Finally Signed with Western Oil Consortium, Azerbaijan International, Winter 1994 (2.4), p. 28.

որոնցից մեկը վառելիքաէներգետիկ համալիրն էր՝ կառավարության ղեկավար Վ. Չեռնոմիրոդինի գլխավորությամբ:¹²⁶

1993-1994թթ. Ադրբեջանի նոր իշխանությունները՝ նավթային գործարքի առերևույթ տնտեսական խնդիրներից առավել, փորձում էին լուծել ավելի մասշտաբային խնդիրներ: Անհրաժեշտ էր լուծել որպես պետական կազմավորում ասպարեզում մնալու և միջազգային հարաբերություններում միավոր դառնալու խնդիրը՝ Լեռնային Ղարաբաղի հետ ընթացող պատերազմի պայմաններում: Անհրաժեշտ էր հստակորեն տարբերակել ռազմավարական դաշնակիցների հետ հարաբերությունների զարգացման և այլ ուժերի միջև հավասարակշռություն պահպանելու համար տարվող քաղաքական ուղեգծերը: Ըստ էության, բանակցությունների գործընթացը վերհանեց ոչ միայն նշյալ խնդիրները, այլև դրանց լուծումների տրամաբանությունը: Այդ համատեքստում միանգամայն հատկանշական է պայմանագրի ստորագրման արարողությանը ներկա թուրքական պատվիրակության ղեկավարի խոսքերը: Թուրքիայի պետնախարար Ն. Ջովհարին նշելով, թե պայմանագիրը ունի ոչ միայն տնտեսական կարևորություն, այլ նշանակում է եղբայրական Ադրբեջանի ճանաչումը Արևմուտքի կողմից, ընդգծեց. «Իմ ժողովուրդի անունից ես դա համարում եմ Արևմուտքի խոնարհումը Ադրբեջանի և նրա դրոշի առաջ»¹²⁷:

Նավթային պաշարների արդյունահանման հարցով «Դարի պայմանագիրը» կնքելուց հետո, առաջնահերթ կարևորություն ստացավ հումքը միջազգային շուկաներ հասցնելու խնդիրը: Առաջադրվեց կառուցվելիք խողովակաշարերի հնարավոր երթուղիների ընտրության հիմնահարցը: Ըստ պայմանագրի, նախատեսվում էր խնդրի լուծման երկու փուլ. առաջին փուլով նախատեսվում էր 18 ամիս անց արդյունահանված

¹²⁶ Barylski V. Robert, Russia, the West and the Caspian Energy Hub, Middle East Journal 49, No 2, 1995, p. 223
Այս համատեքստում ուշագրավ է 1998թ. հուլիսին Հ.Ալիևի Լոնդոն կատարած պաշտոնական այցի ժամանակ արձանագրված հետևյալ փաստը. «Ադրբեջանի նախագահին առավել հաճույքով ստորագրում է պայմանագրեր այն մարդկանց հետ, ովքեր իրեն զորավիգ են եղել 1993-1994թթ. բարդ շրջանում, ովքեր հակառակ ՌԴ-ի ցանկության, ռիսկային որոշում ընդունեցին ստորագրելու նավթային գործարքը: Նրա դաշնակիցներն էին Մեծ Բրիտանիայի ու ՌԴ Էներգետիկայի երկու նախարարներ Թիմ Էզգարը ու Յուրի Շաֆրաննիկը...դառնալով նավթային ընկերությունների ղեկավարներ, նրանք որոշեցին հեռանկարային նավթահորեր ստանալ ադրբեջանական հատվածում... Շաֆրաննիկն ասաց, որ իր մասնաբաժինը կազմում է 12.5%»: (Э.Ахундова, Мгновения истины, Баку: "Домсказки", 2003, стр.197)

¹²⁷ Azərbaycan, Oktyabr 94 - mart 95, Qesd. Bakı, 1995, səh. 39.

հում նավթի, երկրորդ փուլով՝ մինչև 2000թ. հիմնական նավթի արտահանումը: Գլխավոր հարցը, սակայն, դեպի Արևմուտք կառուցվելիք նավթային խողովակաշարի երթուղու վերաբերյալ որոշման կայացումն էր: Այս հիմնահարցի լուծումը բարդ էր երթուղիների հարցում քաղաքական ու տնտեսական շահերի բախման իրողությամբ:

Նավթամուղի երթուղիների շուրջ քննարկումները ադրբեջանական կողմի և շահագրգիռ պետությունների ու նավթային ընկերությունների միջև սկսվել էին նավթային պաշարների վերաբերյալ բանակցություններին զուգահեռաբար: Տեսականորեն գերակա շահ համարվում էր նավթահորերի արդյունահանումից և նավթի արտահանումից ստացված ֆինանսատնտեսական շահույթը: Դիտարկվում էին դեպի Արևմուտքի շուկաները ադրբեջանական նավթի արտահանման աշխարհագրական երեք՝ հյուսիսային, արևմտյան և հարավային երթուղիները: Նավթամուղի կառուցման հնարավոր չորս ուղիները պետք է անցնեին սահմանակից երկրներից որևէ մեկի տարածքով: Աշխարհագրական առումով հյուսիսային երթուղին ՌԴ տարածքն էր, արևմտյանը՝ Վրաստանն ու Հայաստանը և հարավայինը՝ Իրանը: Ինչպես դժվար չէ նկատել, աշխարհագրական այս ուղղությունները համապատասխանում են աշխարհաքաղաքական երկու՝ եվրասիականության (Heartland) և ատլանտյան (Rimland) հայեցակարգերի, ինչպես նաև քաղաքակրթական՝ Արևելք-Արևմուտք և Հյուսիս-Հարավ առանցքների հատման հանգույցին: Սա նշանակում էր, որ նավթամուղի երթուղու ընտրությունը ուղղակիորեն առնչվում էր աշխարհառազմավարական և աշխարհատնտեսական շահերին: Այդ իսկ պատճառով, ինչպես վերը նշվել էր, ԱՄՆ-ի քաղաքական ղեկավարությունն իր ուղղակի միջամտությամբ «Դարի պայմանագրի» մասնակիցների նախնական ցանկից հեռացրեց Իրանին: Միևնույն պատճառով, Արևմուտքը հստակորեն արտահայտեց ՌԴ-ի տարածքը շրջանցող որևէ երթուղու հանդեպ իր նախապատվությունը: Այնուհանդերձ, ուշադրության արժանի են այն իրողությունները, որոնք, թեկուզև քիչ հայտնի, այնուամենայնիվ եղել են շրջանառության մեջ՝ մեծ քաղաքականության համատեքստում:

Հայաստանյան տարբերակ: Տնտեսական առումով Հայաստանի տարածքը ամենաշահավետ երթուղին էր ինչպես Կասպից-Սև ծովեր, այնպես էլ Կասպից-

Միջերկրական ծովեր նավթամուղի կառուցման համար աշխարհագրականորեն առավել կարճ ճանապարհը լինելու հանգամանքով: Առաջին անգամ նավթամուղի հայաստանյան երթուղու մասին տեղեկատվություն եղել է դեռևս 1992թ. սկզբին: Ըստ Attila Doğan Petrol թուրքական նավթային միավորման մասնաճյուղի՝ AD Petrosan ընկերության նախագահ Օղուզ Կափանի, ինքը ադրբեջանական ղեկավարությանն առաջարկել է Ադրբեջան-Թուրքիա խողովակաշարը կառուցել Հայաստանի տարածքով, ինչը թեև բացասական անդրադարձ է ունեցել, այնուամենայնիվ միանշանակորեն չի մերժվել:¹²⁸ Ի դեպ, 1993թ. Attila Doğan Petrol ընկերությունը և SOCAR-ը ստեղծեցին Anshad Petrol համատեղ ձեռնարկությունը, որը գործում է մինչ այժմ:

1992-1993թթ. Ղազախստանի ու Թուրքմենստանի հետ դեպի Թուրքիա կառուցվելիք նավթամուղի հարցով Անկարայի ակտիվ գործողությունների համատեքստում, BOTAS-ի ղեկավար Մ.Գյոքնելը Լոնդոնում հայտարարեց, թե իր ընկերությունը քննում է Ղազախստան-թուրքմենական նավթը Կրասնովոդսկից ստորջրյա խողովակաշարով մինչև Ադրբեջան և, ապա, Հայաստան-Նախիջևան-Թուրքիա երթուղով դեպի Եվրոպա կառուցվելիք նավթամուղի նախագիծը:¹²⁹

Վերլուծաբան Ֆրեդդի դը Փաուերը նույն շրջանի մասին գրել է հետևյալը. «Քանի որ նավթամուղը պետք է անցներ Հայաստանով, ապա ավելի քան երբևէ հարկ էր վերջ տալ հակամարտությանը Անդրկովկասում: Ուստի Թուրքիան ճնշում գործադրեց Էջիբեյի վրա թուրք-ռուսական խաղաղարար առաջարկը ընդունելու համար...1993թ. օգոստոսի 3-ին Թուրքիայի ԱԳՆ-ը, նավթամուղեր կառուցող BOTAS և նավթային TPAO ընկերությունները մամլո ասուլիսում հայտարարեցին Վրաստան-Թուրքիա երթուղուն նախապատվություն տալու մասին...քանի որ տարանցումը Հայաստանով այլևս աջակցություն չունի՝ տարածաշրջանում հայկական ռազմական գործողությունների անցկացման պատճառով»:¹³⁰

¹²⁸ TheWashingtonTimes, March 9, 1992, p. A 9.

¹²⁹ Е. Полухов, Контрактвека, Кавказские Региональные Исследования, том 2, Выпуск 1, 1997; Oil & Gas Journal, March 22, 1993, p.30.

¹³⁰ Фредди де Пауер, Политика Турции в Закавказье, Спорные границы на Кавказе: сб.ст. Москва: "Весь мир", 1996, стр.199-212

Այնուհանդերձ, ավելի ուշ, ԱՄՆ նախագահ Բ. Բիլինթոնը հայտարարեց, թե անհրաժեշտ է կառուցել առնվազն երկու մեծ խողովակաշար, որոնցից մեկը պետք է անցնի Հայաստանի տարածքով, ինչը միաժամանակ կնպաստեր Ղարաբաղյան հակամարտության լուծմանը:¹³¹ Որպես միջնորդներ հանդես եկան ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ս. Թելբորը, Մեծ Բրիտանիայի ու Գերմանիայի արտգործնախարարներ Մ. Ռիքֆինդը և Կ. Կինքելը, ինչպես նաև Փ. Գոբլը, սակայն նախագիծը հաջողություն չունեցավ տվյալ պահի ռազմաքաղաքական գործընթացների պայմաններում:

Իրանյան տարբերակ: 1993թ. մարտի 9-ին Անկարայում վարչապետ Ս. Դեմիրելը ու Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Ս. Բադիրովը ստորագրեցին համաձայնագիր Ադրբեջան-Թուրքիա նավթամուղի վերաբերյալ: Ըստ այդմ, նախատեսվում էր BOTAS-ի միջոցով կառուցել նոր խողովակաշար Ադրբեջանի և Ղազախստանի նավթը Բաքվից Իրան-Նախիջևան երթուղով մինչև թուրք-իրաքյան խողովակաշարը և, ապա, թուրքական Յումուրթալիք թերմինալային նավահանգիստը:¹³² Այնուհանդերձ, ինչպես վերն ասվեց, իրանյան տարբերակը Արևմուտքի համար անընդունելի էր առկա աշխարհաքաղաքական շահերի հակասության պատճառով:

Ռուսաստանյան տարբերակ: Ըստ էության, խոսքը ռուսաստանյան այլընտրանքի, այլ ոչ տարբերակի մասին էր: Արդեն նախքան նավթային կոնսորցիումի կազմում ռուսաստանյան LUKoil-ի ներգրավումը՝ Ռուսաստանը ջանում էր առաջին պլան մղելու գործող Բաքու-Գրոզնի-Նովոռոսիյսկ նավթամուղի տարբերակը: Առաջարկվում էր Նովոռոսիյսկից հումքը նավթատարներով փոխադրել Միջերկրական ծով՝ Բոսֆորի նեղուցով: AIOC –ը մերժեց այս առաջարկը հետևյալ պատճառներով:

Առաջնահերթ պատճառ անվանվեց անվտանգության հարցը: 1994թ. հետո նավթամուղի տարածքում սկսվեցին ռազմական հակամարտություններ (Չեչնիա, Դաղստան), ինչպես նաև պարբերական (հակա)ահաբեկչական գործողություններ, (Կաբարդինո-Բալկարիա, Կարաչաևո-Չերքեզիա):

¹³¹ Гусейнов В.А., Каспийская нефть. Экономика и геополитика., Олма-Пресс, Москва, 2002, стр.168.

¹³² Robins Philip, Between Sentiment and Self-Interest: Turkey's Policy Towards Azerbaijan and the Central Asian States' in Middle East Journal 47, No 4, Autumn 1993, p. 605.

Երկրորդ պատճառաբանությունը նավթի որակի խնդիրն էր: Ադրբեջանական բարձր մակնիշի նավթը նովոռոսիյսկյան նավթամուղի Տիխորեցկի հանգույցում խառնվելով ցածրորակ նավթի հետ՝ կստանար Urals մակնիշի կարգ, ինչը բացասաբար կանդրադառնար գնի վրա:

Երրորդ խնդիրը նավթը Բոսֆոր-Դարդանեղ նեղուցներով համաշխարհային շուկա հասցնելու երաշխիքի բացակայությունն էր: 1994թ. Թուրքիան միակողմանիորեն վերանայեց 1936թ. Մոնտրյոյի կոնվենցիան նեղուցների մասին՝ ընդունելով թուրքական նեղուցներով նավագնացության կարգավորման վերաբերյալ նոր օրենք, ինչն անհնարին դարձրեց նավթատարներով հումքի անարգել արտահանումը:

Վերջապես, նշյալ պատճառներից բացի ռուսաստանյան երթուղու այլընտրանքի համար առկա էր, թերևս գլխավոր մեկ այլ խոչընդոտ:

1998թ. ընդունված ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարություն փաստաթղթում Կասպիական տարածաշրջանը պաշտոնապես հայտարարվեց ԱՄՆ ազգային շահերի գոտի:¹³³ Այս հիմքով տարածաշրջանը ներառվեց ամերիկյան զինուժի ռազմական ծրագրերում: Մասնավորապես, ըստ «Միացյալ հրամանատարության ծրագրի» հարավկովկասյան երեք պետությունները 1998թ. հոկտեմբերի 1-ից ներառվեցին ԱՄՆ Եվրոպական հրամանատարության(USEVCOM) պատասխանատվության, իսկ Միջին Ասիան՝ ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության (USCENTCOM) գոտիներում: Միաժամանակ, նշյալ համատեքստում տեղի ունեցան փոխկապակցվող երկու գործընթաց.

ա) ռուսաստանյան ռազմակայանների դուրսբերում Կասպիական տարածաշրջանից և

բ) նոր ռազմաքաղաքական դաշինքների ձևավորում:

Առաջին գործընթացի արդյունքում 2001թ. հետխորհրդային այս տարածաշրջանում մնացին Գյումրիի ռուսաստանյան 102-րդ ռազմակայանը Հայաստանում, Գաբալինյան ռադիոտեղորոշիչ համակարգը Ադրբեջանում և Բայկոնուրի տիեզերակայանը Ղազախստանում: Երկրորդ գործընթացը, որի նախաձեռող կողմը Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելն էր, նպատակաուղղված էր

¹³³ A national security strategy for a new century, The White House, Oct. 1998, http://nssarchive.us/?page_id=66

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղային տարանցման մասնակից երկրների ռազմաքաղաքական դաշինքի ստեղծմանը, որը ստանում էր ԱՄՆ-ի աջակցությունը:

Այնուհանդերձ, Ռուսաստանը ևս փորձում էր քայլեր անել իր վերահսկողությանը ենթակա երթուղիներով Կասպիական նավթային պաշարների արտահանման վերաբերյալ իր շահերին համապատասխան որոշում կայացնելու համար: Նման քայլերից էին մասնակցությունը Կասպիական նավթամուղային կոնսորցիումի ստեղծումը, և Կասպիական ջրավազանի կարգավիճակի հարցի արձարծումը միջազգային ատյաններում:

Կասպիական նավթի արդյունաբերման ու արտահանման մասին պայմանագիրը կնքվել էր նախքան «Դարի պայմանագրի» ստորագրումը, և ուներ նույնքան, եթե ոչ ավելի, ռազմավարական նշանակություն: 1992թ. հուլիսի 17-ին Օմանի թագավորության Մասկաթ քաղաքում Oman Oil Company ու Ղազախստանի ներկայացուցիչները ստորագրեցին Կասպիական նավթամուղային կոնսորցիում(Caspian Pipeline Consortium Limited) ստեղծելու մասին պայմանագիրը, որին մեկ ամիս անց միացավ Ռուսաստանը, իսկ հետագայում՝ նաև խոշորագույն Chevron, Shell, ExxonMobil, Eni, British Gas, LUKoil և Роснефть միջազգային ընկերությունները: Ըստ պայմանագրի, նախատեսվում էր կառուցել Ղազախստան(Թենգիզ)-Նովոռոսիյսկ նավթամուղը: Ուշագրավ է, որ այս գործարքը, ինչպես ադրբեջանական նավթահանքերի պարագայում, սկսվել էր 1988թ. ԽՍՀՄ նավթարդյունաբերության և Chevron ընկերության միջև ղազախական Թենգիզ հանքավայրի մասին համաձայնագրով՝ առանց Ղազախական ԽՍՀ մասնակցության:¹³⁴ Նույն կերպ անցկացվել էր մրցույթ, որի հաղթող ճանաչվել էր Chevron-ը, և այդ հարցում գործուն մասնակցություն է ունեցել ԽՍՀՄ ԱԳՆ ղեկավար Է. Շևարդնաձեն:¹³⁵ 1990-91թթ. հետո, ինչպես և Ադրբեջանը, բանակցող կողմ դարձել էր նորանկախ Ղազախստանը, որի շահերը ներկայացրել են նախագահ Ն. Նազարբաևի էներգետիկայի հարցերով խորհրդական ամերիկյան գործարար Ջեյմս Գիֆենը ու օֆշորային Բրիտանական Վիրգինյան կղզիներում գրանցված Oman Oil Company

¹³⁴ Деловая неделя, 29 мая 1998 года, № 21

¹³⁵ Фредди де Пауер, Политика Турции в Закавказье, Спорные границы на Кавказе: сб.ст. Москва: Весь мир, 1996, стр.199-212.

ղեկավար հոլանդացի Ջոն Դոյսը: Վերջինը, ի դեպ, ԽՍՀՄ նավթային ոլորտի գերատեսչությունների պատասխանատուների հետ համագործակցել է դեռևս 1977 թվականից, ունեցել սերտ հարաբերություններ Վ. Չեռնոմիրդինի՝ ՌԴ ապագա վարչապետի հետ:¹³⁶

Կոնսորցիումի անդամ ընկերությունները խողովակաշարի չորս՝ վրացական, թուրքական, իրանական ու ռուսաստանյան երթուղիների տարբերակներից նախընտրում են վերջինը: Հատկանշական է ԱՄՆ կառավարության եւ ամերիկյան նավթային ընկերությունների միջեւ դիմակայությունը սույն հարցում: Այսպես, 1998թ. հոկտեմբերի 22-ին Թենզիզ-Ջեյհան նավթամուղը կառուցելու օրակարգով նավթային ընկերությունների ներկայացուցիչների ու Ազգային անվտանգության հարցերով նախագահի օգնական Սեմյուել Բերգերի հետ հանդիպումից երկու օր առաջ, Chevron-ի վարչության նախագահ Քեննեթ Դերրը հայտարարեց, թե չի կարող մասնակցել հանդիպմանը, սակայն գրավոր կհայտնի իրենց նախընտրանքի, այն է՝ Թենզիզ-Նովոռոսիյսկ երթուղու մասին՝ տնտեսական տեսանկյունից որպես առավել շահավետ նախագիծ:¹³⁷ Թենզիզ-Նովոռոսիյսկ խողովակաշարը կառուցվեց 1999թ., արդեն 2010թ. արտահանվում էր տարեկան 35 մլն տոննա նավթ, իսկ 2015թ. նախատեսված է արդյունահանել մինչև 50 մլն տոննա նավթ:¹³⁸

«Դարի պայմանագրի» ստորագրմանը հաջորդեցին Ռուսաստանի դիվանագիտական դեմարշները: 1994թ. հոկտեմբերի 5-ին ՌԴ ԱԳՆ-ը ՄԱԿ գլխավոր քարտուղարին ուղարկում է նամակ, որում մասնավորապես ասվում էր. «Կասպից ծովին սահմանակից ոչ մի պետություն չի կարող միակողմանիորեն հավակնություններ ներկայացնել ծովի բնական ռեսուրսների նկատմամբ: Կասպիական որևէ պետության կողմից պետական պահանջների ներկայացումը ծովի և նրա բնական ռեսուրսների նկատմամբ անխուսափելիորեն վերաբերում է կասպյան մյուս պետությունների իրավունքներին և շահերին, ուստի չի կարող համարվել օրինական»:¹³⁹

¹³⁶ Известия, 24 февраля 1995, №36 (24395)

¹³⁷ Известия, 22 октября 1998

¹³⁸ <http://www.cpc.ru/RU/about/Pages/chronology.aspx>

¹³⁹ N.Sagheb and M. Javadi, "Azerbaijan's "Contract of the Century" Finally Signed with Western Oil Consortium, Azerbaijan International, Winter 1994 (2.4), p. 28.

Որպես իրավական հիմք Ռուսաստանը վկայակոչում է 1921թ. փետրվարի 26-ին և 1940թ. մարտի 25-ին կնքված սովետա-իրանական համաձայնագրերը՝ հանդիսանալով ԽՍՀՄ միակ իրավահաջորդը: Ըստ 1921թ. «Բարեկամության և համագործակցության մասին» սովետա-պարսկական համաձայնագրի 11-րդ հոդվածի, միայն նշյալ կողմերը իրավունք ունեն հավասարապես օգտվել Կասպից ծովում ազատ նավարկության սկզբունքից:¹⁴⁰ Վեցերորդ հոդվածի համաձայն, Ռուսաստանը իրավունք է ստանում զորքեր մտցնել Իրան, եթե որևէ երրորդ պետություն փորձի օգտագործել Իրանի տարածքը՝ որպես հենակետ, սահմանն անցնելու և Ռուսաստանի կամ նրա դաշնակիցների դեմ ռազմական գործողություններ սկսելու նպատակով:¹⁴¹ Ըստ 7-րդ հոդվածի, եթե իրանական նավատորմի կազմում կլինեն երրորդ պետության քաղաքացիներ, որոնք իրենց ներկայությունը նավատորմում կօգտագործեն Ռուսաստանի նկատմամբ ոչ բարյացակամ նպատակներով, Ռուսաստանի կառավարությունը իրավունք կունենա Իրանից պահանջելու արտաքսել վերոնշյալ վնասակար տարրերին:¹⁴² Այս հոդվածը փաստորեն արգելում է երրորդ պետության ծովայինների մուտքը Կասպից ծով:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին Ռուսաստանի կողմից հասցեագրված նամակում վկայակոչվող մեկ այլ՝ 1940թ. սովետա-իրանական պայմանագրի համաձայն, միայն երկու պետություններին (ԽՍՀՄ և Իրան) պատկանող նավերը իրավունք ունեն նավարկելու Կասպից ծովում, իսկ այդ նավերում և նավահանգիստներում աշխատող օտարերկրյա անձնակազմը պետք է սահմանափակի իր գործունեությունը համաձայնագրերով սահմանված շրջանակներում:¹⁴³

Հարկ է նշել, որ 1991թ. դեկտեմբերի 21-ին, որպես ԱՊՀ մասնակից պետություններ, ստորագրելով Ալմա-Աթայի հռչակագիրը՝ Ադրբեջանը, Ղազախստանը, ՌԴ-ն ու Թուրքմենստանը հաստատել են այս պայմանագրերի իրավասությունը: Այնուհանդերձ, 1990-ականների սկզբին առաջ քաշվեց Կասպից

¹⁴⁰ Документы внешней политики СССР. Т. III. Москва, 1959, стр. 538.

¹⁴¹ Տես՝ նույն տեղում

¹⁴² Տես՝ նույն տեղում

¹⁴³ Рустам Мамедов, “Международно-правовой статус Каспийского море:вчера, сегодня, завтра (теории и практики)”, “Кавказ и Центральная Азия”, CA&CC Press, Швеция, <http://www.ca-c.org/journal/cac-08-2000/24.mamedov.shtml>.

ծովի կարգավիճակի հարցը, ինչի շուրջ ձևավորվեցին երկու տարբեր մոտեցումներ: Նախ, խնդրի էության մասին:

Որևէ ջրավազանի կարգավիճակը որոշվում է ըստ ՄԱԿ-ի ծովային իրավունքի կոնվենցիայի, համաձայն որի «ծով» կամ «լիճ» սահմանումը այդ ջրավազանին տրվում է Համաշխարհային օվկիանոսի հետ, այն է՝ բնական ջրային ուղիներով(ծով, նեղուց) հարաբերակցության բնույթով: Ի դեպ, գետերը ու արհեստական ջրանցքները միջազգային իրավունքի օբյեկտ չեն համարվում: Ըստ այդմ, Կասպիականը չի կապվում Համաշխարհային օվկիանոսին անմիջականորեն(բաց ծով), մեկ այլ ծովի(կիսափակ ծով) կամ նեղուցի(փակ ծով) միջոցով, ուստի կարող է համարվել լիճ: Այնուհանդերձ, ի՞նչ առնչություն ունի Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը նավթային պաշարների խնդրի հետ:

Բանն այն է, որ ծովի կարգավիճակ ստանալու դեպքում, Կասպիական ջրավազանի վերաբերմամբ կգործեն 1982 թ. ՄԱԿ-ի ծովային իրավունքի կոնվենցիայի համապատասխան հոդվածները: Նախ դա կնշանակի, որ մերձկասպյան պետություններն ինքնիշխան իրավունք կստանան առափնյա 12 մղոն տարածքային ջրերի և 200 մղոն բացառապես տնտեսական ջրային տարածքի նկատմամբ:¹⁴⁴ Եվ քանի որ Կասպից ծովի լայնքը 200 մղոնից ավելի չէ, ապա տնտեսական ջրային տարածքի սահմանները կորոշվեն բացառապես միջնագծով: Բացի այդ, նշյալ ջրային տարածքում ծովային ու օդային ներկայության ու գործունեության(բացի ռազմական կարգի) իրավունք են ստանում երրորդ երկրները ևս: ՌԴ-ի, Իրանի ու Թուրքմենստանի տեսակետով, Կասպից ծովը համընդհանուր օգտագործման ջրավազան է մերձկասպյան երկրների համար, նրա պաշարները պետք է բաժանվեն ծովափնյա բոլոր պետությունների միջև, և Կասպիցը «փակ» ծով է երրորդ երկրների համար: Իրանը շահագրգռված էր Կասպից ծովում status quo-ի պահպանմամբ, քանի որ, ինչպես գրում է Կ. Մալեքին՝ «Բաքուն բացել է դարպասները արևմտյան պետությունների ներթափանցման առջև, և առաջիկայում Ադրբեջանում կիշխեն ԱՄՆ-ի, Անգլիայի, Թուրքիայի և մի քանի այլ պետությունների շահերը»:¹⁴⁵ Դա հակասում է

¹⁴⁴ Конвенция Организации Объединенных Наций по морскому праву, Монтего-Бей, 10 декабря 1982 г., ст. 55, 76-77.

¹⁴⁵ Տես՝ նույն տեղում:

իրանի շահերին, որի համար Ռուսաստանը դառնում է աշխարհաքաղաքական դաշնակից, իսկ «Կասպից ծովը՝ ռուս-իրանական համագործակցության առանցքը»:¹⁴⁶

Լիճը, ի տարբերություն ծովի, առափնյա պետությունների ինքնիշխան տարածք է, ուր չեն գործում միջազգային օրենքները ըստ ներքին գործերին չմիջամտելու սկզբունքի: Սահմանային լճի իրավական կարգը հաստատվում է բացառապես ծովափնյա պետությունների միջև պայմանագրերով: Ադրբեջանը կտրականապես մերժելով Կասպիցի համատեղ օգտագործման սկզբունքը, առաջարկեց իրավական ասպարեզում, այսպես կոչված, «ազգային հատվածի» հասկացությունը, որով ծովի հատակը, ջրային շերտը ու ծովի վրայի օդային տարածքի նկատմամբ ծովափնյա պետությունը ստանում է ինքնիշխան իրավունքներ: Ուշագրավ է, որ Ադրբեջանը մի կողմից հայտարարելով, թե ԽՍՀՄ վերացմամբ այլևս իրավական ուժը կորցրած պետք է համարել այդ պետության կողմից ստորագրված օրենքները, մյուս կողմից հղումներ է անում նույն այդ պետության օրենքներին:¹⁴⁷ Խոսքը, մասնավորապես, մեր կողմից արդեն հիշատակված(տես՝ Գլուխ1) 1991թ. հունվարի 18-ին ԽՍՀՄ նավթարդյունաբերության մինիստրության ու Ադրբեջանական ԽՍՀ մինիստրների խորհրդի համատեղ որոշման մասին է, ըստ որի Ադրբեջանն իրավունք էր ստանում արդյունահանել Կասպիականի հանքային պաշարները՝ համաձայն խորհրդային չորս հանրապետությունների միջև գծված վարչատարածքային սահմանների(հատվածների) միջնագծով: Մինչդեռ, ԽՍՀՄ հանրապետությունների միջև սահմանները, այս դեպքում նշյալ ծովային վարչատարածքային բաժանումները չունեին միջպետական իրավական հիմքեր, այլ միայն՝ ժողովրդատնտեսական նշանակություն:¹⁴⁸ Հետևաբար, Ադրբեջանը Կասպիականը «ազգային հատվածի» բաժանման դեպքում ստանում է հանքային պաշարների առավել մեծ մասնաբաժինը: Միևնույն ժամանակ, այդ երկիրը դառնում է միակ կասպյան պետությունը, որը պահպանում է ընդհանուր սահմանները մյուս ծովափնյա պետությունների հետ:

Այնուհանդերձ, չնայած առերևույթ իրավական այս վեճին, Ադրբեջանն ու Ղազախստանը փաստացիորեն սկսում են Կասպիականի բաժանումը ըստ «ազգային

¹⁴⁶ “Iranian Parliamentary Speaker in Moscow,” RFE/RL Newsline, Vol. 1, No. 9, Part I, 11 April 1997.

¹⁴⁷ Бутаев А.М. Каспий: море или озеро? Махачкала, 1998, стр. 9.

¹⁴⁸ Նույնը, էջ 15:

հատվածների», դա ամրագրելով իրավական փաստաթղթերում. Ադրբեջանը՝ իր 1995թ. սահմանադրությամբ, Ղազախստանը՝ «Կասպից ծովի ղազախական բաժնի նավթագազային պաշարների գնահատականի հարցով Միջազգային կոնսորցիումի մասին» նախագահի թիվ 1517 և «Նավթի մասին» թիվ 2350 հրամանագրերով:¹⁴⁹

Ըստ փորձագետների, մասնակցելով Կասպից ծովի նավթագազային պաշարների արդյունահանման միջազգային նախագծերին և ստորագրելով համապատասխան փաստաթղթեր(նաև «Դարի պայմանագիրը»), Ռուսաստանն ինքն անուղղակիորեն ճանաչում է Կասպից ծովը «ազգային հատվածների» բաժանելու սկզբունքը:¹⁵⁰

Ի վերջո, հաշվի առնելով «Դարի պայմանագիր» կոչվող գործարքի ռազմավարական ու գործառնության նշանակությունը՝ AIOC կոնսորցիումը արդյունավետ չէր համարում ռուսաստանյան երթուղու տարբերակը:

Թուրքական տարբերակ: Քաղաքական տեսանկյունից թուրքական Ջեյհան թերմինալի ընտրությունը՝ որպես կասպյան նավթի վերջնակետային երթուղի, կանխորոշված էր ի սկզբանե: Ասվածի ապացույցն է 1993թ. մարտի 9-ին Անկարայում երկու երկրների միջև ստորագրված(Ս. Դեմիրել-Ս. Բադիրով) համաձայնագիրը Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցման մասին: Շինարարությունը իրականացնելու էր թուրքական Botas-ը, որին այդ նպատակով 1996թ. Համաշխարհային բանկը հատկացնում է 12.5 մլն. դոլար: Խնդիրը միայն նավթամուղի առավել անվտանգ երթուղու ճշտումն էր, հնարավոր սպառնալիքների չեզոքացումը և տնտեսական շահավետության ապահովման հեռանկարը:

Botas-ի ու Համաշխարհային բանկի կողմից կատարվեց երթուղու տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը ու կազմվեց առավել արդյունավետ երթուղու նախագիծը:

Թիվ մեկ սպառնալիքը՝ նավթամուղի տարածքում Քրդական բանվորական կուսակցության հնարավոր խափանարար գործողությունները, չեզոքացվեցին 1999թ. ՔԲԿ առաջնորդ Ա. Օջալանի ձերբակալությամբ: Նրան մահապատժի ենթարկելու

¹⁴⁹ http://kazakhstan.news-city.info/docs/sistemi/dok_perbhb.htm

http://online.zakon.kz/Document/?doc_id=3103801&mode=p

¹⁵⁰ Бутаев А.М. Каспий: море или озеро? Махачкала, 1998, стр.18-19

սպառնալիքով՝ ՔԲԿ-ն զինադադար հաստատեց, և դեկտեմբերին ջոկատները հեռացվեցին Իրաքի տարածք:

1998թ. ԱՄՆ ղեկավարությունը հայտարարեց Բաքու-Ջեյհան նավթամուղը որպես Կասպյան ավազանի նավթի տարանցման փոխադրամիջոց, ինչը արմատապես փոխեց տնտեսական շահավետության գործակիցը, հետևաբար՝ նավթային ընկերությունների շահագրգռվածության աստիճանը: Արդյունքում, նախ 1998թ. հոկտեմբերի 22-ին Թենգիզ-Ջեյհան նավթամուղը կառուցելու օրակարգով, վերջինները, Ազգային անվտանգության հարցերով նախագահի օգնական Սեմյուել Բերգերի հետ հանդիպումից հետո, համաձայնեցին մասնակցել նախագծին, ապա հոկտեմբերի 29-ին Անկարայում Թուրքիան, Ադրբեջանը, Վրաստանը, Ղազախստանը և Ուզբեկստանը ստորագրեցին հռչակագիր՝ կասպյան ավազանի ու Միջինասիական նավթը Բաքու-Ջեյհան նավթամուղով համաշխարհային շուկաներ հասցնելու մասին: 1999թ. նոյեմբերի 18-ին Ստամբուլում ստորագրվեց Ակտաու(Ղազախստան)-Բաքու և Բաքու-Ջեյհան նախագծերի փաթեթային համաձայնագիրը՝ այս անգամ նաև ԱՄՆ մասնակցությամբ:

Այսպիսով, «Դարի պայմանագրի» շրջանակներում նախ գործարկվեց Բաքու-Սուփսա խողովակաշարը(1999թ.), ապա կառուցվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան(2005թ.) նավթամուղը, ինչպես նաև Բաքու-Թբիլիսի-Էրզրում(2006թ.) գազատարը: Հարկ է նշել, սակայն, որ Ռուսաստանի տարածքով նավթի առավել փոքր ծավալով փոխադրումը ևս շարունակվեց՝ օգտագործելով դեպի Նովոռոսիյսկի նավահանգիստը անցնող նավթամուղը:

Եվ այսպես, ակնհայտ է, որ «Դարի պայմանագիրը» էներգա-տնտեսական գործարք լինելուց զատ, գլխավորապես աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական կարևորագույն նշանակության նախագիծ էր: Դա, ըստ էության, Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններում, նաև արտաքին ու ներքին քաղաքականության ոլորտներում, ուղղորդող հիմնական գործոնն է, ինչը կանխորոշում է այդ երկրների տեղն ու դերն Արևմուտքի ծրագրերում: Դեռևս 19-րդ դարում Standart Oil –ի հիմնադիր Ջոն Ռոկֆելերն ասել էր, թե «ով վերահսկում է

նավթային փոխադրամիջոցները՝ նրա ձեռքերում են և՛ նավթի արդյունահանումն ու մշակումը և՛ աշխարհաքաղաքականությունը»:

Անդրադառնալով Թուրքիայի հետ հարաբերություններին, անհրաժեշտ է նշել նաև խնդիրներն ու լարվածության ժամանակաշրջանները: Այդ համատեքստում առավել նշանակալից են 1995թ. Ադրբեջանում տեղի ունեցած այսպես կոչված «մարտյան իրադարձությունները»: Դա հայտնի է որպես Ադրբեջանի ՆԳՆ Ոստիկանության հատուկ նշանակության ջոկատներ (ՈՀՆՋ) զորամիավորման ղեկավար Ռովշան Ջավադովի կողմից կազմակերպված հեղաշրջման փորձ Հ. Ալիևի վարչակարգի դեմ, և նշանակալից տեղ է գրավում Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում: Հիմնականում առկա են հետևյալ տեսակետները.

ա) հեղաշրջման փորձը կազմակերպված էր թուրքական հատուկ ծառայությունների կողմից,

բ) հեղաշրջումը զգալիորեն խաթարեց թուրք-ադրբեջանական հարաբերությունների զարգացման կայուն դինամիկան:

Այդուհանդերձ, հաշվի առնելով այդ իրադարձությունների կարևորությունը ատենախոսության թեմայի ուսումնասիրման տեսակետից, և դրանց վերաբերյալ հստակ ապացույցների բացակայությունը, գոյություն ունեցող մի քանի տարբեր մոտեցումներն ու մեկնաբանությունները, ինչպես նաև շահերի հակասությունները՝ հարկ ենք համարում ստորև ներկայացնել դրանք՝ դիտարկելով թուրք-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում:

Ըստ առավել տարածված վարկածի, որը շարադրված է ականատես, ամերիկացի լրագրող Թոմաս Գոլցի մոտ, 1995թ. իրադարձություններն ունեցել են հետևյալ ընթացքը.¹⁵¹ Ռովշան Ջավադովը, դժգոհ լինելով Հ. Ալիևի վարած քաղաքականությունից և ունենալով բավականին մեծ հավակնություններ՝ 1995թ. մարտին բացահայտորեն հակաալիևյան հայտարարություններ է անում, զուգահեռաբար Ղազախից Բաքու տեղափոխելով իր վերահսկողության ներքո գտնվող ՆԳՆ ոստիկանության հատուկ նշանակության ջոկատները(ՈՀՆՋ) և գրավելով Շահումյանի զորանոցը: Հ. Ալիևը կոչ է անում ապստամբներին վայր դնել զենքերը՝

¹⁵¹ T. Goltz, “Azerbaijan Diary”, Armonk, New York, 1998, p. 451.

կողմերին խաղաղ պայմաններում բանակցելու համար տրամադրելով 48 ժամ: Սակայն, չանցած 24 ժամ, Ալիևը կառավարական գործերին հարձակման հրաման է տալիս: Շահումյանի գորանոցը շրջապատվում է, և կարճ ժամանակում վերջ է տրվում ՈՀՆՁ -ի հեղաշրջման փորձին: Ավելի քան 80 ՈՀՆՁ զինյալներ զոհվում են՝ նրանց շարքում Ռոպշան Ջավադովը, ով մահանում է արյունահոսությունից հիվանդանոցի ճանապարհին /ըստ այլ տվյալների՝ հիվանդանոցում/: Հեղաշրջման կազմակերպման մեջ մեղադրվում են թուրքական հատուկ ծառայությունները, որոնք համագործակցում էին Ադրբեջանի «Գորշ Գայլեր» կազմակերպության հետ: Դրան հաջորդում է Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Ալթան Քահրամանօղլուի, թուրք խորհրդականների, գործարարների և անգամ ուսանողների հարկադրված վերադարձը Թուրքիա: Ձերբակալվում է նաև Ադրբեջանի «Գորշ գայլերի» ղեկավար, նախկին ներքին գործերի նախարար Իսկենդեր Համիդովը:¹⁵²

Այս համատեքստում ուշագրավ են Բաքվի համալսարանի թուրք պրոֆեսոր, Էլչիրեյի խորհրդական և Ռ. Ջավադովի հետ սերտ կապեր ունեցած Ֆերման Դեմիրքուլի և Ադրբեջանում Թուրքիայի դեսպանատան աշխատակից Թուրգուֆ Էրի հիշատակումները՝ կապված «մարտյան իրադարձությունների» հետ: Ուշագրավ է, թե ինչպես է Դեմիրքուլը ներկայացնում Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի, վարչապետ Թանսու Չիլերի, Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Ալթան Քահրամանօղլուի վերաբերմունքը նախապատրաստվող հեղաշրջմանը: Կարդալով Դեմիրքուլի հիշատակումները, կարելի է եզրակացնել, որ չկար միասնություն պաշտոնական Անկարայի և Ադրբեջանում Թուրքիայի դեսպանատան որոշ աշխատակիցների որոշումների միջև: Դեմիրքուլը, Քենան Գյուրելը և այլք, չանսալով Անկարայի հրահանգներին, այնուամենայնիվ սատարում են Ջավադովին՝ ընդդեմ Հ. Ալիևի: Ըստ երևույթին, Թուրքիայի ղեկավարությանը ձեռնադր էր իրադարձությունների զարգացման նման տարբերակը: Ըստ Դեմիրքուլի, ակնհայտ տարաձայնություններ կային թուրքական պետության քաղաքական ղեկավարության և ԱԺԾ-ին ու ծայրահեղ ազգայնական «Գորշ գայլեր» կազմակերպությանը սատարող MIT-ի միջև: Ի տարբերություն առաջին ուժի, որն ամեն գնով ջանում էր ամրապնդել Հ. Ալիևի

¹⁵² T. de Vaal, “BlackGarden: Armenia and Azerbaijan through Peace and War”, New York, 2003, p. 252.

իշխանությունը, երկրորդ, ուժը ցանկանում էր իշխանության վերադարձնել իր համախոհներին՝ ի դեմ ԱԺԾ-ի և ադրբեջանական «Գորշ գայլերի»։ Այս համատեքստում վերջիններիս համար համապատասխան թեկնածու էր դիտվում Ռովշան Զավադովը, ով «Ղարաբաղում հերոսաբար կռվող, հայրենիքին վերին աստիճանի նվիրված»¹⁵³, «Թուրքիային ծառայելու պատրաստ»¹⁵⁴ անձնավորություն էր։ Դեմիրքովը քանիցս իր գրքում նշում է, որ ցանկանում էր տեսնել Զավադովին գոնե Պաշտպանության նախարարի պաշտոնում, ինչի առաջարկով և դիմել են Հ.Ալիևին, սակայն՝ ապարդյուն։ Նա մանրամասնորեն նկարագրել է Հ. Ալիևի և Զավադովի միջև «կամուրջ» հանդիսանալու իր միջնորդական ջանքերի մասին, որոնք սակայն ևս արդյունք չեն տվել։ Պաշտոնական Անկարան, ըստ Դեմիրքովի, բազմիցս մատնանշել է Ռ. Զավադովի քուրդ, և այդ իսկ պատճառով՝ անվստահելի լինելը¹⁵⁵, որը սակայն չի ազդել Դեմիրքովի վերաբերմունքի և որոշումների վրա։ Նա Ռ. Զավադովի և Ա. Մուֆալիբովի ներկայացուցչի հետ քննարկել է, թե Հ. Ալիևի պաշտոնանկությունից հետո ո՞վ է ստանձնելու պետության նախագահի պարտականությունները։ Դեմիրքովը պնդում է, որ այդ պաշտոնը պետք է վերադարձվեր Էլչիբեյին, իսկ չորս փոխնախագահներից երկուսը կլինեին՝ Ա. Մուֆալիբովը և Ռ. Զավադովը։ Երրորդ փոխնախագահի պաշտոնում Ռ. Զավադովն առաջարկում է Ֆ. Դեմիրքովին, ով, իր իսկ հավաստմամբ, գերադասում էր նախագահի խորհրդական լինելը¹⁵⁶։ Ա. Մուֆալիբովը չի համաձայնել այդ առաջարկին և որոշել է չմասնակցել կազմակերպվող հեղաշրջմանը։¹⁵⁷

Զուգահեռաբար, Էլչիբեյը նամակ է ուղարկել Ռ. Զավադովին՝ առաջարկելով իր աջակցությունը¹⁵⁸։ Զավադովի ու Գյուրեվի որոշմամբ, 1995թ. փետրվարի վերջին Դեմիրքովը գաղտնի մեկնել է Նախիջևան՝ անձամբ հանդիպելու Էլչիբեյի հետ։ Արդյունքում հակալիկյան շարժմանը աջակցելու նպատակով Էլչիբեյը խոստացել է նամակներ ուղարկել ԱԺԾ անդամներին, բողոքի ցույցեր կազմակերպել

¹⁵³ F. Demirkol, “Diktatörleriuykututmaz”, Istanbul, 2002, s.98.

¹⁵⁴ Տես՝ նույն տեղում, էջ 151:

¹⁵⁵ Տես՝ նույն տեղում, էջ 112:

¹⁵⁶ Տես՝ նույն տեղում, էջ 117-118:

¹⁵⁷ Տես՝ նույն տեղում, էջ 119:

¹⁵⁸ Տես՝ նույն տեղում, էջ 120:

Նախիջևանում՝ ինքնավարությունն իրենց վերահսկողության տակ առնելու համար:¹⁵⁹ Դեմիրքոլը, վերադառնալով Բաքու, ներկայացել է Թուրքիայի դեսպանատուն, որտեղ դեսպան Ա. Քահրամանօղլուն զգուշացրել է նրան, որ Թուրքիայից իրեն տեղեկացրել են Դեմիրքոլի ու Էլչիբեյի հանդիպման մասին: Նա հայտնել է, որ իրենց հիմնական նպատակը նավթային պայմանագրով 5% բաժնեմաս ստանալն է Թուրքիայի համար:¹⁶⁰ Շեշտվել է, որ այդ իսկ պատճառով Հ. Ալիևը պետք է շարունակի պաշտոնավարել, ուստի «եթե Ջավադովը շարժում կազմակերպելու միտք ունի՝ թող հրաժարվի դրանից»:¹⁶¹ Այնուհետև դեսպանին է զանգահարել Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլերը՝ Հ. Ալիևի հետ ուղիղ հեռախոսակապ հաստատելու նպատակով: Դեմիրքոլի այն հարցին, թե արդյո՞ք Քահրամանօղլուն տեղյակ է Չիլերի և Ալիևի զրույցի բովանդակությունից, դեսպանը պատասխանել է, թե Չիլերը Հ. Ալիևին ասել է. «Իմացեք, որ Ադրբեջանի ընդդիմությունը Ձեր դեմ շարժում է պատրաստում: Դեսպան Քահրամանօղլուն, Ձեզ մոտ գալով, առանձին տեղեկություն կհաղորդի»:¹⁶² Ի պատասխան, Դեմիրքոլն ասել է, որ Ադրբեջանի ներքին հարցերը չպետք է հետաքրքրեն Թուրքիային¹⁶³: Ըստ Դեմիրքոլի, այս զրույցը տեղի է ունեցել 1995թ. մարտի 1-ին: Իր հերթին Էլչիբեյը, իմանալով, որ պաշտոնական Անկարան չի սատարելու Ջավադովին, որոշում է ոչինչ չնախաձեռնել, սակայն իր այդ որոշման մասին չի տեղեկացնում ո՛չ Ջավադովին և ո՛չ Դեմիրքոլին:¹⁶⁴

1995թ. մարտի 16-ին, ԱԾԿ /MHP/ անունից Բաքու է ժամանում Կայսերիի պատգամավոր Մուստաֆա Դադջըն՝ «Բաքվում տիրող իրավիճակն իմանալու համար»:¹⁶⁵ Թուրքիայի դեսպանի, ինչպես նաև Դեմիրքոլի հետ, հանդիպումներում, վերջինը նրան ևս հորդորում է «չմիջամտել Ադրբեջանի ներքին խնդիրներին»:¹⁶⁶ ՈՀԼԶ-ի շտաբում Ռ. Ջավադովի հետ հանդիպումից հետո, Դադջըն զանգահարում է

¹⁵⁹ F. Demirkol, "Diktatörleriuykututmaz", Istanbul, 2002, s. 131.

¹⁶⁰ Տես՝ նույն տեղում, էջ 132-33.

¹⁶¹ Տես՝ նույն տեղում, էջ 135.

¹⁶² Տես՝ նույն տեղում, էջ 134-135:

¹⁶³ Տես՝ նույն տեղում, էջ 135:

¹⁶⁴ Տես՝ նույն տեղում, էջ 137:

¹⁶⁵ Տես՝ նույն տեղում, էջ 155:

¹⁶⁶ Տես՝ նույն տեղում:

Թուրքիա՝ Ալ. Թյուրքեշին կամ Ռիզա Մուֆթիօղլուին /ըստ Դեմիրքոլի/ և տեղեկացնում, որ Բաքվում դրությունը շատ լարված է¹⁶⁷:

Ուշագրավ են Դեմիրքոլի տեղեկությունները Ջավադովի զոհվելուց մի քանի ժամ առաջ նրա, Քահրամանօղլուի և Ալիևի հետ ունեցած հեռախոսազրույցի մասին:¹⁶⁸ Ըստ այդմ, Ջավադովը զանգահարել է Քահրամանօղլուին և ասել, որ ՈՀՆՋ զինյալները վայր են դրել զենքերը և պատրաստ են բանակցելու Ալիևի հետ: Քահրամանօղլուն զուգահեռաբար զանգահարել է Ալիևին և հաղորդել Ջավադովի խոսքերը, որին ի պատասխան Ալիևը խոստացել է դադարեցնել գործողությունը, սակայն սպիտակ դրոշ բարձրացնելու պայմանով: Որոշ ժամանակ անց Ջավադովը կրկին զանգել է Թուրքիայի դեսպանին և ասել, թե կառավարական զորքերն անդադար կրակում են՝ հնարավորություն չտալով անգամ սպիտակ դրոշ պարզելու: Քահրամանօղլուի այս հաղորդմանը Ալիևը պատասխանել է. «Եթե ուզենան՝ կկարողանան սպիտակ դրոշ բարձրացնել» և դադարեցրել հեռախոսակապը: Դրանից հետո, ԱՄՆ դեսպանի հավաստմամբ, այնուամենայնիվ մի սպիտակ սավան է օդ բարձրացվել, սակայն Ալիևի հրամանով շարունակվել է սպանդը:¹⁶⁹

Այսպիսով, ամբողջացնելով պատկերը, Դեմիրքոլը պնդում է, որ Ռ. Ջավադովի հեղաշրջման փորձի տապալման հիմնական պատճառը պաշտոնական Անկարայի աջակցությունն էր Հ. Ալիևին:

Նշենք, որ հատուկ ուշադրության են արժանի Դեմիրքոլի հուշերում մանրամասնորեն նկարագրված այն հատվածները, որոնք ևս մեկ անգամ ապացուցում են Թուրքիայի ներկայությունը Ադրբեջանի քաղաքական գրեթե բոլոր մակարդակներում, թուրքական հատուկ ծառայությունների դերն ու դիրքը նորանկախ Ադրբեջանում:

Դեմիրքոլի հիշատակումներին զուգահեռ, ուշագրավ է դիտարկել Ադրբեջանում Թուրքիայի դեսպանատան մամլո խոսնակ / 1993-2001/ Թուրգուֆ Էրի ներկայացրած փաստերը, որոնք շարադրված են նրա «Ազատությունից՝ բռնապետություն» գրքում: Այսպես, Թուրգուֆ Էրը, չժխտելով թուրքական հատուկ ծառայությունների

¹⁶⁷ F. Demirkol, "Diktatörleriuykututmaz", Istanbul, 2002, s.155.

¹⁶⁸ Տես՝ նույն տեղում, էջ 161-163:

¹⁶⁹ Տես՝ նույն տեղում, էջ 163:

աջակցությունը Ռ. Ջավադովին, հիմնականում մեղադրում է Հ. Ալիևին: Ըստ նրա, ՈՀՆՁ գինյալների մի քանի քրեական շարքային գործողությունները Ալիևն անվանեց «հեղաշրջման փորձ» և հաշվեհարդար կատարեց բավականին մեծ հեղինակություն ու հավակնությունների տեր հնարավոր մրցակցի՝ Ռ. Ջավադովի հետ: Նա ներկայացնում է Թուրքիայի դեսպան Ալթան Քահրամանօղլուի «պատմական դերը»¹⁷⁰ Ռ. Ջավադովի և Հ. Ալիևի միջև միջնորդ հանդիսանալու գործում, դեսպանի ջանքերը նրանց միջև տարածայնությունները խաղաղությամբ հարթելու համար: Էրը չի ժխտում, որ Թուրքիան համակրել և սատարել է Ջավադովին: Նա ևս հաստատել է, որ Քահրամանօղլուն դիմել է Հ. Ալիևին՝ Պաշտպանության նախարարի կամ առնվազն փոխնախարարի պաշտոնում Ջավադովին նշանակելու առաջարկով, սակայն մերժվել է: Եվ այդուհանդերձ, Էրը, առաջ քաշելով թուրքական պաշտոնական վարկածը, պնդում է, որ չնայած Քահրամանօղլուն և Ջավադովը ընկերներ էին, սակայն դեսպանը ոչ մի կապ չի ունեցել հեղաշրջման կազմակերպման հետ: Այնուհետև հավելում է, որ Ադրբեջանը Թուրքիային մեղադրեց Ջավադովին սատարելու և հեղաշրջման փորձ կատարելու մեջ Ֆերման Դեմիրքուլի, Քենան Գյուրելի և Էրթուղրուլ Գյուլենի՝ Ջավադովի հետ ունեցած կապերի պատճառով: «Դեմիրքուլն ու Գյուրելն են ծանոթացրել Ջավադովին Էրթուղրուլ Գյուլենի հետ: Վերջինիս գործն էր հանդիպել, կապեր հաստատել, հարաբերություններ ստեղծել բնակչության բոլոր շերտերի հետ: Իր մասնագիտական պարտականությունների կատարման համար նրան մեղադրելն անհեթեթություն է: Նա ներկայացնում էր Ադրբեջանում Թուրքիայի հետախուզական ծառայությունը /MIT/, որը նրան մեծ հնարավորություններ էր տալիս: Նա աշխատում էր բաց: Նա ջերմ ընտանեկան հարաբերությունների մեջ էր բարձրաստիճան շատ պաշտոնյաների և քաղաքական գործիչների՝ այդ թվում նաև Ռովշան Ջավադովի հետ: Ջավադովի և Էրթուղրուլի հարաբերություններում որևէ գաղտնիք փնտրելը ստահող զրպարտություն է»:¹⁷¹ Էրը նաև ընդգծում է, որ Թուրքիայի դեսպանատունը գործել է բացառապես Ադրբեջանի պետական շահերից ելնելով, և ավելացնում. «Եթե Բաքվում Թուրքիայի դեսպանատունը չմիջամտեր 1994թ. հոկտեմբերի 4-5-ի իրադարձություններին, ապա այսօր Ալիևը նստած չէր լինի իր աթոռին: Միգուցե

¹⁷⁰ T. Er, “Azadlıktan Tiranlığa”, Ankara, 2010, s. 102.

¹⁷¹ Տես՝ նույն տեղում:

նախագահական նստավայրում նորից հայտնվել Ա. Մուֆալիբովն իր մոսկովյան և Բաքվի թիմով: Միգուցե Ադրբեջանը նորից կորցնե՞ր անկախությունը: Միգուցե նրան վիճակվե՞ր Չեչնիայի ճակատագիրը...»¹⁷²:

Ուշագրավ են նաև «մարտյան իրադարձությունների» ականատես ու մասնակից, ժամանակի ՊՆ արևմտյան շրջանի պատասխանատու-փոխնախարար, նաև Վրաստանի քաղաքացի Իսա Սադիգովի վերջերս հրապարակած հուշերը: Մանրամասնորեն նկարագրելով 1994-95 թթ. դեպքերը, նա պնդում է, որ Ջավադովը ոչ միայն հեղաշրջման փորձ չի արել, այլ այդ ամենը ծրագրել է Հ. Ալիևը՝ պոտենցիալ մրցակցին ոչնչացնելու նպատակով: Սադիգովը նաև ծիծաղելի և անհեթեթ է համարում Թուրքիայի մասնակցությունը հեղաշրջման փորձին՝ հավելելով. «Այո՛, մարտի 17-ի արյունոտ օրը և դրան նախորդող օրերին ոչ միայն Թուրքիայի, այլև այլ պետությունների, այդ թվում և ԱՄՆ-ի դիվանագետները, ջանում էին ամեն կերպ կանխել հաշվեհարդարը: Սակայն, արդյունքում հենց այդ դիվանագետները մեղադրվեցին հեղաշրջման փորձում հանցակցության մեջ»¹⁷³:

Մարտի 17-ից հետո հարուցված քրեական գործով Ադրբեջանի ողջ տարածքում սկսվեցին հարցաքննություններ ու ձերբակալություններ: Հատկանշական է Սադիգովի հուշերում իր հարցաքննության վերաբերյալ հատվածը: Նրա խոսքերի համաձայն, Ջավադովի գործը քննող հանձնաժողովը ամեն կերպ փորձել է նրանից կորզել «անհրաժեշտ» ցուցմունքները, մասնավորապես իբր Ղազախում ներկա թուրք դիվանագետների կամ Թանսու Չիլերի կողմից այդ հեղաշրջմանը հատկացված 5 մլն դոլարի ու Ա. Մուֆալիբովի կողմից Էլչին Ամիրասլանովին նույն նպատակի համար փոխանցված 1 մլն դոլարի մասին: Սադիգովի հավաստմամբ, ինքը հերքել է բոլոր վերոնշյալ տեղեկությունները՝ դրանք անվանելով անհեթեթ ու ծիծաղելի: Այնուհանդերձ, նա Ադրբեջանի քրեական օրենսգրքի 58-րդ հոդվածով մեղադրվեց «Պետական դավաճանություն» հոդվածով:¹⁷⁴

1995թ. «մարտյան իրադարձությունների» արդյունքում Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում ստեղծված որոշակի լարված դրության հաղթահարումից հետո

¹⁷² Т. Ер, “Azadlıktan Tiranlığa”, Ankara, 2010, s. 132.

¹⁷³ И. Садыгов, “Записки полковника”, 16/03/2012, http://www.radioazadlyg.org/archive/isa_sadigov

¹⁷⁴ “Монитор”, Баку, № 4, 2002 г.

երկկողմ հարաբերությունները թևակոխեցին առավել կայուն և դինամիկ զարգացման փուլ, որը բնորոշվում է նաև հարաբերությունների իրավապայմանագրային հենքի մշակմամբ և ինստիտուցիոնալացմամբ: Թուրքիայի վարչապետ Թ. Չիլլերի /1995թ. ապրիլի 12, 1996թ. ապրիլի 14-15/ և նախագահ Ս. Դեմիրելի /դեկտեմբերի 7-9 Բաքու/ կատարած պաշտոնական այցերից հետո հիմնականում հարթվեցին առաջացած քաղաքական խնդիրները երկու պետությունների միջև, և սկսվեց համագործակցության ընդլայնման շրջանը գրեթե բոլոր ոլորտներում: Ի տարբերություն 1995-96թթ., 1997 թվականին Թուրքիայի և Ադրբեջանի միջև հարաբերություններում ակտիվություն է նկատվում: 1997թ. մարտի 19-20-ին Թուրքիայի Մեջլիսի նախագահ Մ. Քալեմլին պաշտոնական այցով մեկնում է Բաքու: Այնուհետև, ընդամենը երկու ամիս անց, 1997թ. մայիսի 5-8-ին Թուրքիա է մեկնում Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը: Նույն թվականի նոյեմբերի 12-ին Թուրքիայի վարչապետ Մ. Յըլմազն է այցելում Բաքու՝ մասնակցելու «հում նավթի արտադրությանը» նվիրված արարողությանը:¹⁷⁵ Նշանակալից է ԹՀ ԱԳ նախարար Ի. Զեմի՝ 1997թ. սեպտեմբերյան այցը Բաքու, որով թուրքական կողմը փաստորեն ստանձնում է ՆԱՏՕ-Ադրբեջան համագործակցության խթանման պարտականությունը: Այս շրջանում երկու պետությունների միջև հաստատվում է փոխադարձ առաջին պաշտոնական այցերի ավանդույթը բարձրաստիճան պաշտոնյաների՝ նախագահի կամ վարչապետի պաշտոններում ընտրվելուց հետո:

Հարաբերությունների վերընթաց զարգացումը հանգեցրեց նրան, որ 1998թ. Թուրքիան առաջին անգամ դարձավ արտաքին առևտրում Ադրբեջանի գլխավոր գործընկերը:¹⁷⁶ Ադրբեջանի ամբողջ արտաքին առևտրաշրջանառության 21 տոկոսի/355 մլն դոլար/ մասնաբաժինը պատկանում էր Թուրքիային: Ընդ որում, դեռևս 1997թ. Թուրքիան երրորդ տեղում էր՝ ՌԴ-ից /18 տոկոս/ և Իրանից /5.6 տոկոս/ հետո:¹⁷⁷

Կարևոր զարգացում է ունենում նաև երկկողմ համագործակցությունը ռազմական ոլորտում: 1994թ. Անկարայում ստորագրված «Ադրբեջանի

¹⁷⁵ Azərbaycan Respublikası Xarici İşlər Nazirliyinin Naxçıvan Muxtar Respublikasındakı İdarəsi, <http://dmfa.nakhchivan.az>

¹⁷⁶ Чернявский С.И., Новый путь Азербайджана, Москва, Азерб-Медиа, 2002г., с. 236.

¹⁷⁷ Տես, նույն տեղում:

Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև բարեկամության և բազմակողմանի համագործակցության մասին» պայմանագիրը դնում է Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական համագործակցության ինստիտուցիոնալիզմացման հիմքը: Միայն 1996-1997թթ. թուրքական ռազմա-արդյունաբերական «ԱՍԵԼՍԱՆ» կազմակերպությունը Ադրբեջանին տրամադրել է 20 մլն դոլար արժողությամբ ռազմական կապի միջոցներ, որի շնորհիվ ադրբեջանական բանակը հնարավորություն է ստանում մասնակիորեն անցնելու ՆԱՏՕ-ական ռազմական կապի միջոցների օգտագործմանը:¹⁷⁸ Բացի այդ, 1998թ. սեպտեմբերի 8-9-ին ԹՀ նախագահ Ս. Դեմիրելը Բաքվում մասնակցում է «Մետաքսե ճանապարհի» վերականգնմանը նվիրված գիտաժողովին, իսկ ԱՀ նախագահ Հ. Ալիևը՝ Թուրքիայի Հանրապետության 75 ամյակին նվիրված արարողություններին և միջոցառումներին /հոկտեմբերի 21-28-ը/:

1999թ. նշանավորվում է հատկապես թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության խորացմամբ: 1999թ. սեպտեմբերի 1-ին թուրքական խաղաղապահ ուժերի կազմում Կոսովո են մեկնում ադրբեջանցի 34 զինծառայողներ: Այդ առիթով Թուրքիան հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցներ /10 հազ. դոլար յուրաքանչյուր զինծառայողի համար/¹⁷⁹ Այդ կերպ Թուրքիան ևս մեկ անգամ ցույց է տալիս իր աջակցությունը ադրբեջանական զինուժին՝ մարտունակ գումարտակ ստեղծելու գործում:

Պաշտոնական քաղաքական երկխոսությունը երկու պետությունների միջև ևս շարունակում է զարգանալ: Այդ մասին են վկայում ԹՀ նախագահ Ս. Դեմիրելի և ԱՀ նախագահ Հ. Ալիևի փոխադարձ այցելությունները /համապատասխանաբար 1999թ. հոկտեմբերի 18, 1999թ. հոկտեմբերի 31-նոյեմբերի 2/:

Այդուհանդերձ, երկկողմ հարաբերություններում գոյություն ունեին նաև որոշ անհարթություններ, որոնք դրսևորվում էին հիմնականում տնտեսական-առևտրային ոլորտում: Ադրբեջանում դժգոհություն է սկսվում Թուրքիայի «ներդրումային քաղաքականության» դեմ: Թուրքիային մեղադրում են ադրբեջանական շուկան տարատեսակ ցածրորակ և էժանագին ապրանքներով ողողելու մեջ՝

¹⁷⁸ Чернявский С.И., Новый путь Азербайджана, Москва, Азер-Медиа, 2002г., с. 239.

¹⁷⁹ Տես, նույն տեղում՝ էջ 238:

արդյունաբերության մեջ ներդրումներ կատարելու փոխարեն: Բացի այդ, թուրք գործարարներն Ադրբեջանում բացում են ռեստորաններ, գեղեցկության սրահներ, մասնավոր խանութներ, որոնց եկամուտը ստանում են թուրքական կազմակերպությունները, և ոչ՝ Ադրբեջանը: Ադրբեջանի «Մուսավաթ» կուսակցության ղեկավարը 1999թ. Թուրքիայի պաշտոնական և հասարակական գործիչների հետ հանդիպման ընթացքում նշում է, որ «Անկարան պետք է հավասարակշռի իր քաղաքականությունը Բաքվի հանդեպ» և սկսի ակտիվ ներդրումներ կատարել ադրբեջանական տնտեսության մեջ:¹⁸⁰ Այնուհետև, նա հավելում է, որ «1994-1998թթ. ընթացքում 70 մլն բնակչություն ունեցող, զարգացող Թուրքիան Ադրբեջանի տնտեսությունում ներդրել է 557 մլն դոլար այն դեպքում, երբ 7 միլիոն բնակչությամբ Ադրբեջանը Թուրքիայի տնտեսությունում ներդրել է 756 մլն դոլար»¹⁸¹: Դա կապված էր կարճ ժամանակում եկամուտներ ստանալու Թուրքիայի ձգտումով, քանի որ երկարատև ներդրումների համար Թուրքիայի տնտեսական ներուժը մեծ չէր:

Երկկողմանի հարաբերություններից բացի, Թուրքիան և Ադրբեջանը լայնորեն համագործակցում են նաև միջազգային զանազան կառույցների շրջանակներում՝ տարածաշրջանային և միջազգային խնդիրների շուրջ հանդես գալով նույն դիրքորոշումներով: Թուրքիան հետևողականորեն աջակցում է նորանկախ Ադրբեջանին՝ հաղթահարելու միջազգային հանրությանը համարկվելու բարդ գործընթացը:

Միջազգային կառույցներում Ադրբեջանի քաղաքականությունը գլխավորապես ուղղված է ԼՂ հիմնահարցի կարգավորումը հոգուտ իրեն. հայկական ուժերի կողմից այսպես կոչված «բռնազավթված» տարածքների վերադարձի, փախստականների վերաբնակեցման և նրանց հումանիտար օգնության ցուցաբերման պահանջով: Ադրբեջանը վարում է արևմտյան ռազմաքաղաքական բլոկի հետ հարաբերությունների ընդլայնման քաղաքականություն՝ ցանկություն հայտնելով ավելի սերտ համագործակցել ՆԱՏՕ-ի և Եվրոպական կառույցների հետ: Թուրքիան՝ լինելով ՆԱՏՕ-ի անդամ պետություն և ունենալով բավականին սերտ հարաբերություններ ԵՄ-ի հետ, Ադրբեջանի քաղաքական նպատակների իրագործման տեսանկյունից

¹⁸⁰ Чернявский С.И., Новый путь Азербайджана, Москва, Азер-Медиа, 2002г.,с. 236.

¹⁸¹ Տես՝ նույն տեղում, էջ 236:

կատարում է յուրօրինակ միջնորդի դեր և «կապող օղակ» հանդիսանում Ադրբեջանի ու եվրոատլանտյան կառույցների միջև: Ադրբեջանը, իր հերթին, միջազգային ասպարեզում քաղաքական աջակցություն է ցուցաբերում Թուրքիային ԵՄ-ում անդամակցության և Հյուսիսային Կիպրոսի խնդիրների շուրջ:

Թուրքիայի և Ադրբեջանի միջև գործում են խորհրդատվության բավականին արդյունավետ մեխանիզմներ, ինչն ապահովում է երկու պետությունների միջև կայուն համագործակցություն միջազգային ատյաններում:

Թուրքիան և Ադրբեջանն առավել սերտ համագործակցում են ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԽ, ՆԱՏՕ, Իսլամական վեհաժողով, Թյուրքալեզու պետությունների խորհուրդ կազմակերպություններում:

Միավորված Ազգերի Կազմակերպությանը /ՄԱԿ/ Ադրբեջանն անդամակցել է 1992թ. մարտի 2-ին: ՄԱԿ-ում Ադրբեջանի հիմնական գործունեությունն ուղղված է ԼՂ հիմնահարցի շուրջ իր համար բարենպաստ բանաձևերի ընդունմանը: 1993թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի / ԱԽ/ կողմից ընդունված 4 բանաձևերը¹⁸² Ադրբեջանը մինչ օրս համարում է ԼՂ հիմնահարցի կարգավորման իրավական-քաղաքական կարևոր հիմք: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԼՂ հիմնահարցի կարգավորմամբ զբաղվում է ԵԱՀԿ-ի Մինսկի խումբը, Ադրբեջանը փորձում է փոփոխություն մտցնել ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի և ԵԱՀԿ-ի հետ համագործակցության ամենամյա բանաձևերում՝ հաստատելու Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքները ԼՂ հիմնահարցի կարգավորման դեպքում: Թուրքիան աջակցում է Ադրբեջանի քաղաքականությանը ԼՂ խնդրի շուրջ:

ԵԱՀԿ-ի շրջանակներում ևս Թուրքիան և Ադրբեջանը սերտորեն համագործակցում են: Ադրբեջանն անդամակցել է այդ կազմակերպությանը 1992թ. հունվարի 20-ին, սակայն իր դիվանագիտական գործունեությունը սկսել է միայն 1993թ. աշնանը, այսինքն Հ. Ալիևի նախագահության տարիներին: ԵԱՀԿ-ի հետ համագործակցությունն Ադրբեջանը հատկապես կարևորում է ԼՂ հիմնահարցի կարգավորման հարցում իր համար բարենպաստ որոշումների ընդունման

¹⁸² No. 822 (30.04.1993), No.853 (23.07.1993), No. 874 (14.10.1993), No. 884 (12.11.1993). Տե՛ս՝ С.И. Чернявский, “НовыйпутьАзербайджана”, Москва, 2002г, стр. 261-62.

հնարավորության տեսանկյունից: Թուրքիան այս հարցում ևս պաշտպանում է Ադրբեջանի դիրքորոշումը:

ՆԱՏՕ-ի շրջանակներում ևս Թուրքիա-Ադրբեջան համագործակցությունը բավականին սերտ բնույթ ունի: Ադրբեջանը ՆԱՏՕ-ի հետ համագործակցության ընդլայնումը համարում է իր արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը և արևմտյան ռազմաքաղաքական բլոկի հետ հարաբերությունների սերտացումը դիտում է իբրև իր ինքնիշխանության ամրապնդման երաշխիք: Ադրբեջանը հույս ունի, որ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի մասնակցությունը ԼՂ հիմնահարցի կարգավորման գործընթացում կհանգեցնի այդ խնդրի ադրբեջանամետ կարգավորմանը:

1994թ. մայիսի 4-ին Բոյուսելի ՆԱՏՕ-ի գրասենյակում Հ. Ալիևը ստորագրում է «Համագործակցություն հանուն խաղաղության» փաստաթուղթը, սակայն այդ փաստաթղթի գործնական կիրառումն Ադրբեջանում սկսվում է 1996 թվականին: Նախ՝ Ադրբեջանի ՊՆ ներկայացուցիչները սկսում են մասնակցել տարբեր սեմինարների, իսկ 1997թ. ԱՄՆ-ի Նորֆոլկ քաղաքում ադրբեջանցիներն առաջին անգամ մասնակցում են խաղաղապահական զորավարություններին /հուլիսի 28 –օգոստոսի 8/: 1997թ. հոկտեմբերի 18-ին ԱՄՆ-ի դեսպանը ՆԱՏՕ-ում՝ Ռ. Հանթերը այցելում է Բաքու և ընդունվում Հ. Ալիևի կողմից: Բանակցությունների արդյունքում ընդգծվում է, որ կողմերի միջև գոյություն ունի «փոխադարձ ձգտում աշխարհառազմավարական համագործակցության ամրապնդման համար»:¹⁸³ Ընդ որում Ադրբեջանը նշում է, որ ԱՊՀ պետություններից միակն է, որի տարածքում գոյություն չունի օտարերկրյա ռազմական բազա՝ չնայած իր զբաղեցրած բուֆերային դիրքին ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի, ինչպես նաև ՆԱՏՕ-ի և Իրանի միջև:¹⁸⁴

1999 թվականից Ադրբեջանի խաղաղապահ ուժերը Թուրքիայի ճամբարի կազմում մասնակցում են Կոսովոյի խաղաղապահական գործողություններին:

2000թ. ապրիլի 27-28-ին ՆԱՏՕ-ի պատվիրակության ռազմական կոմիտեի նախագահի՝ Գ. Վենտուրիոնիի հետ հանդիպման արդյունքում Հ. Ալիևը հայտարարում է, թե Հյուսիսատլանտյան դաշինքի կառույցներում համարկումն Ադրբեջանի արտաքին

¹⁸³ С.И. Чернявский, “Новый путь Азербайджана”, Москва, 2002г, стр.283:

¹⁸⁴ Տես՝ նույն տեղում:

քաղաքականության առաջնային թիրախներից է: Արդեն 2001թ. Ադրբեջանի ներկայացուցիչները մասնակցում են ՆԱՏՕ-ի ավելի քան 260 միջոցառումներին:

ՆԱՏՕ-ն իր հերթին շահագրգռված էր տարածաշրջանում նավթամուղների և գազատարների անվտանգության ապահովմամբ, ուստի 2000թ. հունիսի 24-30-ին Անկարայում կազմակերպում է նախագծվող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի պաշտպանության համար թուրք-ադրբեջանական-վրացական զորավարություններ:

2000 թվականի մայիսին Թուրքիայի նախագահ ընտրվում է Ահմեդ Սեզերը, որից հետո երկրի իշխանության շրջանակներում սկսում է ավելանալ Հ. Ալիևի քաղաքականությունը քննադատողների թիվը:¹⁸⁵ Նախկինում դրա բացակայությունը որոշ չափով պայմանավորված էր նախագահներ Ս. Դեմիրելի և Հ. Ալիևի անձնական սերտ կապերով: Ս. Դեմիրելի օրոք չէին լուսաբանվում անգամ Ադրբեջանի ներքաղաքական խնդիրները /հատկապես ընդդիմության վերաբերյալ/: Իսկ Ա. Սեզերի օրոք արդեն թուրքական վերնախավում սկսում են քննարկել այն հարցը, թե ով է հաջորդելու Հ. Ալիևին՝ Ադրբեջանի քաղաքականության շարունակականության հարցի համատեքստում:¹⁸⁶ Սա պայմանավորված էր թուրքական վերնախավում տիրող որոշ միտումներով, երբ Դեմիրելի եվրասիական քաղաքականությունից և նեո-պանթուրանականությունից կրկին շրջադարձ տեղի ունեցավ դեպի ԵՄ-ի հետ համարկման քաղաքականություն:

Այդուհանդերձ, 2000թ. մայիսի 11-12-ին Ա. Սեզերը, համաձայն ձևավորված ավանդույթի, իր առաջին պաշտոնական այցը, որպես նախագահ, կատարում է Բաքու: Պատասխան այցը Հ. Ալիևի կողմից տեղի է ունենում 2001թ. մարտի 12-17-ին:

2000-ական թվականներին թուրք-ադրբեջանական հարաբերությունները շարունակում են կայուն զարգացում արձանագրել՝ ավելի կայուն աշխարհաքաղաքական շահերի համընկման հենքի վրա: Հատկապես մեծ կարևորություն է ներկայացնում աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նշանակության տարածաշրջանային նախագծերի շուրջ համագործակցությունը:

¹⁸⁵ С.И. Чернявский, “Новый путь Азербайджана”, Москва, 2002г, стр. 239:

¹⁸⁶ B. Oran, “TürkDış Politikası Cilt 3: 1980-2001 (Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar)”, İletişimYayınları, İstanbul, 2013, s. 480.

2002թ. ապրիլի 29-30-ին Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը մասնակցում է Տրապիզոնում տեղի ունեցած Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպմանը: Դրան հաջորդում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան հիմնական նավթամուղի հիմնադրման արարողությունն Ադրբեջանում, որին ներկա էր նաև ԹՀ նախագահ Ա. Սեզերը /սեպտեմբերի 17-18/ :¹⁸⁷

2003թ. օգոստոսին Հ. Ալիևի առողջական վիճակը կտրուկ վատանում է, որի հետևանքով նա հրաժարվում է նախագահի պաշտոնից և իշխող կուսակցության միակ թեկնածու նշանակում որդուն՝ Իլհամ Ալիևին: Հոկտեմբերի 15-ին Ադրբեջանում կայացած նախագահական ընտրությունների արդյունքում Իլհամ Ալիևը դառնում է պետության նախագահ:

2003թ. դեկտեմբերի 12-ին ԱՄՆ-ի Քլիվլենդ քաղաքի հիվանդանոցում վախճանվում է Հեյդար Ալիևը: Դեկտեմբերի 16-ին Բաքու է ժամանում Թուրքիայի պատվիրակությունը՝ մասնակցելու նրա հուղարկավորման արարողությանը: ԹՀ նախագահ Ա. Սեզերին, վարչապետ Ռ.Թ. Էրդողանին, Թուրքիայի Զինված Ուժերի Գլխավոր Շտաբի պետ Հ. Օզքոքին ուղեկցում էին պատվիրակության 120 անդամները:¹⁸⁸

Այսպիսով, Հ. Ալիևի կառավարման տարիներին Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները թևակոխում են կայուն զարգացման և ինստիտուցիոնալացման շրջան՝ պայմանավորված աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի համընկմամբ:

¹⁸⁷ Azərbaycan Respublikası Xarici İşlər Nazirliyi, <http://www.mfa.gov.az>

¹⁸⁸ Տես՝ նույն տեղում:

2.2 Թուրքիայի հարաբերությունները Ադրբեջանի հետ Իլհամ Ալիևի կառավարման ժամանակաշրջանում. 2010թ. «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագիրը

Ի. Ալիևի նախագահությունն առանձնապես չփոխեց թուրք-ադրբեջանական հարաբերությունների հիմնական ուղեգիծը և միտումները: Երկկողմ համագործակցությունը գրեթե բոլոր ոլորտներում շարունակում է զարգանալ և ընդլայնվել: Ի. Ալիևը դարձավ հոր՝ Հ. Ալիևի որդեգրած քաղաքականության ժառանգորդը: Թուրքիայում ԱԶԿ-ի հաղթանակի հետևանքով էլ ավելի կարևորվեցին հարաբերությունները Հարավային Կովկասի պետությունների՝ առաջին հերթին Ադրբեջանի հետ: Կտրուկ աճեց փոխադարձ պաշտոնական այցերի թիվը, ինչը վկայում է հարաբերությունների դինամիկայի ակտիվացման մասին:

Այսպես, 2004թ. հունվարի 11-12-ին Բաքու է ժամանում ԹՀ ԱԳ նախարար Ա. Գյուլը, որի ժամանակ նա հանդիպումներ է ունենում Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի, վարչապետ Ռասուլզադեի, Մեջլիսի նախագահ Մ. Ալասզարովի և ԱԳ նախարար Վ. Գուլիևի հետ: Նույն թվականի մարտի 6-10-ին Ադրբեջանի ԱԳ փոխնախարար Հ. Հալեֆովը մեկնում է Թուրքիա՝ մասնակցելու երկու պետությունների ԱԳՆ-ների միջև պարբերաբար կայացող խորհրդատվությանը:¹⁸⁹

2004թ. Ի. Ալիևը, որպես Ադրբեջանի նորընտիր նախագահ, իր առաջին արտագնա պաշտոնական այցը կատարում է Թուրքիա և հանդիպումներ ունենում ԹՀ նախագահ Ա. Սեզերի, վարչապետ Էրդողանի, ԱԳ նախարար Ա. Գյուլի, ԹՀ ՀՈՒ Գլխավոր Շտաբի պետ Հ. Օզքոքի, Ժողովրդահանրապետական կուսակցության նախագահ Դ. Բայկալի, Ճշմարիտ Ուղի կուսակցության նախագահ Մ. Աղարի, նախկին նախագահ Ս. Դեմիրելի հետ: Նա նաև մասնակցում է Հ. Ալիևի անվան զբոսայգու բացման հանդիսավոր արարողությանը և ելույթով ունենում Թուրքիայի Միլլի Մեջլիսում:

Նույն թվականի հունիսի 26-29-ին Ի. Ալիևը Թուրքիայում մասնակցում է ՆԱՏՕ-ի գագաթնաժողովին՝ հանդիպումներ ունենալով Թուրքիայի առաջին դեմքերի հետ,

¹⁸⁹ Azərbaycan Respublikası Xarici İşlər Nazirliyi, <http://www.mfa.gov.az>

ինչպես նաև ներկա գտնվում Ստամբուլի Շիշլի թաղամասում Հ. Ալիևի պատվին կանգնեցված հուշակոթողի բացման արարողությանը:

Այնուհետև, 2004թ. նոյեմբերին Բաքու են ժամանում Թուրքիայի մի քանի պատվիրակություններ, այդ թվում՝ ԹՀ Պետնախարար Գ. Թուզմենը /նոյեմբերի 17-18/, ԹՀ Ժանդարմերիայի Գլխավոր ռամանատար, գեներալ Ֆ. Թյուրքերը /նոյեմբերի 24/, ԹՀ Տրանսպորտի նախարար Բ. Յըլդըրըմը:¹⁹⁰

2004թ. դեկտեմբերին երկկողմ հարաբերություններում տեղի է ունենում ևս մեկ կարևոր իրադարձություն. Կարսում բացվում է Ադրբեջանի գլխավոր հյուպատոսությունը /դեկտեմբերի 10/:

Նույն թվականի դեկտեմբերի 29-ին Ադրբեջանի փոխնախարար Ն. Փանահովը, ԹՀ Տրանսպորտի նախարար Բ. Յըլդըրըմը և Վրաստանի Տրանսպորտի նախարար Ա. Ալեքսիշվիլին Վրաստանի ԱԳՆ-ում ստորագրում են արձանագրություն Կարս-Ախալքալաք-Բաքու երկաթուղային նախագծի վերաբերյալ:¹⁹¹

2005թ. և դրան հաջորդող երեք տարիներին Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները շարունակում են ակտիվորեն զարգանալ, աճում է միջպետական այցերի թիվը: 2005թ. փետրվարի 10-11-ը Ադրբեջանի ԱԳ նախարար Է. Մամեդյարովը պաշտոնական այցով մեկնում է Թուրքիա և հանդիպում ունենում ԹՀ նախագահ Ա. Սեզերի, վարչապետ Ռ. Էրդողանի, ԱԳ նախարար Ա. Գյուլի և այլոց հետ: Է. Մամեդյարովը նույն թվականի հունիսի 27-ին ևս ԹՀ ԱԳ նախարար Ա. Գյուլի հրավերով հյուրընկալվում է Թուրքիայում:

Տարածաշրջանային կարևոր իրադարձություն է դառնում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի ադրբեջանական հատվածի հանդիսավոր գործարկումը /2005թ. մայիսի 24-25/, որին մասնակցում է նաև Թուրքիայի նախագահ Ա. Սեզերը:¹⁹²

Նույն թվականի հունիսի 29-30-ը Ադրբեջան է ժամանում Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էրդողանը և հանդիպումներ ունենում Ի. Ալիևի, Ա. Ռասլզադեի և Մ. Ալեքսերովի հետ, ինչպես նաև ելույթով հանդես գալիս Ադրբեջանի Մեջլիսում:

¹⁹⁰ Azərbaycan Respublikası Xarici İşlər Nazirliyi, <http://www.mfa.gov.az>

¹⁹¹ Տես՝ նույն տեղում:

¹⁹² Տես՝ նույն տեղում:

Նույն թվականին նկատվում է արդեն Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների որակական փոփոխությունների սկիզբը՝ կապված Թուրքիայի տնտեսության մեջ կասպիական նավթի վաճառքից ստացված եկամուտների որոշ մասի ներդրումների հետ:

2006-2007 թվականներին Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմական ոլորտի համագործակցության ակտիվացման միտում է նկատվում: Դա են վկայում ռազմական և հետախուզական տարբեր կառույցների պաշտոնական ներկայացուցիչների հաճախակի փոխադարձ այցերը: Այսպես, բացի պետության նախագահների այցերից, 2006թ. ապրիլի 11-12-ին Թուրքիայի MIT-ի ղեկավար Է. Թաները ժամանում է Բաքու, որտեղ հանդիպումներ է ունենում Ի. Ալիևի և Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարար Ե. Մահմուդովի հետ:¹⁹³ Նույն թվականի ապրիլի 18-19-ին ԹՀ ՆԳ նախարար Ա. Աքսուն մեկնում է Բաքու և հանդիպում Ի. Ալիևի և Ադրբեջանի ՆԳ նախարար Ռ. Յուսուֆովի հետ: Հունիսի 29-ին Բաքու է ժամանում ԹՀ ՁՈՒ Գլխավոր շտաբի պետ Հ. Օզքոքը, իսկ դեկտեմբերի 5-ին Ի. Ալիևն ընդունում է ԹՀ Ժանդարմերիայի հրամանատար Ի. Քոչաներին:¹⁹⁴

Բացի այդ 2006թ. վերջապես ավարտվում է Բաքու-Թբիլիսի-Կարս նավթամուղի կառուցումը, որի հանդիսավոր բացման արարողությանը մասնակցելու համար Թուրքիա է մեկնում Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը: Նա նաև հանդիպումներ է ունենում Ա. Սեզերի, Ռ.Թ. Էրդողանի, Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլու հետ: Ադրբեջանի ԱԳ նախարար Է. Մամեդյարովն էլ իր հերթին հանդիպում է Թուրքիայի իր գործընկերոջը:

2007թ. հունվարի 9-11-ին Ադրբեջանի ՆԳ նախարար Ռ. Յուսուֆովը Թուրքիայի ՆԳ նախարար Ա. Աքսուի հրավերով մեկնում է Թուրքիա, որտեղ ունենում է մի շարք հանդիպումներ Թուրքիայի քաղաքական և զինվորական վերնախավի հետ:

Փետրվարի 5-6-ին Ադրբեջանի ՊՆ նախարար Ս. Աբիևը մեկնում է Թուրքիա՝ ՁՈՒ Գլխավոր շտաբի պետ Յ. Բյույուքանըթի հրավերով և ընդունելության

¹⁹³ Azərbaycan Respublikası Xarici İşlər Nazirliyi, <http://www.mfa.gov.az>

¹⁹⁴ Տես՝ նույն տեղում:

արժանանում Ա. Սեզերի, Ռ.Թ. Էրդողանի, Թուրքիայի ՊՆ նախարար Վ. Գյոնուլի կողմից:¹⁹⁵

Այնուհետև, նույն թվականի փետրվարի 27-ին Ի. Ալիևն ընդունում է Թուրքիայի ԶՈՒ Գլխավոր շտաբի պետի տեղակալին, ապա մարտի 6-7-ին՝ Թուրքիայի Ցամաքային ուժերի հրամանատար Ի. Բաշբուղին, ով նաև հանդիպում է ունենում Ադրբեջանի նախարար Ս. Աբիևի հետ:¹⁹⁶

2007թ. օգոստոսի 28-ի նախագահական ընտրությունների արդյունքում Թուրքիայի նախագահ է ընտրվում ԱԶԿ կուսակցության թեկնածու Ա. Գյուլը, ում օրոք ևս երկու պետությունների միջև հարաբերությունները շարունակում են ունենալ հիմնականում դինամիկ զարգացման միտումներ: Ինչպես միշտ, հետևելով ավանդույթին, Ա. Գյուլն իր առաջին արտագնա այցը կատարում է Ադրբեջան /նոյեմբերի 6-8/:¹⁹⁷

Թուրքիա-Ադրբեջան բավականին սերտ համ ործակցությունը դրսևորվում է նաև միջազգային կառույցներում՝ 2009թ. հոկտեմբերի 3-ին Նախիջևանում կայացած 9-րդ. և 2010թ. Ստամբուլում կայացած 10-րդ. գագաթնաժողովների ընթացքում Թուրքիայի, Ադրբեջանի, Ղրղզստանի և Ղազախստանի կողմից կազմավորված Թյուրքալեզու պետությունների խորհուրդ. կազմակերպության գործունեության համատեքստում:¹⁹⁸ Այդ կառույցը հիմնված է թյուրքական համերաշխության դրսևորման վրա և նպատակն է վերոնշյալ պետությունների, ինչպես նաև թյուրքալեզու այլ ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների ընդլայնումն ու ամրապնդումը: Կազմակերպության շրջանակներում աշխատանքներ են տարվում թյուրքալեզու պետությունների միջև քաղաքական, տնտեսական, հումանիտար-մշակութային համագործակցության խթանման ուղղությամբ, և այդ նպատակով կազմակերպվում են ամենամյա թեմատիկ գագաթնաժողովներ:¹⁹⁹

¹⁹⁵ Azərbaycan Respublikası Xarici İşlər Nazirliyi, <http://www.mfa.gov.az>

¹⁹⁶ Տես՝ նույն տեղում:

¹⁹⁷ Տես՝ նույն տեղում:

¹⁹⁸ Թյուրքալեզու պետությունների գագաթնաժողովներ կազմակերպվում էին 1992 թվականից ի վեր, սակայն չունեին ինստիտուցիոնալ կազմավորում:

¹⁹⁹ 2011թ. Ալմաթիում կայացավ «Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի» գագաթնաժողովը՝ «Տնտեսական և առևտրային համագործակցություն», 2012թ. Բիշկեքում՝ «Կրթական, գիտական, մշակութային համագործակցություն» թեմաներով:

Թյուրքալեզու պետությունների խորհուրդ կազմակերպությունը տարածաշրջանային քաղաքական նախագիծ է, որը նաև հովանու գործառույթ է կատարում արդեն գոյություն ունեցող համագործակցության մեխանիզմների՝ Թյուրքալեզու պետությունների խորհրդարանական վեհաժողովի (TURKPA), Թյուրքական մշակույթի միջազգային կազմակերպության (TURKSOY), Թյուրքալեզու պետությունների գործարարների խորհրդի համար:

Իլիամ Ալիևի կառավարման ժամանակաշրջանում Ադրբեջան-Թուրքիա տնտեսական համագործակցությունը ևս նոր փուլ է թևակոխում: Այդ համատեքստում հարկ է դիտարկել ներդրումային քաղաքականության հիմնական միտումները: Թուրքիայի և Ադրբեջանի միջև տնտեսական համագործակցության բնույթը էապես փոխվեց կասպիական նավթից ստացված եկամուտների արդյունքում: Եթե ի սկզբանե ներդրումներն Ադրբեջանում կատարում էր Թուրքիան, ապա 2007-2010թթ. ընթացքում ադրբեջանական ներդրումային քաղաքականությունը Թուրքիայում զգալի փոփոխություններ կրեց: Թուրքիայի տնտեսությունում սկսում է ներդրումներ անել Ադրբեջանը՝ օգտագործելով նավթային գործարքներից ստացված եկամուտները: Նման առաջին նշանակալի քայլը 2008թ. հունիսի 5-ին ադրբեջանական SOCAR-ի կողմից թուրքական խոշորագույն նավթաքիմիական արդյունաբերական կազմակերպություն «Petkim»-ի 2 մլրդ արժողությամբ 51 % բաժնետոմսերի ձեռքբերումն էր:²⁰⁰ 2010թ. «Petkim»-ը եկամուտի և արտահանման ռեկորդային ցուցանիշներ է գրանցում:

2010թ. Թուրքիայում ադրբեջանական կապիտալով 136 կազմակերպություն կար գրանցված, որոնցից 74-ը հիմադրվել էին Ստամբուլում:²⁰¹ 2010թ. ադրբեջանական կապիտալի մասնակցությամբ բացվել են 6 բաժնետիրական ընկերություն և 130 ՍՊԸ: Թուրքիայի ադրբեջանական կազմակերպությունների մեծ մասը գործում են շինարարական ոլորտում:²⁰²

2010թ. տվյալներով, ադրբեջանական ներդրումները Թուրքիայում կազմում են մոտ 2.5 մլրդ դոլար: Սակայն սպասվում են ներդրումների ավելի մեծ հոսքեր: SOCAR-

²⁰⁰ Heydar Aliyev Heritage” International Online Library, <http://lib.aliyev-heritage.org/ru/4610295.html>

²⁰¹ Տես՝ նույն տեղում:

²⁰² Տես՝ նույն տեղում:

ը պլանավորում է մեծ ներդրումներ կատարել TANAP տարածաշրջանային նախագծի, Թուրքիայի Star նավթավերամշակման գործարանի և այլ խոշոր արդյունաբերական կազմակերպությունների աշխատանքներում: SOCAR-ը մոտակա տարիների ընթացքում պատրաստվում է Թուրքիայի տնտեսությունում ներդնել 17 մլրդ դոլլար:²⁰³

Այդուհանդերձ, Թուրքիայի ներդրումներն Ադրբեջանում ավելի զգալի են: Միայն 2002-2010թթ. թուրքական կազմակերպություններն Ադրբեջանում կատարել են 1653 մլրդ AZN ներդրումներ:²⁰⁴ 2010թ. թուրքական ներդրումներն Ադրբեջանում կազմել են մոտ 120 մլն դոլար:

Ընդ որում, 2010թ. Ադրբեջանի և Թուրքիայի միջև արտաքին արևմտաշրջանառությունը կազմել է 942.8 մլն դոլար, այդ թվում ներկրումը՝ 771.19 մլն, իսկ արտահանումը՝ 170.89 մլն դոլար:²⁰⁵ Ադրբեջանի արտաքին առևտրաշրջանառությունում Թուրքիայի մասնաբաժինը կազմում է 3.37%, ներկրման մեջ՝ 11.69%, արտահանման մեջ՝ 0.8 %:²⁰⁶

Թուրքական ներդրումներով Ադրբեջանում կառուցվել են տասնյակ հյուրանոցներ, ամեն տարի բացվում են տասնյակ նոր Migros մթերային հիպերմարկետներ: Թուրքական Turkcell ընկերությանն են պատկանում Ադրբեջանի բջջային ցանցի բաժնետոմսերի ստուգիչ փաթեթը: Ադրբեջանում գործում են տարբեր ոլորտներ ներկայացնող ավելի քան 600 թուրքական կազմակերպություններ, որոնք շարունակում են մեծացնել իրենց ներդրումների չափը: Այդ կազմակերպությունները Ադրբեջանում ստեղծել են ընդհանուր առմամբ 30.000 աշխատատեղ:²⁰⁷

Հարկ է նշել, որ Ի. Ալիևի օրոք ևս Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում եղել է անհարթությունների և լարվածության շրջան՝ պայմանավորված 2009 թվականին Թուրքիայի և Հայաստանի միջև ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» և «Հայաստանի Հանրապետության և

²⁰³ A. Jafarova, «Azerbaijan among top foreign investors in Turkey», 24.06.2013, <http://www.azernews.az/business/55825.html>

²⁰⁴ Heydar Aliyev Heritage” International Online Library, <http://lib.aliyev-heritage.org/ru/4610295.html>

²⁰⁵ Տես՝ նույն տեղում:

²⁰⁶ Տես՝ նույն տեղում:

²⁰⁷ В. Алиев, “Турция и Азербайджан: экономические отношения”, 25.01.2009, http://btime.az/page.html?id_node=407&id_file=1029

Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» ցյուրիխյան արձանագրություններով²⁰⁸ և թուրք-հայկական սահմանի հնարավոր բացման շուրջ քննարկումներով: Ադրբեջանում հասարակական-քաղաքական բողոքի ալիք էր բարձրացել Թուրքիայի դեմ՝ Հայաստանի նկատմամբ նրա վարած քաղաքականության պատճառով, ինչը հանգեցնում է այսպես կոչված «դրոշների ճգնաժամին»՝ որոշակիորեն ազդելով երկկողմանի ջերմ հարաբերությունների վրա: Սակայն, արձանագրությունների ձախողումից և Թուրքիայի կողմից բազմիցս արված հավաստիացումներից հետո, թե «ՀՀ-ի հետ Թուրքիայի սահմանի բացումը կապված է Ղարաբաղյան հիմնահարցում առաջընթացի հետ»²⁰⁹, Ադրբեջանի հետ երկկողմանի ջերմ հարաբերությունները ոչ միայն վերականգնվեցին, այլև ամրագրվեցին 2010 թ. ստորագրված ռազմաստրատեգիական համաձայնագրով, որը Թուրքիա-Ադրբեջան երկկողմանի հարաբերությունները փոխադրեց նոր հարթություն և որակական այլ մակարդակ:

2010թ. «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագրի կնքման նախադրյալները. Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների իրավական և ռազմաքաղաքական հիմքը

Թուրքիայի կողմից Ադրբեջանի հանրապետության անկախությունը ճանաչելու հարցի վերաբերյալ կարելի է նշել հետևյալը: Դեռևս 1991թ. սեպտեմբերի 9-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահ Է. Կաֆարովան ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպանի հետ հանդիպման ժամանակ խնդրում է հետաձգել Ադրբեջանի իրավական ճանաչումը Լեռնային Ղարաբաղի հնարավոր կորստի վտանգի պատճառով:²¹⁰ Այնուհանդերձ, Թուրքիան Ադրբեջանի անկախությունը ճանաչում է վերջինիս՝ ԽՍՀՄ կազմում միութենական հանրապետության կարգավիճակ ունենալու պայմաններում: Սա նշանակում է, որ Թուրքիայի կողմից Ադրբեջանի հանրապետության անկախության ճանաչումը նախքան ԽՍՀՄ փլուզումը ունեցել է գործընթացային բնույթ

²⁰⁸ ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք՝ www.mfa.am

²⁰⁹ Azerbaijan condemns Turkish pact, <http://news.bbc.co.uk/2/hi/europe/8301314.stm>

²¹⁰ В. Б. Арутюнян, События в Нагорном Карабахе. Хроника, январь 1993г – июль 1995, Ереван, Гитутюн, 1997, с. 75.

և եղել քաղաքական որոշման հետևանք: Ուշագրավ է նաև այն, որ ԽՍՀՄ ղեկավարությունը պաշտոնապես չի արձագանքել՝ որևէ քաղաքական կամ իրավական գնահատական չի տրվել Թուրքիայի կողմից իր տարածքային ամբողջականության դեմ ուղղված քայլին, այն է՝ վարչական միավորին որպես միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչելու նշյալ ակտին:

Ինչ վերաբերում է 1991թ. դեկտեմբերի 21-ի հանրաքվեին, ապա ակնհայտ է, որ իրավաբանական նշանակության այդ ակտն իրագործվել է այն ժամանակ, երբ մի կողմից կատարողը՝ մեկ տասնյակից ավելի երկրների կողմից որպես միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչված Ադրբեջանական հանրապետությունն էր, մյուս կողմից կատարվում էր իրավական գործողություն, որն այլևս կորցրել էր որպես այդպիսին իր իրավարարական ուժը՝ միջազգային սուբյեկտի գոյության դադարեցմամբ:

Հետևաբար, կարելի է ասել, որ քաղաքական-իրավական տեսանկյունից Թուրքիա-Ադրբեջան միջպետական հարաբերությունների հիմքը դրվել է մի շարք միջազգային հիմնական սկզբունքների, մասնավորապես ինքնիշխան հավասարության (այլ պետության իրավասուբյեկտության) սկզբունքի ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված հոդված 2, թիվ 1 կետի խախտումով: Աշխարհաքաղաքական զարգացումների երկարաժամկետ հեռանկարում Թուրքիա-Ադրբեջան միջպետական հարաբերությունների վերոնշյալ իրավական հիմքերը կարող են հանգեցնել որոշակի լուծումների, ինչը կարող է արմատապես վերաձևել ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում: Անուղղակիորեն այդ մասին են վկայում Թուրքիա - Ադրբեջան երկկողմանի ռազմավարական հարաբերությունների հաստատման գործընթացի տրամաբանությունը:

1992թ. հունվարի 24-ին Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ստորագրվում է համաձայնագիր «Բարեկամության, համագործակցության և բարիդրացիական հարաբերությունների մասին», որի հիմքում 1921թ. Կարսի պայմանագիրն է:²¹¹ 1992թ. մարտի 24-ին Նախիջևանի ԻՀ Գերագույն խորհրդի նախագահ Հեյդար Ալիևի՝ Թուրքիա կատարած այցի արդյունքում ստորագրվում է «Նախիջևանի Ինքնավար Հանրապետության եւ Թուրքիայի

²¹¹ Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Dostluk, İşbirliğine İyi Komşuluk Anlaşmasının Onaylanmasının Uygun Bulunduğuna Dair Kanun, Ocak 24, 1992.

Հանրապետության միջև համագործակցության արձանագրությունը»: Այս երկու փաստաթղթերը սկզբնավորում են Թուրքիա-Ադրբեջան երկկողմանի պաշտոնական հարաբերությունները եւ հիմք հանդիսանում տարբեր ոլորտներում հետագա համագործակցության զարգացման համար: Ներկայումս Թուրքիայի եւ Ադրբեջանի միջև գոյություն ունի կնքված ավելի քան 137 իրավական փաստաթուղթ²¹², որոնք ընդգրկում են համագործակցության տարբեր ոլորտներ:

Քաղաքական ոլորտ

Թուրքիա-Ադրբեջան քաղաքական հարաբերությունների առաջին իրավական ամրագրումն եղել է 1992թ. հունվարի 24-ին Անկարայում Թուրքիայի նախագահ Թ. Օզալի և Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովի կողմից «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և բարիդրացիական հարաբերությունների մասին» համաձայնագրի ստորագրմամբ: Դա իրավական հիմք է դառնում թուրք-ադրբեջանական երկկողմանի հարաբերություններում գրեթե բոլոր՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, կրթության, մշակույթի, հաղորդակցության ոլորտների զարգացման համար: Նույն թվականի փետրվարի 28-ին Բաքվում կնքվում է թուրք-ադրբեջանական մեկ այլ իրավական փաստաթուղթ երկու պետությունների ԱԳ նախարարությունների միջև համագործակցության մասին²¹³, որի շարունակությունն է դառնում նույն թվականի օգոստոսի 11-ին Անկարայում ստորագրված «Ադրբեջանի Հանրապետության ԱԳՆ-ի և Թուրքիայի Հանրապետության ԱԳՆ-ի միջև համագործակցության և խորհրդատվության վերաբերյալ» արձանագրությունը:

1992թ, նոյեմբերի 2-ին Անկարայում մի շարք այլ փաստաթղթերի հետ ստորագրված «Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև համագործակցության և համերաշխության մասին» արձանագրությունը, թերևս թուրք-ադրբեջանական քաղաքականության համերաշխության դրսևորումների իրավական

²¹² Foreign Affairs Ministry of Azerbaijan, www.mfa.gov.az

²¹³ Տես՝ Արձանագրություն Ադրբեջանի Հանրապետության ԱԳՆ-ի և Թուրքիայի Հանրապետության ԱԳՆ-ի միջև համագործակցության մասին, Բաքու, փետրվարի 28, 1992. Foreign Affairs Ministry of Azerbaijan, www.mfa.gov.az:

ձևակերպումն էր: Հարկ է նշել, որ Ադրբեջանի անկախությունից հետո, վերոնշյալ փաստաթղթերն առաջիններն էին, որոնք ստորագրվեցին Ադրբեջանի և Թուրքիայի միջև՝ համապատասխան իրավական հիմք պատրաստելով հետագա երկկողմ համագործակցության համար: Հատկանշական է, որ դրանց մեծ մասը կնքվել են Ա. Էլչիբեյի նախագահության տարիներին, երբ Ադրբեջանը վարում էր հստակ թուրքամետ արտաքին քաղաքականություն: Այդուհանդերձ, Հ. Ալիևի օրոք Թուրքիայի հետ հարաբերությունները շարունակում են զարգանալ և ամրապնդվել՝ ամրագրվելով նոր իրավական փաստաթղթերում: Այսպես, 1994թ. փետրվարի 9-ին Անկարայում ստորագրվում են «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև բարեկամության և բազմակողմանի համագործակցության մասին» պայմանագիրը, «Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև համագործակցության և փոխօգնության մասին» արձանագրությունը, «Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև քաղաքական խորհրդատվությունների մասին» համաձայնագիրը, որոնք ևս մեկ անգամ ցույց են տալիս երկու պետությունների միջև առկա հստակ և հետևողական դաշնակցային հարաբերությունները: 1995թ. Ռուվշան Զավադովի հեղաշրջման փորձից հետո թուրք-ադրբեջանական հարաբերությունների վատթարացումն դրսևորվում է այդ տարվա ընթացքում համագործակցության նոր իրավական ամրագրումների բացակայությամբ գրեթե բոլոր ոլորտներում: Թուրք-ադրբեջանական երկկողմանի հարաբերությունների իրավական վերականգման առաջին դրսևորումը եղավ 1997թ. մայիսի 5-ին ստորագրված «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ռազմավարական համագործակցության ընդլայնման մասին» հայտարարությունը, «Ադրբեջանի Հանրապետության ԱԳՆ և Թուրքիայի Հանրապետության ԱԳՆ միջև համագործակցության և քաղաքական խորհրդատվության մասին» համաձայնագիրը, «Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև սահմանային հարցերի և թյուրիմացությունների կարգավորման մասին» արձանագրությունը:

Հաջորդող տարիներին նկատվում է թուրք-ադրբեջանական քաղաքական հարաբերությունների իրավական ամրագրումների դինամիկայի որոշակի

դանդաղեցում՝ համագործակցության այլ ոլորտների, մասնավորապես՝ ռազմական քննազավառի զարգացման հաշվին: Այդուհանդերձ, 2001-2002թթ., 2005-2006թթ. և 2007 թվականին երկու պետությունների միջև ստորագրվում են «Ադրբեջանի Արդարադատության նախարարության և Թուրքիայի Արդարադատության նախարարության միջև համագործակցության մասին» արձանագրությունը, «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև քաղաքացիական և առևտրային հարաբերությունների ոլորտում իրավական համագործակցության մասին», «Ադրբեջանի Հանրապետության Միջազգային Բանկի և Թուրքիայի Հանրապետության Բանկային գործի կարգավորման և վերահսկողության գործակալության միջև պետական պարտքի վճարման ժամկետի նոր պաշտոնական գրանցման մասին», «Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև գործընկերության և համագործակցության մասին» և «Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև պետական պարտքի վերակազմակերպման մասին» համաձայնագրերը, «Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև տեխնիկական համագործակցության մասին» արձանագրությունը և մի քանի այլ քաղաքական ոլորտի իրավական փաստաթղթեր:

Ռազմական ոլորտ

Թուրքիայի և Ադրբեջանի միջև պաշտոնական ռազմական համագործակցության շուրջ առաջին իրավական փաստաթուղթը ստորագրվել է 1992թ.՝ «Պայմանագիր Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև համատեղ ռազմական ուսուցման և վերապատրաստման մասին» անվամբ: Այդ համաձայնագրի կնքումից հետո, դրան հաջորդող մի քանի տարիների ընթացքում այն մնում է երկու պետությունների միջև ռազմական համագործակցության իրավական ձևակերպման միակ փաստաթուղթը:

Դա պայմանավորված էր ԼՂ զինված հակամարտությանը ռազմական միջամտություն չցուցաբերելու պաշտոնական Թուրքիայի քաղաքականությամբ:

Կարելի է ասել, երկու պետությունների միջև համակողմանի պաշտոնական ռազմական համագործակցության սկիզբը դրվում է 1996թ., երբ մի քանի ամիսների ընթացքում ստորագրվում են մի շարք իրավական պայմանագրեր, այդ թվում՝ «Համաձայնագիր Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև տեխնիկական և գիտական ոլորտներում ռազմական ուսուցման համագործակցության մասին», «Արձանագրություն Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև Զինված Ուժերի աջակցող ծառայության աշխատակազմի անդամների համագործակցության մասին», «Արձանագրություն Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև Զինված Ուժերի բժշկական անձնակազմի ուսուցման ոլորտում համագործակցության մասին» փաստաթղթերը: Սակայն, վերջինները միայն իրավական նախադրյալ են հանդիսանում հետագա ավելի ընդգրկուն համագործակցության համար: Ավելին, հետագայում նկատվում է Թուրքիայի կողմից Ադրբեջանի ռազմական կառույցներին հովանավորելու և կատարելագործելու հետևողական միտում: 1999-2007թթ. ընթացքում Թուրքիան Ադրբեջանին տրամադրել է ամենամյա ռազմական ֆինանսական օժանդակություն և դրամաշնորհ, իսկ 2000թ. ի վեր ձեռնամուխ է եղել Ադրբեջանի բանակի նյութատեխնիկական աջակցության ապահովմանը: Այսպես, 2000թ. հուլիսի 1-ին ստորագրվում է «Արձանագրություն Ադրբեջանի Հանրապետության ՊՆ-ի և Թուրքիայի Հանրապետության Գլխավոր Շտաբի միջև նյութական և տեխնիկական գնումներ իրականացնելու մասին», իսկ 2000թ. հուլիսի 17-ին հաջորդում է «Ադրբեջանի Հանրապետության ՊՆ-ի և Թուրքիայի Հանրապետության Ռազմածովային Ուժերի Ղեկավարի միջև Ադրբեջանին AB-34 P-134 հարձակողական մոտորանավազ տալու մասին» որոշումը: Մի քանի ամիս անց կնքվում է «Համաձայնագիր Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Հանրապետության կառավարության միջև ռազմա-արդյունաբերական համագործակցության մասին»:

2002թ. ստորագրվում է «Արձանագրություն Ադրբեջանի Հանրապետության ՊՆ-ի և Թուրքիայի Հանրապետության Գլխավոր Շտաբի միջև ռազմական պատմության, ռազմական արխիվային ու թանգարանային աշխատանքի, ռազմական հրատարակության ոլորտներում համագործակցության մասին», 2003թ.՝ «Արձանագրություն Ադրբեջանի Հանրապետության ՊՆ-ի և Թուրքիայի Հանրապետության Գլխավոր Շտաբի միջև ռազմական հետախուզության ոլորտում համագործակցության մասին», 2004թ.՝ «Արձանագրություն Ադրբեջանի Հանրապետության ՊՆ-ի և Թուրքիայի Հանրապետության Գլխավոր Շտաբի միջև նյութական և տեխնիկական ապահովման մասին», ինչպես նաև ռազմական համագործակցության տարբեր ոլորտներ ներառող այլ իրավական փաստաթղթեր:

Տնտեսական ոլորտ

Թուրքիա-Ադրբեջան տնտեսական համագործակցությունը իրավական ձևակերպում է ստացել առաջին անգամ 1992թ. և ընդգրկել է բավականին լայն շրջանակ: 1992թ. նոյեմբերի 2-ին ստորագրվում են մի քանի փաստաթղթեր, որոնք ամրագրում են երկու պետությունների միջև համագործակցությունն առևտրի և տնտեսության, զբոսաշրջության, տրանսպորտի ենթակառուցների, փոքր և միջին արդյունաբերական ձեռնարկությունների զարգացման ոլորտներում: Ի տարբերություն մյուս ոլորտների, տնտեսական համագործակցությունն ունենում է բավականին հետևողական և դինամիկ զարգացում: Այսպես, 1994թ. կնքվում են «Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև գյուղատնտեսության ոլորտում տեխնիկական, գիտական և տնտեսական համագործակցության մասին» և «Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև մաքսային ոլորտում համագործակցության և փոխօգնության մասին» արձանագրությունները, 1997թ.՝ օդային և ծովային հաղորդակցության ոլորտում համագործակցության վերաբերյալ իրավական փաստաթղթեր: Հաջորդող տարիների ընթացքում ամրագրվում են հարկային, մաքսային, բանկային գործի կարգավորմանն ուղղված որոշումներ:

2007թ. ստորագրվում է «Համագործակցության ծրագիր և պլան Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև երկարաժամկետ տնտեսական համագործակցության իրականացման վերաբերյալ», որն էլ ավելի է խթանում երկու պետությունների տնտեսական համագործակցության զարգացումը:

Այսպիսով, վերոնշյալ իրավական քաղաքական, ռազմական, տնտեսական, ինչպես նաև մեր աշխատության հավելվածում զետեղված հումանիտար ոլորտն ընդգրկող փաստաթղթերի հիմնական սկզբունքներն ավելի ամբողջական և կատարելագործված տեսքով արտացոլվում են 2010թ. Թուրքիա-Ադրբեջան ռազմաստրատեգիական համաձայնագրում՝ դառնալով նախադրյալը 2010թ. «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագրի ձևավորման համար:

Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմաքաղաքական դաշինքի ձևավորման առաջին իրավաքաղաքական նախադեպը 1994թ. փետրվարի 9-ին Անկարայում ստորագրված «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև բարեկամության և բազմակողմանի համագործակցության մասին» պայմանագիրն ու «Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև համագործակցության և փոխօգնության մասին» արձանագրությունն են: Ընդ որում, եթե առաջինը կրում է ավելի ընդհանրական քաղաքական բնույթ, ապա երկրորդը համապատասխան իրավական հիմք է ստեղծում հետագա ռազմաքաղաքական դաշինքի կազմավորման գործում: «Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև համագործակցության և փոխօգնության մասին» արձանագրությունը, որը հիմնված է 1921թ. Կարսի պայմանագրի վրա, բաղկացած է 6 հոդվածներից, որոնց հիմնական սկզբունքներն առավել կատարելագործվելով՝ ամրագրվել են 2010թ. «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագրում:

2010 թվականը Հարավային Կովկասում նշանավորվում է կարևոր քաղաքական իրադարձություններով: Օգոստոսի 16-ին Բաքվում Ադրբեջանի ու Թուրքիայի նախագահներ Իլհամ Ալիևն ու Աբդուլլահ Գյուլը ստորագրում են «Ռազմավարական համագործակցության ու փոխօգնության մասին» ռազմավարական համաձայնագիրը:

Օգոստոսի 20-ին Երևանում Հայաստանի ու Ռուսաստանի նախագահներ Սերժ Սարգսյանն ու Դմիտրի Մեդվեդևը ստորագրում են «ՀՀ ու ՌԴ միջև 1995թ. մարտի 16-ի «ՀՀ և ՌԴ միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 5 արձանագրությունը, ըստ որի, 49 տարի ժամկետով երկարաձգվում է Գյումրիում տեղակայված ռուսաստանյան 102-րդ ռազմակայանի գործելաժամկետը: Քաղաքագիտական շրջանակներում այս երկու պայմանագրերը մեկնաբանվեցին որպես միմյանց հակակշռելու և տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը պահպանելուն միտված զուգահեռ գործընթացներ: Հարկ է նշել, սակայն, որ հրապարակումներում պայմանագրերը ներկայացվել են ընդհանուր գծերով, և սույն խնդրի վերաբերյալ բացակայում են մանրազնին ուսումնասիրություններ: Մինչդեռ նշյալ փաստաթղթերն առանցքային նշանակություն ունեն տարածաշրջանային քաղաքական գործընթացներն ըմբռնելու, գնահատելու և հետագա զարգացումների միտումները կանխատեսելու համար: Այս առումով հատկապես կարևոր է «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագրի քաղաքական և իրավական հիմքերի, բուն համաձայնագրի բովանդակության և դրանից բխող հնարավոր քաղաքական հետևանքների վերլուծությունը, քանի որ այն անմիջականորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ի ազգային անվտանգությանը:

Թուրք-ադրբեջանական հարաբերությունների հիմքում երկու պետությունների էթնիկ, լեզվական, պատմամշակութային և կրոնական առնչություններն են, նշյալ հիմքերով պայմանավորված պանթուրքիստական գաղափարախոսության ընդհանուր հենքը, ինչպես նաև աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նպաստավոր դիրքը:

2002թ. Թուրքիայի ներքաղաքական ուղեգծի փոփոխման և չափավոր իսլամական Արդարություն և Զարգացում Կուսակցության / Adalet ve Kalkinma Partisi- AKP/ իշխանության գալուց հետո փոխվում է նաև Թուրքիայի արտաքին քաղաքական ուղեգիծը: Նոր հայեցակարգի հիմքում ընկած էր նեո-օսմանյան գաղափարախոսության հետևորդ Ա. Դավուդօղլուի «Ռազմավարական խորություն»

(“Stratejik derinlik”) աշխարհաքաղաքական աշխատությունը: 2002թ. քաղաքական ասպարեզում ստանձնելով նախ Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդականի պաշտոնը, իսկ 2009թ. դառնալով Թուրքիայի արտաքին գործերի նախարարը, Ա. Դավութօղլուն ձեռնամուխ է լինում իր առաջադրած նոր հայեցակարգի իրագործմանը: Ուստի 2002թ. հետո թուրք-ադրբեջանական հարաբերությունների զարգացումները պետք է դիտարկել այդ հայեցակարգի սկզբունքների շրջանակներում:

Այսպես, ԱԶԿ-ի որդեգրած արտաքին քաղաքական նոր ուսմունքի հիմքում Թուրքիայի տարածաշրջանային գերտերություն դառնալու գաղափարն էր, որը Դավութօղլուն իր «Ռազմավարական խորություն» գրքում հիմնավորում է երկու բաղադրիչներով՝ Թուրքիայի պատմամշակութային ժառանգությամբ և նրա աշխարհագրական դիրքով:²¹⁴

Մասնավորապես, Ա. Դավութօղլուն պնդում է, որ Թուրքիան, ի տարբերություն Գերմանիայի, Ռուսաստանի, Իրանի և Եգիպտոսի, մաս է կազմում միաժամանակ մի քանի տարածաշրջանների /Բալկաններ, Մերձավոր Արևելք, Կովկաս, Միջին Ասիա, Կասպից, Սև և Միջերկրական ծովերի ավազան, Պարսից ծոցի շրջան/, ինչը թույլ է տալիս նրան մանևրել հավասարապես այդ բոլոր տարածքներում և ունենալ գլոբալ ռազմավարական դերակատարում: Միևնույն ժամանակ, նա ավելացնում է, որ վերոնշյալ պետությունների համեմատությամբ, Թուրքիան իր աշխարհագրական բացառիկ դիրքի շնորհիվ առանձնահատուկ «կենտրոնական ուժի» կարգավիճակ ունի, քանի որ գտնվում է երկու աշխարհամասերում՝ Ասիայում և Եվրոպայում, իսկ Միջերկրական ծովի միջոցով կապված է Աֆրիկային:²¹⁵

Դավութօղլուն նշում է, որ նման իդեալական աշխարհագրական դիրք և պատմական ակունքներ ունեցող պետությունը չպիտի վարի պաշտպանական արտաքին քաղաքականություն, հակառակը՝ պիտի ունենա նախաձեռնող, ակտիվ, բազմավեկտորային, կառուցողական դիվանագիտության ռազմավարություն:²¹⁶

²¹⁴ Ahmet Davutoglu, “Turkey’s Foreign Policy Vision: An Assessment of 2007”, Insight Turkey vol. 10. No. 1, 2008.p. (77-96), p. 79.

²¹⁵ Ioannis N. Grigoriadis, “The Davutoglu doctrine and Turkish Foreign Policy”. Bilkent University, Working Paper, No. 8/2010. April 2010. Middle Eastern Studies Programme, p. 4.

²¹⁶ Ahmet Davutoglu, “Turkey’s Foreign Policy Vision: An Assessment of 2007”, Insight Turkey, vol. 10, № 1, 2008, p.78.

Դավութօղլուի պաշտոնավարման ընթացքում Թուրքիայի վարած այդօրինակ արտաքին քաղաքականությունը՝ հայտնի դարձած «զրո խնդիր հարևանների հետ» կարգախոսով՝ պաշտոնապես կոչված էր կարգավորել ու զարգացնել հարաբերությունները Թուրքիայի բոլոր հարևան պետությունների հետ, հանուն տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովման: Իրականում այն հիմնված է «նեո-օսմանյան» գաղափարախոսության վրա, որը ենթադրում է նախկին Օսմանյան կայսրության ողջ տարածքում Թուրքիայի քաղաքական, տնտեսական և մշակութային ազդեցության և վերահսկողության վերականգնումը, նույն տարածքում տնտեսական գոտու ձևավորումը²¹⁷, որի իրագործման արդյունքում Թուրքիան պետք է վերածվի տարածաշրջանային գերտերության:

Թուրքիայի արտգործնախարար Ա. Դավութօղլուն, մի քանի առիթով նշել է, որ Թուրքիայի կառավարությունը, և ինքն անձամբ, վարում են նեո-օսմանյան քաղաքականություն: Այսպես, 2009թ.-ի ԱԶԿ-ի գլխավոր նստաշրջանի ժամանակ նա իր ելույթում շեշտել է. «Մենք Նոր օսմաններ ենք: Մենք պարտավոր ենք զբաղվել մեր հարևաններով և ավելի հեռու շրջաններով, այդ թվում նաև Աֆրիկայով»:²¹⁸

Մեկ այլ առիթով նա ասել է. «...Թուրքիան ունի մի քանի տարածաշրջանային ինքնություններ, ուստի ունի հնարավորություն և պատասխանատվություն վարելու ինտեգրված և բազմավեկտորային քաղաքականություն: Մեր պատմության և աշխարհագրության եզակի համադրությունը առաջացնում է պատասխանատվության զգացում: Հակամարտության կարգավորմանը, միջազգային խաղաղությանը և անվտանգությանը ակտիվորեն նպաստելը պարտականության կանչ է, որը բխում է Թուրքիայի բազմատարածական պատմության խորքերից»:²¹⁹

Այսպիսով, Թուրքիան սկսում է վարել բավականին ակտիվ արտաքին քաղաքականություն՝ հատկապես նախկին Օսմանյան կայսրության տարածաշրջանում, առաջնահերթությունը տալով «զրո խնդիր հարևանների հետ» բանաձևի իրագործմանը: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ Թուրքիայի կողմից այդ նոր

²¹⁷ Зоран Милошевич, “Почему обновляется Османская политика?”, Институт политических исследований, Белград, 03.03.2010.

²¹⁸ Takvim, 24.11.2009.

²¹⁹ Turkey's new visionary: One Middle East country is forging ahead with plans to become a regional superpower, Al Jazeera, 18 Jul 2010

արտաքին քաղաքական հայեցակարգի որդեգրումը պետք է դիտարկել իբրև ոչ այնքան ռազմավարական, որքան մարտավարական փոփոխություն՝ պայմանավորված աշխարհակառուցման նոր գործընթացներում իր համապատասխան տեղը զբաղեցնելու և աշխարհաքաղաքական վերաձևավորումներին համահունչ լինելու անհրաժեշտությամբ:

Ուստի, ռազմավարական, ռազմաքաղաքական և տնտեսաքաղաքական տեսանկյունից Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղեգիծը շարունակում է մնալ գործնականում գրեթե անփոփոխ՝ ենթարկվելով միայն ժամանակակից «խաղի օրենքներին» համապատասխան մարտավարական ձևափոխումների և հայեցակարգային վերաձևակերպումների:

Այս առումով, 2002թ. հետո Թուրքիայի վարած քաղաքականության ռազմավարությունն Ադրբեջանի նկատմամբ ևս գործնականում մնում է անփոփոխ և հիմնավորվում որդեգրված նոր հայեցակարգում:

Այսպես, «Ռազմավարական խորություն» աշխատությունում Ա. Դավութօղլուն Ադրբեջանը ներկայացնում է որպես անմիջականորեն Թուրքիայի արտաքին քաղաքականությանը և ներքին ամբողջականության պահմանմանը նպաստող երեք աշխարհաքաղաքական գոտիներից²²⁰ երկուսում գտնվող պետություն²²¹: Հատկապես շեշտվում է մերձցամաքային տարածքների, մասնավորապես Ռուսաստանի սպառնալիքների դեմ «բախարգելիչ գոտի» հանդիսացող Կովկասի նշանակությունը, քանզի «.... Անատոլիական պետությունը, որը Բալկաններում, Կովկասում և Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձություններում ազդեցիկ դեր չունի, ի վիճակի չէ պահպանել իր ներքին ամբողջականությունը...»²²²:

«Ռազմավարական խորություն» գրքում, որպես Թուրքիայի կովկասյան կարևորագույն դաշնակից և Կովկասի, Կասպից ծովի ու Միջին Ասիայի հետ

²²⁰ Տես՝ Ahmet Davutoğlu, “Stratejik Derinlik”, İstanbul, 2009, Sayı 34, s. 117. Դավութօղլուն առանձնացնում է Թուրքիայի աշխարհաքաղաքական երեք գոտիներ. 1. Մերձցամաքային հարող տարածքներ՝ Մերձավոր Արևելք, Կովկաս; 2. Մերձծովյան հարող տարածքներ՝ Սև ծով, Ադրիատիկ ծով, Կարմիր ծով, Արևելյան Սպիտակ ծով, Պարսից ծոց, Կասպից ծով; 3. Մերձաշխարհամասային տարածքներ՝ Ասիա, Հյուսիսային Աֆրիկա, Հարավային Ասիա, Մերձավոր և Արևելյան Ասիա:

²²¹ Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik, Küre Yayınları, İstanbul 2009, Sayı 34, s. 118.

²²² Տես, նույն տեղում, էջ 117:

Թուրքիայի հարաբերություններում հիմնական դերակատար, նշվում է Ադրբեջանը: Ընդգծելով վերջինիս հատուկ նշանակությունը Թուրքիայի համար, ասվում է. «Թուրքիան ի վիճակի չի լինի ընդլայնել իր ազդեցության ոլորտը Կասպից ծովի տարածաշրջանում, քանի դեռ Ադրբեջանը ձեռք չի բերել ուժեղ և հաստատուն տարածաշրջանային դիրք»:²²³

Միևնույն ժամանակ, Դավութօղլուն «...հայ-ադրբեջանական պատերազմի արդյունքում Ադրբեջանի տարածքի մի մասի գրավումը...» համարում է Թուրքիայի ամենամեծ ռազմավարական պարտությունը:²²⁴

Այսպիսով, Թուրքիայի արտաքին քաղաքական հայեցակարգում ամրագրվում է Ադրբեջանի հետ հարաբերությունների զարգացման ռազմավարական նշանակությունը:

Գործնականում ևս, թուրք-ադրբեջանական հարաբերությունները շարունակում են դինամիկ զարգանալ բոլոր ոլորտներում: Դրա ապացույցն է 2010թ. «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագրի ստորագրումը, որը երկու երկրների հարաբերություններին բարձրացնում է որակական նոր մակարդակ:

Այսպիսով, թուրք-ադրբեջանական ռազմավարական համաձայնագիրն ունի հաստատուն գաղափարական-քաղաքական հիմք և նախադրյալներ, ուստի հատկապես աշխարհաքաղաքական վերջին զարգացումների համատեքստում նրա ստորագրումը միանգամայն կանխատեսելի էր:

2010թ. օգոստոսի 16-ին Բաքվում Թուրքիայի և Ադրբեջանի նախագահների կողմից ստորագրվում, ապա 2011թ. դեկտեմբերի 21-ին Ադրբեջանի խորհրդարանի կողմից վավերացվում է «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագիրը, որը ուժի մեջ է մտնում վավերացման գործիքների փոխանակումից հետո՝ 10 տարի ժամկետով ու ևս 10 տարի երկարացման պայմանով, եթե 6 ամիս առաջ կողմերը չներկայացնեն պայմանագրի դադարեցման մասին ծանուցում:

²²³ Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik, Küre Yayınları, İstanbul 2009, Sayı 34, s. 127:

²²⁴ Տես, նույն տեղում, էջ 126:

Համաձայնագիրը կազմված է 23 հոդվածից և 5 բաժնից՝ «Ռազմաքաղաքական և անվտանգության հարցեր», «Ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության հարցեր», «Տնտեսական համագործակցության հարցեր», «Հումանիտար ոլորտում համագործակցության հարցեր», «Ընդհանուր և վերջնական դրույթներ»: Համաձայնագրի իրավական հիմքը կազմում են 1921 թ. հոկտեմբերի 13-ին ստորագրված Կարսի, 1994թ. փետրվարի 9-ին ստորագրված «Թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետությունների միջև բարեկամության և բազմակողմանի համագործակցության զարգացման մասին» պայմանագրերը և «Թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետությունների միջև համագործակցության և փոխօգնության մասին» արձանագրությունը:

Այժմ անդրադառնանք համաձայնագրի հիմնական սկզբունքներին:²²⁵

«Ռազմաքաղաքական և անվտանգային հարցեր»

Հոդված 1-ի համաձայն՝ կողմերը՝ որպես հարևան և եղբայրական պետություններ, պարտավորվում են սերտ համագործակցել միմյանց անկախության, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության ապահովման և պաշտպանության համար, իսկ վտանգի կամ սպառնալիքի առկայության կասկածի դեպքում համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար իրականացնել անհետաձգելի խորհրդատվություն:

Հոդված 2-ի համաձայն, եթե կողմերից մեկը ենթարկվի որևէ երրորդ պետության կամ պետությունների խմբի զինված հարձակման կամ ագրեսիայի, կողմերը պարտավորվում են հնարավորությունների շրջանակներում ձեռնարկել ամեն անհրաժեշտ, այդ թվում նաև ռազմական միջոցներ, փոխադարձաբար աջակցելու համար:

Հոդված 3-ի համաձայն, նախատեսվում է թուրք-ադրբեջանական սերտ համագործակցություն պաշտպանական և ռազմատեխնիկական քաղաքականության, իսկ ըստ հոդված 4-ի՝ ազգային անվտանգության ապահովման, սպառնալիքների և վտանգների կանխման ու վերացման ոլորտներում:

²²⁵ “Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Stratejik Ortaklık ve Karşılıklı Yardım Anlaşması”, Bakü, 16 Ağustos, 2010, www.tbmm.gov.tr.

Հոդված 5-ի համաձայն, կողմերը պարտավորվում են արգելել իրենց տարածքում մյուս կողմի անկախությանը, ինքնիշխանությանը կամ տարածքային ամբողջականությանը սպառնացող կազմակերպությունների կամ խմբավորումների ստեղծումն ու գործունեությունը: Նույն հոդվածում կողմերը պարտավորվում են նաև թույլ չտալ իրենց տարածքի օգտագործումը մյուս կողմի դեմ ուղղված ագրեսիվ գործողություններ ձեռնարկելու համար:

Հոդված 6-ի համաձայն, կողմերը պարտավորվում են ամրապնդել և խորացնել համագործակցությունը տարածաշրջանային ու միջազգային կայունության և անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների, հատկապես՝ բոլոր ձևերի ահաբեկչության և դրա դրսևորումների ու ֆինանսավորման, զանգվածային ոչնչացման զենքի տարածման, կազմակերպված հանցավորության, փողերի լվացման, թմրանյութերի և մարդկանց անօրինական առևտրի դեմ պայքարում:

Ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության հարցեր

Հոդված 7-ի համաձայն՝ կողմերը պարտավորվում են կատարել զինված ուժերի իրավապահ և կառավարման կառույցների փոխադարձ համակարգման անհրաժեշտ պլանավորում:

Հոդված 8-ում նախատեսվում է հոդված 2-ում սահմանված պաշտպանական համագործակցության և փոխօգնության շրջանակներում համատեղ ռազմական գործողությունների իրականացման նպատակով ռազմական ենթակառույցների, զինված ուժերի բազմակողմանի պատրաստականության, անհրաժեշտ զենքի և ռազմական փոխադրամիջոցների ապահովման ուղղությամբ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ պետական միջոցները:

Հոդված 9-ում նշվում են պաշտպանական համագործակցության շրջանակներում կողմերի նախատեսվող միջոցառումները, այն է՝ պաշտպանական արտադրանքների և նյութատեխնիկական միջոցների ապահովումը, պաշտպանական արտադրանքների նախագծումը և թողարկումը, պաշտպանական ոլորտում ծառայությունների մատուցումը, համատեղ զորավարությունների և պաշտպանական պատրաստությանն ուղղված աշխատանքները, զինված ուժերի համար մասնագետների պատրաստումը, զինված ուժերի նյութատեխնիկական ապահովում,

ռազմաբժշկական օգնությունը և փոխադարձ աջակցությունն այլ փոխհամաձայնեցված ոլորտներում:

Տնտեսական համագործակցության հարցեր

Հոդված 10-ում նախատեսվում է կողմերի միջև երկու պետությունների ներուժին համապատասխան առևտրական և տնտեսական հարաբերությունների զարգացում, տնտեսական փոխհամարկման խորացման ինտենսիվացում:

Հոդված 11-ի համաձայն, կողմերը պարտավորվում են զարգացնել համագործակցությունը փոխադարձ ներդրումային և առևտրային հարաբերությունների, արտահանման խթանման, արդյունաբերության, ֆինանսաբանկային, գյուղատնտեսության, սննդի և թեթև արդյունաբերության, տեղեկատվության ու հեռահաղորդակման տեխնոլոգիաների, կապի, տրանսպորտի ու զբոսաշրջության, այլընտրանքային էներգետիկայի և այլ տնտեսական ոլորտներում:

Հոդված 12-ի համաձայն, կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ համընդհանուր ու տարածաշրջանային էներգետիկ անվտանգությունը, համընդհանուր նշանակությամբ էներգետիկ ծրագրերով նախատեսված, իրենց տարածքով անցնող փոխադրառուղիների շարունակական շահագործումն ապահովելու համար: Բացի այդ, կողմերը համաձայնություն են հայտնում իրենց և երրորդ երկրներում ածխաջրածնային պաշարների վերամշակումը, փոխադրումը և իրացումն ապահովելու համար համատեղ ներդրումային ծրագրերի իրականացման և այդ նպատակով համապատասխան կառույցների ու կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի ստեղծման հարցում:

Տնտեսական համագործակցության հարցեր

Հոդված 10-ում նախատեսվում է կողմերի միջև երկու պետությունների ներուժին համապատասխան առևտրական և տնտեսական հարաբերությունների զարգացում, տնտեսական փոխհամարկման խորացման արագացում:

Հոդված 11-ի համաձայն, կողմերը պարտավորվում են զարգացնել համագործակցությունը փոխադարձ ներդրումային և առևտրային հարաբերությունների, արտահանման խթանման, արդյունաբերության,

ֆինանսաբանկային, գյուղատնտեսության, սննդի և թեթև արդյունաբերության, տեղեկատվության ու հեռահաղորդակման տեխնոլոգիաների, կապի, տրանսպորտի ու զբոսաշրջության, այլընտրանքային էներգետիկայի և այլ տնտեսական ոլորտներում:

Հոդված 12-ի համաձայն, կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ համընդհանուր ու տարածաշրջանային էներգետիկ անվտանգությունը, համընդհանուր նշանակությամբ էներգետիկ ծրագրերով նախատեսված, իրենց տարածքով անցնող փոխադրառուղիների շարունակական շահագործումն ապահովելու համար: Բացի այդ, կողմերը համաձայնություն են հայտնում իրենց և երրորդ երկրներում ածխաջրածնային պաշարների վերամշակումը, փոխադրումը և իրացումն ապահովելու համար համատեղ ներդրումային ծրագրերի իրականացման և այդ նպատակով համապատասխան կառույցների ու կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի ստեղծման հարցում:

Հոդված 13-ում նախատեսվում է կողմերի սերտ համագործակցությունն իրենց տարածքում գտնվող օդանավակայաններով ու ծովային նավահանգիստներով, երկաթուղային ու ավտոճանապարհային ցանցով ուղևորների և բեռների անարգել անցումն ապահովելու և տարանցիկ փոխադրման կապուղիների ու տրանսպորտի այլ ոլորտներին վերաբերող ենթակառուցվածքները զարգացնելու գործում:

Հումանիտար ոլորտում համագործակցության հարցեր

Հոդվածներ 14-20-ի համաձայն, կողմերը պարտավորվում են խթանել միջխորհրդարանական համագործակցության զարգացումը, ինչպես նաև սերտ համագործակցությունն անձի և սոցիալական անվտանգության, պատմամշակութային ժառանգության պահպանման, առողջապահության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի ոլորտներում: Կողմերը պարտավորվում են նաև նպաստել մտավոր, գիտական, տեխնիկական ներուժի, տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների միջև համագործակցության զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանմանն ու կլիմայի փոփոխության բացասական հետևանքների կանխմանը, պարենային անվտանգության ապահովմանը: Բացի այդ, կողմերը անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում մյուս կողմի

քաղաքացիների համար իրենց երկիր ելք ու մուտք գործելու, աշխատանքի ու սոցիալական անվտանգության և անշարժ գույքի ձեռքբերման մեխանիզմների պարզեցման ուղղությամբ:

Ընդհանուր և ամփոփիչ դրույթներ

Հոդված 21–23-ում կողմերը պարտավորվում են դրույթների մեկնաբանման կամ իրագործման ժամանակ ծագող ցանկացած վեճ լուծել բարեկամաբար, երկկողմ բանակցությունների միջոցով՝ հիմք ընդունելով պայմանագրի երկլեզվյան՝ թուրքերեն և ադրբեջաներեն, բնօրինակները: Հոդված 23-ի համաձայն, սահմանվում է նաև համաձայնագրի գործողության ժամկետը:

Այսպիսով, դիտարկելով «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագրի վերը նշված հիմնական սկզբունքները, կարելի է ևս մեկ անգամ հաստատել Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքի աշխարհաքաղաքական և տնտեսաաշխարհագրական կարևորությունը՝ տարածաշրջանային զարգացումների վրա հնարավոր ազդեցության տեսանկյունից: Այս համատեքստում հարկ է անդրադառնալ պայմանագրի այն հիմնական կետերին, որոնք այս կամ այն կերպ կարող են սպառնալ տարածաշրջանի կայունությանը և խաղաղությանը և հատկապես՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգությանը:

Այսպես, Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների վերսկսման դեպքում, համատեղ պաշտպանության և փոխօգնության մասին հոդված 2-ը կարող է հիմք լինել ընդդեմ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության ռազմական համագործակցության համար: Այն չի բացառում մի կողմի՝ տվյալ դեպքում Թուրքիայի անմիջական ռազմական միջամտությամբ մյուս կողմին՝ Ադրբեջանին, համապատասխան օժանդակության ցուցաբերումը: Ուստի, պատերազմական գործողությունների վերսկսման դեպքում, պետք է հաշվի առնել ոչ միայն Թուրքիայի ռազմական և ռազմատեխնիկական աջակցությունն Ադրբեջանին, այլև թուրքական զինված ուժերի հնարավոր անմիջական միջամտությունը: Խնդրի այլ կողմն է զարգացումների նման սցենարի հավանականությունը, քանի որ պայմանավորված է

աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումներից բխող մի շարք գործոններով:

Շատ վերլուծաբաններ հնարավոր են համարում թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության շրջանակներում Թուրքիայի ռազմակայանի տեղակայումը Ադրբեջանի տարածքում, ընդ որում, որպես այդպիսի առավել հավանական տարածք, նշվում է Նախիջևանը:²²⁶ Եվ չնայած պետք չէ բացառել նման զարգացման հնարավորությունը, այնուամենայնիվ պետք է նշել, որ քանի դեռ Իրանն ու Ռուսաստանն ունեն իրենց շահերն այդ տարածքում, դեպքերի նման զարգացումը քիչ հավանական է:

Ուշադրության է արժանի նաև հոդված 5-ը, որն ուղղված է Թուրքիայի կողմից որպես ահաբեկչական կազմակերպություն համարվող Քրդական Բանվորական Կուսակցության՝ ԲԲԿ (Partiye Karkaren Kurdistan)-ի դեմ: Բանն այն է, որ Թուրքիան ժամանակ առ ժամանակ մեղադրում է Ադրբեջանին իր տարածքում ԲԲԿ-ի ճամբարների տեղակայմանը աջակցելու մեջ, իսկ վերը նշված հոդվածի համաձայն, Կողմերն իրավական պարտավորություն են ստանձնում արգելելու սպառնալիք հանդիսացող կազմակերպությունների գործունեությունն իրենց տարածքում և թույլ չտալու իրենց տարածքի օգտագործումը միմյանց դեմ ագրեսիվ գործողությունների կազմակերպման նպատակով: Ուստի պայմանագրի այս կետը, համապատասխան քաղաքական իրավիճակի դեպքում կարող է օգտագործվել ԼՂ-ի դեմ:²²⁷

Վերլուծաբանների և մամուլում տեղ գտած քաղաքական մեկնաբանությունների զգալի մասը թուրք-ադրբեջանական ռազմական դաշինքը դիտարկում է որպես

²²⁶ Տես՝ օրինակ, “В Азербайджане может появиться военная база Турции: Баку и Анкара готовят симметричный ответ Еревану и Москве”, “Независимая газета”, 20.08.2010 (http://www.ng.ru/cis/2010-08-20/1_azer.html); “Парламент Азербайджана ратифицировал военное соглашение с Турцией”, ИА “REGNUM”, 21.12.2010 (<http://www.regnum.ru/news/1358915.html>); Թուրքիան մարտահրավեր է նետել Ռուսաստանի կովկասյան տրիումֆին», “NEWS.am”, 25.08.2010 (<http://news.am/arm/news/28724.html>); ShahinAbbasov, Azerbaijan-Turkey Military Pact Signals Impatience with Minsk Talks – Analysts, 18 January 2011 (<http://www.eurasianet.org/node/62732>); “Турецкая база в Нахчыване-неизбежность”, 24.08.2010 (<http://azeritoday.com/archives/19564>); «Քաղաքագետ. Թուրքական ռազմաքաղաքական հնարավոր տեղակայումը կօգնի ետ բերել Նախիջևանը», 6.08.2010 (<http://www.panorama.am/am/politics/2010/08/26/shirinyan/>)

²²⁷ Ի դեպ, Գաբալա ռադիոտեղորոշիչ կայանի շահագործման ժամկետի երկարացման վերաբերյալ Ռուսաստանին ներկայացված Ադրբեջանի պայմանը՝ կայանը ոչ մի դեպքում Թուրքիայի դեմ չօգտագործելու երաշխիքներ պահանջելու մասին, նույնպես հիմնված է 2010թ. թուրք-ադրբեջանական ռազմավարական համաձայնագրի Հոդված 5-ի սկզբունքների վրա: Տես՝ Новое условие Баку: Габалинское РЛС не должна быть направлена против Турции”, “Военное обозрение”, 29.04.2012, <http://topwar.ru/13942-baku-postavil-moskve-novoe-uslovie-po-gabalinskoy-rls.html>

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի դեմ ուղղված քայլ, ուղղակիորեն կապելով այն նույն տարվա հայ-ռուսական արձանագրության ստորագրման հետ²²⁸, որով Գյումրիի ռուսական ռազմակայանի մասին 1995 թ. ստորագրված երկկողմ պայմանագրի գործողության ժամկետը երկարացվում է, և նախկին 25 տարվա փոխարեն գործելու է 49 տարի՝ սկսած 1995 թվականից: Թուրք-ադրբեջանական ռազմավարական համաձայնագիրը, նույնացվելով 1997թ. «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագրի հետ, մեկնաբանվում է որպես արժանի հակակշիռ՝ ուղղված Հարավային Կովկասում ուժերի հավասարակշռության պահպանմանը: Սակայն հարկ է նշել, որ տվյալ մոտեցմանը կարելի է վերաբերել քննադատորեն, քանի որ.

ա. Թուրք-ադրբեջանական հարաբերությունները, Ադրբեջանի պետականության ձևավորման առաջին օրից, ունեցել են կայուն գաղափարական հիմք, որը բացակայում է հայ-ռուսական հարաբերություններում:

բ. Թուրքիայի վարած տարածաշրջանային քաղաքականությունը ևս հիմնված է հստակ գաղափարախոսության վրա, որը տարբեր ժամանակներ տարբեր կերպ կոչվելով /պանթուրքիզմ, պանթուրանիզմ, պանիսլամիզմ, թուրքական եվրասիականություն, նեո-օսմանիզմ / և որոշ մարտավարական փոփոխությունների ենթարկվելով, չի փոխել իր էությունը, ինչը չի կարելի ասել Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության մասին, որը ենթարկվում է պարբերական փոփոխությունների և չունի հստակ տեսլական:

գ. Թուրք-ադրբեջանական ռազմավարական համաձայնագրի ստորագրումը չի կարող պայմանավորված լինել հայ-ռուսական արձանագրության վերահաստատմամբ, քանի որ, ի տարբերություն արդեն գոյություն ունեցող արձանագրությանը, որի միայն ժամկետը և 1-2 կետն էին ենթակա փոփոխության, ռազմավարական համաձայնագրի կազմումը կպահանջեր առնվազն մեկ, իսկ ավելի իրատեսաբար, մի քանի տարիների

²²⁸ Տես օրինակ՝ «Բաքուն ու Անկարան փորձում են ստեղծել ռազմական և ռազմավարական դաշինք ի հակակշիռ հայ-ռուսական դաշինքի», 25/12/2010, www.panarmenian.net; “Turkey-Azerbaijan strategic alliance treaty and Russia-Armenia military agreement: Status-quo in the South Caucasus remains unchanged”, 20/08/2010, <http://en.apa.az>; “Turkish-Azerbaijani Agreement An Indirect Response to Russian-Armenian Agreement on Russian Military Base in Armenia” 17/08/2010, www.1news.az, “Баку и Анкара готовят симметричный ответ Еревану и Москве” Независимая газета, 20/08/2010, www.ng.ru

աշխատանք: Այդ տեսանկյունից ավելի տրամաբանական է հայ-ռուսական արձանագրության վերաձևակերպումը դիտարկել որպես թուրք-ադրբեջանական դաշինքի քաղաքական հակակշիռ: Բացի այդ, հայ-ռուսական արձանագրության փոփոխությունները վերաբերում են միայն Գյումրիում տեղակայված ռուսական ռազմակայանի գործունեության ժամկետին, այնինչ, թուրք-ադրբեջանական համաձայնագիրը ներառում է երկկողմանի սերտ համագործակցություն բոլոր հնարավոր ոլորտներում, իսկ որպես իրավական փաստաթուղթ՝ ունի ավելի բարձր կարգավիճակ:

դ. Թուրք-ադրբեջանական ռազմավարական համաձայնագիրը չի կարող նույնացվել 1997թ. «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագրի հետ, քանի որ, չնայած պայմանագրերի բուն տեքստի որոշակի նմանությանը, այդուհանդերձ քաղաքական առումով թուրք-ադրբեջանական դաշինքը շատ տարբեր է հայ-ռուսական դաշինքից: Թուրքիան Հարավային Կովկասում ռազմաքաղաքական դաշինք ունի միայն Ադրբեջանի հետ, որոնց հարաբերությունները 1993թ. պաշտոնապես դիտարկվում են «Մեկ ազգ-երկու պետություն» բանաձևի ներքո, իսկ թուրք-հայկական դիվանագիտական հարաբերություններ այդպես էլ չհաստատվեցին Թուրքիայի՝ եղբայրական Ադրբեջանին ղարաբաղյան հակամարտության հարցում քաղաքական օժանդակություն ցույց տալու պատճառով: Մինչև օրս Թուրքիան շարունակում է շրջափակել Հայաստանի հետ սահմանը՝ դա պայմանավորելով Ադրբեջանի օգտին ղարաբաղյան հարցի կարգավորման հետ:

Հակառակ Թուրքիայի, Ռուսաստանը ԽՍՀՄ փլուզումից ի վեր չունի հստակ հարավկովկասյան քաղաքականության ռազմավարություն, գործում է պահի նպատակահարմարությամբ: Հարավային Կովկասում Ռուսաստանը ռազմավարական պայմանագիր ունի Հայաստանի հետ, սակայն գրեթե հավասարազոր բազմաբնույթ պայմանագրեր ունի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանն ուղղակիորեն սպառնալիք հանդիսացող Ադրբեջանի և Թուրքիայի հետ, ընդ որում վերջիններիս հետ քաղաքական, ռազմական, տնտեսական հարաբերություններն անընդհատ աճ են արձանագրում: Ռուսաստանը նաև բավականին հաճախ

պաշտոնական մակարդակով հայտարարում է Ադրբեջանի և Թուրքիայի հետ իր հարաբերությունների առանձնահատուկ կարևորության և նշանակության մասին:²²⁹ Ուստի, միանգամայն ակնհայտ է, որ թուրք-ադրբեջանական դաշինքը էապես տարբերվում է հայ-ռուսական համագործակցությունից:

Ե. Թուրք-ադրբեջանական ռազմավարական համաձայնագրի ստորագրումը սխալ է դիտարկել որպես բացառապես Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ուղղված քայլ: Պայմանագրի թիվ 2 Հոդվածը, ինչպես նաև ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության մյուս հոդվածները, համապատասխան քաղաքական զարգացումների դեպքում կարող են կիրառվել նաև Իրանի և Ռուսաստանի դեմ: Իզուր չէ, որ վերջին շրջանում Թուրքիան ակտիվ օժանդակություն և պատրաստակամություն է ցուցաբերում Ադրբեջանի ռազմածովային ուժերի զարգացման հարցում:

Որոշ վերլուծաբաններ, այդ թվում ադրբեջանցի քաղաքագետ, 1990-1999թթ. Ադրբեջանի նախագահի խորհրդական Վաֆա Գուլուզադեն, պնդում են, որ թուրք-ադրբեջանական նմանօրինակ համաձայնագրի ստորագրման պահը վաղուց հասունացել էր, և Հայաստանում ռուսական ռազմակայանի գործելաժամկետի երկարացումը պարզապես արագացրեց այդ գործընթացը:

Առկա են նաև այլ մեկնաբանություններ, թե Թուրքիան այդ համաձայնագրով ձգտել է հարթել Ադրբեջանի հետ այն տարաձայնությունները, որոնք առաջացել էին թուրք-հայկական «ֆուտբոլային դիվանագիտության» շուրջ:

Այսպիսով, վերլուծելով «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագրի հիմնական սկզբունքները, հաշվի առնելով նրա քաղաքական և իրավական հիմքերը, կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

ա. Թուրք-ադրբեջանական դաշինքը սպառնալիք է ներկայացնում ՀՀ ազգային անվտանգությանը, ինչպես դա նշված է ՀՀ «Ազգային անվտանգության

²²⁹ “Совместная пресс-конференция по итогам российско-азербайджанский переговоров”, 03.09.2010 (<http://www.kremlin.ru/transcripts/8824>); Фаик Меджид. Дмитрий Медведев: Азербайджан-стратегический партнер России на Кавказе. “ Кавказский узел”, 03.07.2008 ((<http://dagestan.kavkaz-uzel.ru/articles/138707>); “ Россия и Турция пдтвердили курс на стратегическое партнерство”, “ Вестник Кавказа”, 16.03.2011 (<http://vestikavkaza.ru/news/ politika/diplomatia/34316.html>); Фарук Аккан, Турция и Россия работают над стратегическим союзом, “Today's Zaman”, 30.01.2012 (<http://inosmi.ru/asia/20120130/184351878.html>)

ռազմավարության» 3-րդ կետում²³⁰ և «Ռազմական դոկտրինի» 1-ին գլխի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերում²³¹,

բ. 2010թ. թուրք-ադրբեջանական ռազմավարական համաձայնագիրը, ունենալով կայուն գաղափարական հիմք և քաղաքական համապատասխան նախադրյալներ, առանցքային նշանակություն կարող է ունենալ տարածաշրջանային հետագա զարգացումների վրա:

գ. Թուրք-ադրբեջանական ռազմավարական համաձայնագիրը ներկա աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում հանդիսանում է միջազգային ուժերի հարաբերակցության հավասարակշռությունը խախտող և ազդեցությունների հաշվեկշիռը փոխելուն նպատակաուղղված ապակայունացնող գործոն:

2.3 Վրաստանի ներգրավումը Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքի ազդեցության ոլորտում

2008 թ. ռուս-վրացական «Հնգօրյա պատերազմը» փոխեց Հարավային Կովկասում ԽՍՀՄ փլուզումից հետո աշխարհաքաղաքական գործընթացների նախկին ընթացքը: Մինչև 2008թ., Հարավային Կովկասում տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումները հիմնականում ընթանում էին Արեւմուտք (մասնավորապես՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա)-Ռուսաստան պայքարի համատեքստում, և որպես այդ ամենի արդյունք՝ առավել շահեկան դիրքերում էր գտնվում Հարավային Կովկասի երեք հանրապետություններից առնվազն երկուսում՝ Ադրբեջանում և Վրաստանում իր ազդեցության լծակներն ամրապնդող Արեւմուտքը:

Ուստի, մինչ այդ բավականին թուլացած եւ Հարավային Կովկասում կրավորական քաղաքականություն վարող Ռուսաստանը ստիպված էր ընտրել տարածաշրջանից վերջնականապես հեռանալու կամ իր դիրքերն ամրապնդելուն

²³⁰ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 18:

²³¹ Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեղեր», 2007, հմ. 4:

նպաստող որոշակի գործողություններ ձեռնարկելու զույգ տարբերակներից մեկը: Պատճառն այն էր, որ արեւմտամետ քաղաքական գործիչ Զուրաբ Ժվանիայի²³² աջակցությամբ 1995 թ. քաղաքականություն մուտք գործած և 2003 թ. «վարդերի հեղափոխությամբ» իշխանության եկած Մ. Սահակաշվիլին սկսել էր վարել Վրաստանը ԵՄ եւ ՆԱՏՕ կառույցներին անդամակցելու քաղաքականություն: Եթե Վրաստանի մուտքը ԵՄ քիչ իրատեսական էր, ապա Ռուսաստանի առավել անկայուն եւ պայթյունավտանգ տարածաշրջանին՝ Հյուսիսային Կովկասին սահմանակից Վրաստանում ՆԱՏՕ-ի ռազմաբազաների տեղակայման հեռանկարը, Ռուսաստանը համարում էր սպառնալիք իր ազգային անվտանգությանը, ինչը կնշանակեր Ռուսաստանի ազդեցության անվերադարձ կորուստ հարավկովկասյան մյուս երկու պետությունների նկատմամբ ևս: 2008 թ. Ռուսաստանը կանգնել էր նախ՝ Արեւմուտքի ծավալումը կասեցնելու, ապա իր գործուն ներկայությունը Հարավային Կովկասում վերահաստատելու խնդրի առաջ: Ուստի, պատերազմի արդյունքում Վրաստան-Ռուսաստան դիվանագիտական հարաբերությունների խզումով ստեղծվեց իրավիճակ, երբ ռազմավարական կարևոր դիրք ունեցող Վրաստանը՝ որպես տարանցիկ երկիր, կասեցնում է Ռուսաստանի տեղաշարժը տարածաշրջանում՝ ինքնաբերաբար նպաստելով Հարավային Կովկասում Թուրքիայի առաջխաղացմանը: 2008թ. հետո, Վրաստանում բարձրացած հակառուսաստանյան ալիքին զուգընթաց, բարելավման նոր հանգրվանն են թևակոխել վրաց-թուրքական և վրաց-ադրբեջանական հարաբերությունները, որոնց դիտարկման համար հարկ է հաշվի առնել ոչ միայն Արևմուտք (ԱՄՆ) - ՌԴ հարավկովկասյան պայքարը, այլև Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի պետական շահերի ինչպես համընկնումը, այնպես էլ բախումը:

2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո մեկուսանալով հյուսիսային հարևան Ռուսաստանից և պաշտոնապես հրաժարվելով ԱՊՀ անդամակցությունից, Վրաստանը շարունակում է իրագործել եվրոատլանտյան կառույցներին համարկվելու քաղաքականությունը: Այս ծրագրի իրականացումը, անշուշտ, երկարաժամկետ բնույթ ունի և պահանջում է համապատասխան քաղաքական իրավիճակի ձևավորում: Տվյալ

²³² Жабә Девдариани, Политическое балансирование Эдуарда Шеварнадзе, IWPR, CRC Issue No. 80, 21. 02. 2005.

Ժամանակահատվածում ընթանում է Վրաստանի հարաբերությունների շարունակական սերտացումը Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Հատկանշական է, որ դեռևս 2006 թ. դեկտեմբերին, նախագահ Մ. Սահակաշվիլին Թուրքիա կատարած այցի ժամանակ, Աթաթուրքի դամբարանում հայտարարեց, որ նա է իր իդեալը²³³, իսկ Հարավային Օսիայում 2008 թ. իրադարձությունների շեմին, Սահակաշվիլին Ադրբեջանն անվանեց իր երկրի «անկախության երաշխավորը (գարանտ)»:²³⁴ Վրաստանի արտաքին քաղաքական ուղղվածության 2006-2009 թ. փաստաթղթում Թուրքիան ներկայացված է որպես ուղղվածության դաշնակից, հատկապես անվտանգության, պաշտպանության, տնտեսության, առևտրի և էներգետիկայի ոլորտներում:²³⁵ 2010 թ. ամռանը Ի. Ալիևի Բաթում կատարած այցի ժամանակ Մ. Սահակաշվիլին Վրաստան-Ադրբեջան հարաբերությունները բնութագրել է որպես ապագա համադաշնություն՝ նշելով երկկողմ հարաբերությունների նմանատիպ բնույթը բոլոր՝ տնտեսությունից մինչև արտաքին քաղաքականության ոլորտներում:²³⁶ Ավելին, ըստ Սահակաշվիլիի, ապագա համադաշնությունը պետք է ներառի նաև տարածաշրջանային գերտերության հավակնություններ ունեցող Թուրքիային՝ համարելով նրան 2008 թ. հետո տարածաշրջանում հաստատված Status Quo-ի պահպանման երաշխավորը:²³⁷

Այսպիսով, 2008 թ. հետո տարածաշրջանում ստեղծված դրությունը և Վրաստանի քաղաքականությունը հնարավորություն է ընձեռնում Թուրքիային իրագործել իր քաղաքական և տնտեսական առաջխաղացումը Հարավային Կովկասում: Թուրք-ադրբեջանական հետևողական քաղաքականության արդյունքում Վրաստանն աստիճանաբար ներգրավվում է նրանց ուղղվածության դաշինքում:

Թուրքիայի համար Վրաստանը կարևոր ուղղվածության նշանակություն ունի նաև որպես տարանցիկ երկիր: Վրաստանի տարածքը ծառայում է որպես միջանցք

²³³ Алексей Балиев, Александр Рублев, «Грузинский Ататурк» Саакашвили, 20.12.2007, <http://www.globoscope.ru>

²³⁴ Сергей Маркедонов, Соседи Грузии: до и после «Пятидневной войны», 22.08.2008, <http://www.politcom.ru>

²³⁵ Foreign Policy Strategy 2006-2009, http://www.mfa.gov.ge/files/35_9440_673620_11.pdf

²³⁶ Саакашвили: Азербайджан и Грузия должны стремиться к конфедерационному сотрудничеству, <http://www.rus.ghn.ge/news-7644.html>, Тбилиси подтвердил желание создать конфедерацию с Баку, <http://www.georgiatimes.info/articles/40747.html>, VestnikKavkaza, GeorgyKalatozishvili, Tbilisi, Wed, 11/09/2011, <http://vestnikkavkaza.net/>

²³⁷ Տե՛ս նույն տեղում:

դեպի Ադրբեջան և միջինասիական երկրներ հատկապես Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան փակ սահմանների պարագայում:

Այս առումով առանձնահատուկ ռազմավարական նշանակություն ունի Վրաստանի հայաբնակ Սամցխե-Ջավախեթի վարչական շրջանը, որտեղ Թուրքիան վարում է ժողովրդագրական պատկերի փոփոխությանը նպատակաուղղված քաղաքականություն՝ աջակցելով 1944թ. տեղահանված թուրք-մեսխերի / Ahiska TŞrkleri/ «հայրենադարձությանը»: Հատկանշական է, որ դեռևս 1999թ. ԵԽ անդամակցելու ժամանակ նման պարտավորություն ստանձնած Վրաստանն առաջարկում է թուրք-մեսխերին վերաբնակեցնելու երկրի ողջ տարածքում, սակայն Թուրքիան հատկապես պնդում է Սամցխե-Ջավախեթի շրջանում նրանց հաստատվելու անհրաժեշտությունը: Ջավախքում թուրք-մեսխերի զանգվածային բնակեցման ու մեծամասնություն կազմելու հեռանկարը կհանգեցնի ամբողջական թյուրքական միջանցքի ստեղծմանը: Արդյունքում Սամցխե-Ջավախեթի և Ադրբեջանին սահմանակից ադրբեջանաբնակ տարածքի՝ Քվեմո Քարթլիի վարչական շրջանները զուգահեռ գծով կմիացնեն միմյանց Ադրբեջանն ու Թուրքիան²³⁸, միաժամանակ հատելով Հայաստանը հյուսիսին կապող ուղղահայացը: Նաև հատկապես Վրաստանի տարածքի Սամցխե-Ջավախքի տարածքն է ընտրվել աշխարհառազմավարական նշանակության էներգահամակարգերը՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը գործարկելու համար: Ներկայումս այս տարածքում է կառուցվում Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին, որի շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում էր 2012թ. վերջին: Ի դեպ այս նախագծի շնորհիվ Նախիջևանի ինքնավար հանրապետությունը ցամաքային կապ կհաստատի Ադրբեջանի հետ՝ դյուրացնելով Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական համագործակցությունը:

Ադրբեջանի համար ևս Վրաստանն ունի ռազմավարական նշանակություն՝ որպես իր ռազմավարական դաշնակից Թուրքիային, և այդ երկրի միջոցով նաև Արևմուտքին կապող օղակ: Ադրբեջան - Վրաստան հարաբերություններում առանցքային դեր է խաղում միմյանց տարածքային ամբողջականության ճանաչման

²³⁸ Էդուարդ Աբրահամյան, «Վրաստանի ադրբեջանցիները. Ակտիվ նախապատրաստություն սպասված ապստամբությանը», www.armtown.com

սկզբունքի վրա հիմնված փոխադարձ շահը: 2008թ. «Հնգօրյա պատերազմի» արդյունքում Վրաստանից Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախացման դե յուրե ճանաչումը և Ադրբեջանի կողմից հայկական տարածքների նկատմամբ վերահսկողության կորուստը, Վրաստանին և Ադրբեջանին միավորում է մեկ միևնույն խնդրի շուրջ: Վրաստանին և Ադրբեջանին միավորում է նաև անդամակցությունը ԱՊՀ-ին՝ իբրև այլընտրանք ստեղծված ՎՈՒԱՄ քաղաքական միավորմանը:²³⁹

Բաքուն իր ազդեցության լծակներն ամրապնդելու և ընդլայնելու հստակ քաղաքականություն է վարում՝ օգտագործելով տնտեսության որոշակի ոլորտներում, մասնավորապես էներգետիկայի բնագավառում Թբիլիսիի համար անայլընտրանք համագործակցության իրողությունը:

Բաքվի ազդեցության լծակներն ամրապնդելուն է ծառայում նաև Վրաստանի ազգային փոքրամասնությունների թվում քանակապես ամենամեծաթիվ ադրբեջանական համայնքը, մասնավորապես ադրբեջանաբնակ Քվեմո-Քարթլիի/Բորչալու/ շրջանը, ուր ադրբեջանական համայնքը ստանում է նաև Թուրքիայի աջակցությունը: Հարկ է նշել, որ աշխարհագրորեն արևելքից՝ Ադրբեջանին, հարավից՝ Հայաստանին, արևմուտքից՝ Ջավախքին սահմանակից և հյուսիսից Վրաստանի մայրաքաղաքին կից Քվեմո Քարթլի տարածաշրջանը ադրբեջանցիները համարում են «Հերոս թուրքերի հայրենիքը» և որակում որպես «վիճելի տարածք Ադրբեջանի և Վրաստանի միջև», որն «անարդարացիորեն ԽՍՀՄ օրոք տրվեց Վրաստանին»:²⁴⁰ Այս առումով ուշագրավ է Բորչալուի ադրբեջանական համայնքի կայքէջում պարբերաբար հանդիպող «Բորչալուն Ադրբեջանից ամենակարճ ճանապարհն է դեպի Թուրքիա» արտահայտությունը:²⁴¹

Համաձայն Վրաստանի տնտեսական զարգացման նախարարության վիճակագրության դեպարտամենտի 2008 թվականին կատարած հետազոտությունների, մանր ձեռնարկությունների դրամաշրջանառության ծավալներով Թբիլիսիից հետո առաջատարը Քվեմո Քարթլիի շրջանն է, որին բաժին է ընկնում ամբողջ երկրի մանր ձեռնարկությունների դրամաշրջանառության 13

²³⁹ Сергей Маркедонов, Соседи Грузии: до и после «Пятидневной войны», 22.08.2008, <http://www.politcom.ru>

²⁴⁰ www.borchali.net

²⁴¹ Տես՝ նույն տեղում:

տոկոսը:²⁴² Հարկ է նշել, որ Քվեմո Քարթլի մասնավոր, այսինքն ադրբեջանական ձեռնարկությունների աջակցությունն իրականացվում է Բաքվից ֆինանսավորվող ադրբեջանական հասարակական մի շարք կազմակերպությունների միջոցով:

Էներգետիկ ոլորտում ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատար խողովակաշարը Կասպից ծովը կապում է Միջերկրական ծովին²⁴³, իսկ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի շուրջ համագործակցությունը հանգուցում է երեք երկրներին:

2010թ. Ադրբեջանի ու Վրաստանի բարձրագույն ղեկավարությունը որոշում է կայացնում երկու երկրների միասնական էներգահամակարգ ստեղծելու մասին:²⁴⁴ Միաժամանակ, թուրքական EMCT Pazarlama İnşaat Taahhüt Ticareti (EMCT) կազմակերպությունը Վրաստանի էներգետիկայի նախարարության հետ կնքում է համաձայնագիր, որի շրջանակներում սկսվում է Արևմտյան Վրաստանի տարածքում Գուբազոուլի ՀԵԿ-ի կառուցումը:²⁴⁵ Ի դեպ, այստեղ հարկ է նշել երկու ուշագրավ փաստերի մասին:

Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցման համար որպես նախապայման դրվել է տարածաշրջանից, առավելապես Վրաստանում գործող ՌԴ չորս ռազմաբազաները լուծարելու պահանջը: 1999թ. նոյեմբերին Ստամբուլում ԵԱՀԿ գազաթնաժողովում ՌԴ ու Վրաստանի միջև կնքվեց համապատասխան համաձայնագիր,,և կարճ ժամկետում ՌԴ ռազմակայանները դուրս բերվեցին Վրաստանի տարածքից: Այնուհետև, 2001թ.սեպտեմբերի 9-11-ին Չոլպոն Աթայում(Ղրղզստան) կայացած թյուրքալեզու պետությունների հատուկ ծառայությունների 4-րդ համաժողովում ստեղծված Համակարգող խորհրդում ձևակերպվեց Աքտաու-Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի ու ՏՐԱՍԵԿԱ նախագծերի անվտանգության ապահովման խնդրի շուրջ համագործակցությունն ընդդեմ ահաբեկչության:

Հաջորդ նախադրյալը կարելի է համարել համատեղ տարածաշրջանային անվտանգության համակարգի ձևավորման գործընթացը: Այդ նպատակին կոչված էր

²⁴² <http://www.apsny.ge/news/1214000731.php>

²⁴³ Տես՝ նույն տեղում:

²⁴⁴ Натик Алиев: Азербайджан и Грузия намерены соединить энергосистемы, <http://www.rus.ghn.ge/news-7648.html>

²⁴⁵ ГЭС на реке Губазоули будут строить турки, 29.08.2011, www.georgiatimes.info

ծառայելու ՎՈՒԱՄ միավորումը՝ ի սկզբանե միավորված իբրև Կասպիականի պաշարների արդյունահանման խնդիրների շուրջ ստեղծված կազմակերպություն: ՎՈՒԱՄ-ը, սակայն, հետագայում ընթացավ ԱՊՀ անդամ, բայց ՀԱՊԿ-ին չանդամակցող երկրների ռազմաքաղաքական համագործակցության ձգտող միավորման ճանապարհով:

Առևտրի ոլորտում Թուրքիան ներկայումս համարվում է Վրաստանի առաջին գործընկերը՝ զբաղեցնելով Ռուսաստանի երբեմնի տեղը: 2002-2010թթ. երկկողմանի առևտրային ծավալը նշանակալի աճ է արձանագրել հասնելով 240 մլն-ից մինչև 1 մլրդ. դոլարի:²⁴⁶ Բացի այդ, Թուրքիան իր ներդրումներով Վրաստանում գրավում է երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո: Թուրքական ներդրումները ներառում են շինարարական /այդ թվում օդանավակայանի թերմինալների վերանորոգումը/, ապակեգործական, հեռուստատահաղորդակցության ոլորտները, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի տարատեսակ կազմակերպությունների ստեղծումը Վրաստանում: Առավել մեծ ներդրումը կատարված է Կարս-Թբիլիսի երկաթգծի և Ռիզե-Փոթի օպտիկամանրաթելային մալուխի նախագծերի իրականացման համար:²⁴⁷ Բացի այդ, Թուրքիան պատրաստվում է մի շարք թանկարժեք արվարձանային ավաններ կառուցել հենց մայրաքաղաք Թբիլիսիի շուրջը:²⁴⁸

Ռազմական ոլորտում Թուրքիան Վրաստանի, ինչպես նաև Ադրբեջանի, ռազմամթերքի հիմնական մատակարարն է և ունի ռազմական օբյեկտներ երկու պետություններում:

Կրթական ոլորտում թուրք գործարարների աջակցությամբ Վրաստանում գործում են մի քանի ավագ դպրոցներ և Քվեմո Քարթլիի շրջանում մեկ մասնավոր համալսարան: Ամեն տարի բազմաթիվ վրացի և ադրբեջանական ծագումով Վրաստանի քաղաքացի ուսանողներ կրթաթոշակ են ստանում Թուրքիայի կառավարության կողմից թուրքերեն սովորելու և Թուրքիայում վերապատրաստվելու համար: Նշենք, որ դա բավականին լուրջ գործոն է Վրաստանում Թուրքիայի ազդեցության հզորացման համար:

²⁴⁶ Dış Ticaret İstatistikleri, Türkiye İstatistik Kurumu, www.tuik.gov.tr

²⁴⁷ Justyna Glogowska, Turkey and Georgia: Strategic Connections, BilGESAM, 23 March 2012.

²⁴⁸ Турки будут строить мини-города около Тбилиси, 02.09.2011, www.georgiatimes.info

Վրաստանն իր հերթին, 2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո, իր հետագա զարգացումը կապում է Արևմուտքի /վարելով եվրոատլանտյան կառույցներին համարկվելու քաղաքականություն/, իսկ տարածաշրջանային մակարդակում՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Թուրքիան Վրաստանի համար դիտարկվում է որպես ՆԱՏՕ, Եվրամիություն և այլ արևմտյան կառույցներին կապող օղակ, իսկ Ադրբեջանը համարվում է անայլընտրանք, ուստի կենսական նշանակության էներգամատակարար: Այդ տրամաբանությամբ, Վրաստանը, թեև միակողմանիորեն, պաշտոնապես երկու պետություններին ճանաչել է որպես ռազմավարական դաշնակիցներ:²⁴⁹

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ Վրաստանի քաղաքական վերնախավը հետևողականորեն շարունակում է Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան հարաբերությունների խորացման գործընթացը:

Այսպիսով, կարելի է կատարել հետևյալ հաստատումները.

ա) Թուրքիան և Ադրբեջանը վարում են Վրաստանի հանդեպ քաղաքական ու տնտեսական վերահսկման լծակներ ու մեխանիզմներ ստեղծելու աստիճանական և նպատակաուղղված քաղաքականություն,

բ) ներկա ժամանակահատվածում Վրաստանը շարունակում է ընթանալ Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքում ընդգրկվելու ճանապարհով,

գ) Սամցխե-Ջավախեթիում թյուրքական տարրի գերակայության պարագայում Թուրքիա-Ադրբեջան դաշինքը վերահսկողություն կհաստատի Սամցխե-Ջավախեթիի և Քվեմո Քարթլիի ռազմավարական տարածքում:

Հիմք ընդունելով վերոնշյալը, կարելի է նաև կատարել հետևյալ եզրահանգումը. ընթացիկ գործընթացների արդյունքում, առավելագույնը միջնաժամկետ հեռանկարում, Վրաստանը կհայտնվի Թուրքիա-Ադրբեջան դաշինքի ամբողջական ազդեցության գոտում և վերահսկողության ներքո:

²⁴⁹ Саакашвили: Азербайджан и Грузия должны стремиться к конфедерационному сотрудничеству, <http://www.rus.ghn.ge/news-7644.html>, Тбилиси подтвердил желание создать конфедерацию с Баку, <http://www.georgiatimes.info/articles/40747.html>, VestnikKavkaza, GeorgyKalatozishvili, Tbilisi, Wed, 11/09/2011, <http://vestnikkavkaza.net/>

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԹՈՒՐՔԻԱ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Հայկական գործոնի դերը Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում

Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում հայկական գործոնի ազդեցությունը հիմնականում դրսևորվում է մի կողմից Հայոց Յեղասպանության միջազգային ճանաչման և մյուս կողմից ԼՂ հիմնախնդրի կարգավորման հարցերի շուրջ: Իրականում հայկական գործոնի հիմքում ընկած է Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը, որի շնորհիվ Հայաստանը մշտապես եղել է ուրույն գործոն և իր ազդեցությունն ունեցել տարածաշրջանային քաղաքական տարբեր զարգացումներում: Պատմական բոլոր ժամանակաշրջաններում Հայաստանը եղել է կարևոր օղակ՝ հյուսիս- հարավ և արևմուտք-արևելք աշխարհաքաղաքական հանգույցում և, ըստ ռազմաքաղաքական իրավիճակների, խաղացել է քաղաքակրթական պատվարի կամ հաղորդակցական կամուրջի դեր: Հայկական գործոնը եղել և մնում է բնական արգելք՝ Թուրքիայի պանթուրքիստական ծրագրերի իրագործման ճանապարհին: Ինչպես նշում է արևելագետ Նիկոլայ Հովհաննիսյանը՝ «Հայկական գործոնը կանգնած է պանթուրքիզմի քաղաքականության ճանապարհին: Եվ եթե դրա կողմնակիցներին մինչև այժմ չի հաջողվել հասնել հաջողության, չի հաջողվել իրականացնել պանթուրքիստների բոլոր սերունդների երազանքը՝ վերացնել հայկական պատնեշը կամ այն վերածել հայկական միջանցքի Կենտրոնական Ասիա մտնելու համար, ապա առանց դույզն իսկ չափազանցության, կարելի է ասել, որ դրանում ծանրակշիռ է հայկական գործոնի դերը»:²⁵⁰ Այս համատեքստում ուշագրավ են ամերիկացի քաղաքագետ Քերոլ Միգդալովիչի խոսքերը. «Թուրքիան ձգտում է տարածել իր կապերը Կենտրոնական Ասիա, բայց չի սահմանակցում նրան:

²⁵⁰ Ն. Հովհաննիսյան, «Հայաստանը Անդրկովկասյան-Մերձավոր արևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի գործոն» Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 1999, Հ. 18, էջ 26

Հայաստանի հետ որևէ *modus vivendi* կարող էր Թուրքիային ապահովել կամուրջ դեպի այդ տարածքը»:²⁵¹

Հայկական գործոնի դերը մեծ է ողջ տարածաշրջանում, հատկապես ՌԴ և Իրանի քաղաքականության համատեքստում: Ռուսաստանը Հարավային Կովկասում ի դեմս Հայաստանի պահպանում է իր ազդեցության լծակները, իսկ Իրանը խոչընդոտում թուրքական անսահմանափակ ազդեցության տարածմանը: Հայաստանի շնորհիվ՝ ուղղահայաց վեկտորն իր դիրքերն ամբողջովին չի զիջում հորիզոնական հատումին:

ԽՍՀՄ կազմալուծումից հետո, երբ կտրուկ փոխվեց աշխարհաքաղաքականությունը, և տարածաշրջանային ու «արտաքին» ուժերը սկսեցին պայքարել Եվրասիայում գերակայության համար, հայկական գործոնի դերակատարությունը կրկին անգամ ակնհայտ դարձավ: Թուրքիայի արտաքին քաղաքական ակտիվացումը դեպի Հարավային Կովկաս և Կենտրոնական Ասիա, ինչպես նաև նրա հստակ նորպայթյուրքիստական քաղաքական ծրագրերը բախվեցին հայկական գործոնի իրողությանը: Վերջինս զգալի դերակատարություն ունի այն հարցում, որ Թուրքիային, չնայած ռազմավարական դաշինքի առկայությանը Ադրբեջանի հետ, դեռևս չի հաջողվում Հարավային Կովկասում ձեռք բերել գերակա դիրք:

Հայկական գործոնը Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում կատարում է կանխարգելիչ, զսպիչ գործառույթ, այսինքն խոչընդոտում է Թուրքիայի ազդեցության տարածմանը դեպի արևելք: Մյուս կողմից այն միավորում է այդ երկու պետություններին՝ ընդդեմ ընդհանուր թշնամու: Թուրքիան և Ադրբեջանը միջազգային ատյաններում նույն դիրքորոշմամբ են հանդես գալիս ԼՂ հակամարտության կարգավորման, Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման խոչընդոտման հարցերում, պաշտոնական և ոչ պաշտոնական մակարդակներում համագործակցում են միմյանց հետ՝ հակահայկական քաղաքականության իրագործման խնդրում:

Թուրք-ադրբեջանական հակահայկական համերաշխության դրսևորումներից էր ԼՂ զինված հակամարտության ժամանակ Թուրքիայի ակնհայտ ադրբեջանամետ

²⁵¹ C. Migdalovitz, “Armenian-Azerbaijan conflict. Congressional research service”, Washington, D.C., 1995, p 11.

դիրքորոշումը և Հայաստանին ուղղված սպառնալիքները, Թուրքիայի կողմից Ադրբեջանին ցուցաբերվող անուղղակի ռազմական օժանդակությունը, կիրառվող դիվանագիտական դեմարշները և, ի վերջո, Հայաստանի Հանրապետության շրջափակումը: Այսպես, ԼՂ-ում հայկական կողմի ցանկացած հաղթանակին Թուրքիան արձագանքում էր սպառնալիքով և քաղաքական սադրանքներով: Վերջիններից էր Նախիջևանում լարվածության հրահրումը և դրա համար հայերին մեղադրելը, Հայաստանին ուղղված մեղադրանքները իբր ԲԲԿ-ին սատարելու և իր տարածքում ԲԲԿ ճամբարների գործունեության խրախուսման համար:

Սակայն, Թուրքիայի այդ ծրագիրը ձախողվեց և Թուրքիան դիմեց դիվանագիտական դեմարշների քաղաքականությանը: 1992թ. մարտից ի վեր Թուրքիան սկսեց ստուգել իր օդային տարածքով Հայաստան մարդասիրական օգնություն տեղափոխող ինքնաթիռների բեռը, ապա միացավ Հայաստանի տնտեսական շրջափակմանը՝ արգելելով Թուրքիայի տարածքով անցնող և Հայաստանին հասցեագրված ամեն կարգի բեռնափոխադրում:²⁵² Բացի այդ, Թուրքիան արգելեց իր օդային տարածքով անցնող Երևան-Հալեպ-Երևան չվերթի իրականացումը, իսկ նույն տարվա նոյեմբերին՝ չեղյալ հայտարարեց Հայաստանին 300 մլն ԿՎՏ էլեկտրաէներգիայի մատակարարման գործարքը:²⁵³ Այնուհետև, 1993թ. Թուրքիան ամբողջական շրջափակման ենթարկեց Հայաստանին, որն անփոփոխ մնաց անգամ ղարաբաղա-ադրբեջանական զինադադարից հետո: Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և սահմանների բացման դիմաց Թուրքիայի նախապայմանների քաղաքականությունն անփոփոխ է, ինչը Ադրբեջանի հետ ռազմավարական դաշինքի հիմնարար տարրերից է:

Հարկ է նշել հայկական գործոնի շրջանակներում հայկական Սփյուռքի ազդեցությունը թուրք-ադրբեջանական հարաբերությունների վրա: Հաշվի առնելով Սփյուռքի ազդեցությունն աշխարհի տարբեր պետություններում, մասնավորապես ԱՄՆ-ում, ՌԴ-ում, Ֆրանսիայում, Սիրիայում, Լիբանանում և նրա վարած լրբբիստական գործունեությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում՝ Թուրքիան և Ադրբեջանն այն հաճախ ընկալում են որպես առաջնային

²⁵² Հ. Դեմոյան, «Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը», Երևան, 2002, էջ 21:

²⁵³ Տես՝ նույն տեղում:

սպառնալիք և միավորում սեփական լոբբիստական ուժերն ընդդեմ հայկական ուժերի: 2010թ. կազմակերպված թուրքական սփյուռք ստեղծելու նպատակով կազմվեց Թուրքիայի փոխվարչապետի ենթակայության ներքո գտնվող «Արտասահմանում ապրող թուրքերի և բարեկամ հասարակությունների տնօրինությունը»:²⁵⁴ Նույն նպատակն էր հետապնդում 2012թ. հունիսի 7-8-ին Անկարայում կայացած համաժողովը՝ աշխարհի տարբեր պետություններում բնակվող մոտ 6,5 մլն թուրքերին ներկայացնող 500 կազմակերպությունների մասնակցությամբ: Համաժողովի օրակարգի կարևոր կետերից էր տարբեր պետություններում գործող թուրքական և ադրբեջանական սփյուռքային կառույցների ջանքերի միավորումը և համատեղ պայքարի կազմակերպումն ու համակարգումը՝ ուղղված Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախօրեին հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեությանը հակազդելուն: Մասնավորապես, ծրագրված էր քարոզել այսպես կոչված «Խոջալուի ցեղասպանությունը» և հայերի կողմից Ադրբեջանի տարածքների բռնազավթումը՝ որպես հայերի դիրքերը թուլացնող հակափաստարկ:²⁵⁵

Թուրք-ադրբեջանական համերաշխությունն առանձնապես դրսևորվում է տեղեկատվական պատերազմում, պատմության կեղծարարության պետական քաղաքականության գործում, ինչն ունի ակնհայտ հակահայկական ուղղվածություն:

Հայկական գործոնի շուրջ թուրք-ադրբեջանական համագործակցությունը ծավալվում է նաև միջազգային կազմակերպությունների շրջանակներում: ԼՂ հակամարտության տարիներից ի վեր՝ բոլոր միջազգային աստիճաններում, հատկապես ԵԱՀԿ, Իսլամական կոնֆերանս, Թյուրքական վեհաժողով²⁵⁶, Եվրախորհուրդ, ՄԱԿ կազմակերպություններում Թուրքիան հանդես է գալիս ի պաշտպանություն Ադրբեջանի շահերի: Ի դեպ, վերջին շրջանում ռազմավարության որոշակի

²⁵⁴ ԱԳՆ Սահմանակից երկրների վարչության ընթացիկ արխիվ, 13/06/2012թ.:

²⁵⁵ Տես՝ նույն տեղում:

²⁵⁶ 2012թ նոյեմբերի 2-11-ը Բաքվում տեղի ունեցավ «Ղարաբաղը թյուրքական աշխարհի համընդհանուր խնդիր» խորագրով գիտաժողով, որին մասնակցեցին գրողներ, լրագրողներ, քաղաքական գործիչներ Թուրքիայից, Ադրբեջանից, Ղրղզստանից, Թուրքմենստանից և Ուզբեկստանից: Գիտաժողովի նպատակը թյուրքալեզու հանրապետություններում ակտիվ աշխատանք տանելն է՝ իրազեկելու այդ հասարակությանը ԼՂ հիմնահարցի էության մասին և սատարելու այդ հարցում Ադրբեջանի դիրքորոշմանը: Այսպիսով, ԼՂ խնդիրը ներկայացվում է ոչ թե Ադրբեջանի, այլ ողջ թյուրքալեզու աշխարհի խնդիր: Տես՝ ԱԳՆ Սահմանակից երկրների վարչության ընթացիկ արխիվ, 08/11/2012թ.:

փոփոխություն է նկատվում, և նախկին համագործակցության ձևաչափին փոխարինում է համատեղ նախաձեռնություններով հանդես գալու միտումը:

Այսպիսով, հայկական գործոնը թուրք-ադրբեջանական հարաբերություններում ունի իր առանձին միավորիչ նշանակությունը, քանի որ այս հարցում պետությունների շահերը համընկնում են:

Ղարաբաղյան հակամարտության շուրջ գործընթացը պայմանավորված է միմյանց հետ շաղկապված երկու գործոններով՝ Հարավային Կովկասի հանրապետություններում ներքաղաքական իրադրության փոփոխություններով և տարածաշրջանում ռազմաստրատեգիական գերակայության ձեռքբերման համար հիմնական շահագրգիռ կողմերի (ԱՄՆ, Եվրամիություն, Ռուսաստան, Իրան, Թուրքիա) միջև պայքարի աշխուժացմամբ: Ադրբեջանը՝ գտնվելով կարևոր ռազմավարական դիրքում, այսպես կոչված «Մետաքսի ճանապարհի» հանգույցում, ունենալով կասպիական նավթի ու բնական գազի մեծ պաշարներ և Թուրքիայի ու Իրանի հյուսիսային հատվածի հետ պատմական, մշակութային, էթնիկ ու կրոնական կապեր, հայտնվել է վերոնշյալ «արտաքին ուժերի» շահերի կենտրոնում: Ադրբեջանում 1990-1993թթ. տեղի ունեցած երեք իշխանափոխությունների տրամաբանությունն ուսումնասիրելու արդյունքում հասկանալի է դառնում, որ շահագրգիռ վերոհիշյալ կողմերի միջև պայքարն արտացոլվում էր Ադրբեջանի ներքաղաքական զարգացումներում: Հարկ է նշել, սակայն, որ արտաքին ուժերի գործունե միջամտության համար նպաստավոր հող էր ադրբեջանական ազգակցական-կլանային կառավարման համակարգը, ինչը երկրում գործող քաղաքական ուժերի պառակտվածության, միասնականության բացակայության, ներքաղաքական անկայունության պատճառներից մեկն էր:

Լեռնային Ղարաբաղը՝ Նախիջևանի և Զանգեզուրի հետ միասին, իր աշխարհագրական դիրքի շնորհիվ մշտապես եղել է Թուրքիայի ռազմավարական շահերի շրջանակում և իր հիմնավորումը գտել Թուրքիայի քաղաքագիտական մտքում: Տիրելով այդ տարածքներին՝ Թուրքիան հնարավորություն կստանա իրագործել իր պանթյուրքիստական ծրագրերը, ճանապարհ հարթել դեպի թյուրքալեզու Միջին Ասիա՝ աշխարհաքաղաքական կարևոր նշանակություն ունեցող ու բնական

նեսուրսներով հարուստ Կասպիական ավազան: Հատկանշական է, որ 1918թ. Բաքվի գրավմանը մասնակցած և մինչև 1920թ. Ադրբեջանում ապրած թուրք պատմաբան Շևքեթ Սուրեյյա Այդեմիրն իր «Suyu arayan adam» /թրգ. «Ջուր փնտրող մարդը»/ գրքում գրել է. «Ով տիրում է Ղարաբաղին, նա տիրանում է Ադրբեջանին: Ում ձեռքում լինի Ղարաբաղը՝ նա Քուտի հովտին և Ադրբեջանի դաշտավայրին վերևից կկարողանա նայել»:²⁵⁷

Այսպիսով, դեռևս 1918-21թթ. թե՛ օսմանյան, թե՛ քեմալական Թուրքիան ջանքեր գործադրեց, որ Ղարաբաղը հանձնվի իր կողմից ստեղծված Ադրբեջան պետությանը: Թուրքիայի համար ԼՂ-ի նման կարգավիճակը ունի նաև տարածքային ամբողջականության և ազգային անվտանգության պահպանման երաշխիքի նշանակություն, քանի որ այն դիտարկվում է որպես 1921թ. հաստատված համակարգի բաղկացուցիչ մաս: Թուրքիան մտավախություն ունի, որ ԼՂ կարգավիճակի փոփոխությունը կարող է շղթայական ազդեցություն ունենալ Նախիջևան - Կարս ուղղության վրա և հանգեցնել ՀՀ կողմից Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջների ներկայացմանը, ուստի այդ պետությունն օգտագործում է քաղաքական բոլոր լծակները՝ նպաստելու ԼՂ հիմնահարցի ադրբեջանամետ լուծմանը:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ակտիվացման ներկա փուլը սկսվեց 1988թ. տարածաշրջանային մեծ փոփոխությունների և վերածնունդների գործընթացին զուգընթաց: Ի պատասխան, Ադրբեջանի իշխանությունները կազմակերպեցին հայ ազգաբնակչության ջարդեր Ադրբեջանի գրեթե ողջ տարածքում, մասնավորապես Սումգայիթում, Կիրովաբադում(Գյանջա), Բաքվում: Ադրբեջանի վարած ագրեսիվ քաղաքականությունը ԼՂ հայ բնակչության հանդեպ վերաճեց բացահայտ լայնածավալ ռազմական գործողությունների, երբ 1991թ. դեկտեմբերի 10-ին ինքնավար մարզի բնակչության կողմից անցկացված հանրաքվեի արդյունքում հռչակվեց անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

ԼՂ զինված հակամարտությունը սկսվեց և ընթացավ աշխարհաքաղաքական լուրջ ձևափոխումների ժամանակաշրջանում՝ կրելով տարածաշրջանային և այլ արտաքին գործոնների ազդեցությունը: Հակամարտությունն օգտագործվեց

²⁵⁷ Տ. Տ. Aydemir, “Suyu Arayan Adam”, Istanbul, Remzi Kitabevi, 1997, s. 158.

Հարավային Կովկասում «շահագրգիռ ուժերի» կողմից՝ իրենց քաղաքական ազդեցությունը տարածաշրջանում ամրապնդելու նպատակով: Մյուս կողմից, հակամարտությունը դարձավ յուրօրինակ գործիք Ադրբեջանի քաղաքական իշխանությանը ձգտող վերնախավային խմբավորումների ձեռքում՝ ներքաղաքական և արտաքին քաղաքական խնդիրներն ըստ մասնավոր շահերի լուծելու գործում: ԼՂ հակամարտության ռազմականացումը մեծ ազդեցություն ունեցավ Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում, երբ վերոնշյալ երկու պետությունները սկսեցին կիրառել «դարաբաղյան գործոնը» որպես միմյանց հետ հարաբերությունների զարգացման և ամրապնդման «պատմական» հնարավորություն:

1988թ. սկսված ԼՂ հակամարտության պայմաններում Թուրքիայի վարած պաշտոնական քաղաքականությունը Ադրբեջանի հանդեպ սկզբնապես բավականին զգուշավոր էր: Խուսափելով ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների վատթարացումից՝ Թուրքիան զերծ էր մնում ի պաշտպանություն Ադրբեջանի շահերի միանշանակ հայտարարություններ անելուց: Ավելին, պաշտոնական մակարդակով Անկարան հայտարարում էր, որ Թուրքիան ԼՂ հակամարտության հետ որևէ առնչություն չունի և չի պատրաստվում որևէ կերպ միջամտել դրան:²⁵⁸

Թուրքիայի դիրքորոշման մարտավարությունը որոշ չափով փոխվեց 1990թ. հունվարին Բաքվում տեղի ունեցած հայ բնակչության կոտորածներից հետո խորհրդային զորքերի դեմ ադրբեջանական ազգայնականների զինված հարձակումներից հետո: Վերջինիս կապակցությամբ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեսուդ Յըլմազը հայտարարեց.²⁵⁹ «Ադրբեջանում տեղի ունեցող գործընթացներին Թուրքիան հետևում է հատուկ զգայունությամբ, քանզի ադրբեջանցիների հետ ընդհանուր լեզվական և մշակութային կապեր ունի»:²⁶⁰ Հատկանշական է 1990թ. հունվարի 20-ին Նախիջևանի ԻԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նիստի որոշումը՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու և Թուրքիային միանալու մասին: Իր հերթին Թուրքիան պաշտոնապես հայտարարեց, որ «նպատակ ունի

²⁵⁸ Հ. Դեմոյան, «Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը», Երևան, 2002, էջ 26:

²⁵⁹ Տես՝ նույն տեղում, էջ 27:

²⁶⁰ Տես՝ նույն տեղում:

օգտագործել իր օրինական իրավունքները հնարավոր անկանխատեսելի զարգացումների դեպքում»:²⁶¹

1991թ. ԽՍՀՄ կազմալուծումից և Ադրբեջանի անկախացումից հետո, Թուրքիան սկսեց ակտիվ քաղաքականություն վարել տարածաշրջանում, մասնավորապես առաջարկելով իր միջնորդությունը ԼՂ հակամարտության կարգավորման գործում: Այս շրջանում Թուրքիան սկսեց շահարկել 1921թ. իրավապայմանագրային համակարգը՝ փորձելով առաջ քաշել իր երաշխավոր լինելու հանգամանքը: Ադրբեջանը, գտնվելով պատերազմական իրավիճակում, ի դեմս արյունակից Թուրքիայի տեսնում էր իր շահերի պաշտպանին և վարում էր վերջինիս հետ սերտ հարաբերությունների հաստատման ու ամրապնդման քաղաքականություն: Նախ, Ադրբեջանը փորձում էր դիվանագիտական և ռազմական աջակցություն ստանալ Թուրքիայից, ապա աջակցում ԵԱՀԿ Մինսկի խմբում համանախագահ դառնալու Թուրքիայի ջանքերին: Վերջինս՝ ծախողելով միջնորդի դերի ստանձնման նախաձեռնությունը, պարբերաբար կատարում էր դիվանագիտական հայտարարություններ և տրամադրում գաղտնի ռազմական օգնություն:

Այսպես, 1992թ. մայիսին, Շուշիի և Լաչինի ազատագրումից հետո, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հիքմեթ Չեթինը հայտարարեց, որ Ղարաբաղն ադրբեջանական տարածք է, և Թուրքիան կաջակցի Ադրբեջանին բոլոր մակարդակների միջազգային ատյաններում:²⁶² Նա ավելացրեց, որ Թուրքիան թույլ չի տա Ադրբեջանի սահմանների փոփոխություն, այլապես Հայաստանի Հանրապետությունը պատասխանատու կլինի բոլոր հետևանքների համար:²⁶³ Նախագահ Թուրգույթ Օզալը, իր հերթին, պնդեց Նախիջևանում թուրքական զորքերի տեղակայման անհրաժեշտությունը՝ հայկական ուժերի կողմից հնարավոր հարձակմանը դիմագրավելու նպատակով:²⁶⁴ Ի դեպ, այդ հայտարարությանը նախորդել էր Հայաստանի և Նախիջևանի սահմանի երկայնքով թուրքական զինված ուժերի կուտակմանը:

²⁶¹ Հ. Դեմոյան, «Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը», Երևան, 2002, էջ 28:

²⁶² Ա. Ավագյան, «Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994թթ.», Հայկական քննակ, # 3 /49/, 2006, էջ 52:

²⁶³ Տես՝ նույն տեղում:

²⁶⁴ Հ. Դեմոյան, «Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը», Երևան, 2002, էջ 28:

1993թ. ապրիլին Թուրքիայի «Բարօրություն» կուսակցության խոսնակը և «Մայր Հայրենիք» կուսակցության փոխնախագահը հայտարարեցին ԼՂ հակամարտությանը Թուրքիայի ուղղակի ռազմական միջամտության անհրաժեշտության մասին:²⁶⁵ Ավելին, Թուրքիայի ԱԳՆ-ը այդ մասին տեղեկացրեց Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի դեսպաններին: Սակայն ԱՄՆ-ի և հատկապես Ռուսաստանի հստակ դիրքորոշման շնորհիվ, Թուրքիան հրաժարվեց ուղղակիորեն ԼՂ տարածք ներխուժելու և ռազմական գործողություններ իրականացնելու ծրագրից՝ զգուշանալով միջազգային հանրության և ՆԱՏՕ -ի հակազդեցությունից, ինչպես և Ռուսաստանի հետ բախումից: Այնուամենայնիվ, Թուրքիան շարունակեց կատարել դիվանագիտական դեմարշներ և տնտեսական շրջափակման ենթարկեց Հայաստանի Հանրապետությանը՝ 1993թ. ապրիլին փակելով իր ցամաքային և օդային սահմանը:

3.2 Կրոնական գործոնը Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում

Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում «իսլամական գործոնը», ի տարբերություն «ազգայնական» գործոնի, երբևէ չի խաղացել վճռորոշ դեր, այլ հանդիսացել է միայն այլընտրանքային գործիք Թուրքիայի ձեռքում, որը փորձում է բոլոր հնարավոր ուղիներով իր քաղաքական ազդեցությունն ու վերահսկողությունը հաստատել Ադրբեջանում:²⁶⁶ Սակայն, մինչև 2002թ. ԱԶԿ-ի իշխանության գալը Թուրքիան զգուշավորություն էր ցուցաբերում այդ հարցում՝ պայմանավորված նաև քեմալիզմի վերաբերմունքով կրոնական զգացումների օգտագործման նկատմամբ:²⁶⁷

«Իսլամական» գործոնը, որպես «փափուկ ուժի» քաղաքականության բաղադրիչ, Ադրբեջանում հիմնականում լայնորեն կիրառվել է Իրանի կողմից՝ պայմանավորված

²⁶⁵ Ա. Ավագյան, «Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994թթ.», Հայկական բանակ, # 3 /49/, 2006, էջ 54.

²⁶⁶ Դա պայմանավորված է նրանով, որ երկու պետություններն էլ աշխարհիկ են և իսլամի ակտիվացումը վտանգ է ներկայացնում նրանց համար: Իզուր չէ, որ Թուրքիան հիմնականում աջակցել է ոչ թե արմատական, այլ չափավոր իսլամական կազմակերպությունների գործունեությանը Ադրբեջանում:

²⁶⁷ Բավարար է նշել, որ բուն Թուրքիայիում 1960թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջման պատճառներից մեկը «Ժողովրդավարական Կուսակցության» կառավարության կողմից իսլամական գործոնի շահարկումն էր:

երկու պետությունների շիա իսլամի դավանանքով: Թուրքիան, լինելով հաննեֆիական սուննիականություն դավանող պետություն, կրոնական տեսանկյունից Ադրբեջանի հետ պատկանում են իսլամի տարբեր ճյուղերի, քանի որ հայտնի է սուննի-շիա ավանդական հակամարտությունն ու թշնամությունը մահմեդական աշխարհում: Այս տեսանկյունից Թուրքիային և Ադրբեջանին կարող է միավորել միայն ընդհանուր մահմեդական համերաշխությունը, իսկ օրինակ՝ Իրանի և Ադրբեջանի միջև կան կրոնական շատ ավելի սերտ առնչություններ: Այդ է պատճառը, որ ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ տարածաշրջանային գերտերության կարգավիճակի ձգտող Թուրքիան և Իրանը սկսեցին վարել գործուն քաղաքականություն Հարավային Կովկասում և մերձկասպյան ավազանում՝ մասնավորապես Ադրբեջանում, Թուրքիան հիմնականում խաղարկեց «ազգայնական-գաղափարախոսական», իսկ Իրանը՝ «իսլամական» խաղաքարտը: Սակայն, զուգահեռաբար Թուրքիան Ադրբեջանում գործարկեց նաև «իսլամական» քաղաքականությունը, որը 2000-ական թթ. ավելի ազդեցիկ դարձավ:

Ադրբեջանում Թուրքիայի կրոնական քաղաքականությունը իրականացվում է հիմնականում երկու ուղղություններով՝ պաշտոնական և ոչ պաշտոնական: Պաշտոնապես Ադրբեջանում գործում է Թուրքիայի Կրոնական հարցերով վարչությունը, իսկ ոչ պաշտոնական մակարդակով՝ Գյուլենական շարժումը:²⁶⁸ Առաջինը ֆինանսավորում է Ադրբեջանում մզկիթների կառուցումը /ըստ հիմնական տեղեկությունների՝ թվով ութ/, կազմակերպում է Բաքվի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի գործունեությունը, Թուրքիայում վերապատրաստում է Ադրբեջանի հոգևորականությանը, ինչպես նաև Թուրքիայի ԱԳՆ-ի հետ համատեղ հիմնում է Ադրբեջանում հոգևորականության ուսուցման և վերապատրաստման համար հատուկ դպրոցներ (Imam-hatip):²⁶⁹ Բացի այդ, ամեն տարի Թուրքիայի Կրոնական հարցերով նախարարությունը ադրբեջանցի ուսանողներին Թուրքիայի համալսարաններում աստվածաբանություն սովորելու համար պետական կրթաթոշակ է տալիս:²⁷⁰

²⁶⁸ S. Cornell, “The Politicization of Islam in Azerbaijan”, Central Asia-Caucasus Institute and Silk Road Studies Program, 2006, p. 50.

²⁶⁹ N. Goksel, “Religiously-inspired Bonding: Changing Soft power Elements in Turkey’s Relations with Azerbaijan”, Center for Conflict Prevention and Early Warning, Occasional Papers, Vol.4 No. 8, 2011.

²⁷⁰ S. Cornell, “The Politicization of Islam in Azerbaijan”, Central Asia-Caucasus Institute and Silk Road Studies Program, 2006, p. 50.

Ադրբեջանի տարբեր քաղաքներում գործում են մի քանի թուրքական մզկիթներ, որտեղ իմամներն ազգությամբ թուրք են, և ուրբաթօրյա աղոթքներն ասվում են թուրքերենով և ադրբեջաներենով:²⁷¹ Այդ մզկիթներ հաճախողների մեծ մասը Ադրբեջանում ուսանող կամ աշխատող թուրքերն են կամ երիտասարդ, կրթված ադրբեջանցիները:

Թուրքիան իր «իսլամական» քաղաքականությունը կիրառում էր Ադրբեջանում նաև այլ՝ ոչ պաշտոնական ուղիներով: Այսպես, Ադրբեջանի անկախության առաջին տարիներին երկրում հատկապես երևելի էր Նաքշբանդի թարիքաթի գործունեությունը, որը դեռևս 1920-30թթ. Ադրբեջանի տարբեր շրջաններում՝ հատկապես հյուսիս-արևմուտքում և Նախիջևանում լայն տարածում ուներ:²⁷²

Սակայն 1995թ. «մարտյան իրադարձություններից» հետո Թարիքաթի գրեթե բոլոր հետևորդները արտաքսվեցին երկրից: Բանն այն է, որ «մարտյան իրադարձությունների» կազմակերպման մեջ մասնակցություն ունեցած թուրք գիտնական Ֆերման Դեմիրքոլը նույնպես պատկանում էր Նաքշբանդի թարիքաթին:²⁷³ Ուստի, մեղադրելով նրան պետական հեղաշրջման փորձի կազմակերպման մեջ և արտաքսելով երկրից, Ադրբեջանի իշխանությունը արտաքսում է նաև Նաքշբանդի թարիքաթի ակտիվիստների մեծ մասին: Այդուհանդերձ, որոշ նաքշբանդիներ շարունակում են ընդհատակային գործունեություն վարել՝ ապաստանելով Ղազախում և Նախիջևանում:²⁷⁴ Թարիքաթի ղեկավարը՝ շեյխ Մեհման Ջահիդ Գոթքունը միայն կարճաժամկետ այցելություններ է կատարում Նախիջևան:²⁷⁵

Նաքշբանդիներին զուգահեռ 1990-ական թթ. սկզբին Թուրքիայից Ադրբեջան են ներթափանցում նաև «սուլեյմանիա» և «մևլանա» թարիքաթների քարոզիչները, որոնք իրենց ուսմունքը տարածում են հիմնականում Բաքվի երիտասարդ ուսանողների շրջանակներում:²⁷⁶

²⁷¹ S. Cornell, “The Politicization of Islam in Azerbaijan”, Central Asia-Caucasus Institute and Silk Road Studies Program, 2006, p. 50.

²⁷² А. Юнусов, “Ислам в Азербайджане”, Баку, 2004, с.178.

²⁷³ Տես՝ նույն տեղում:

²⁷⁴ Տես՝ նույն տեղում, էջ 180.

²⁷⁵ Տես՝ նույն տեղում, էջ 179:

²⁷⁶ Տես՝ նույն տեղում, էջ 187.

Այդուհանդերձ, Ադրբեջանում Թուրքիան «իսլամականության» քաղաքականությունը հիմնականում իրականացնում էր Գյուլենական շարժման միջոցով, որը թեև պաշտոնապես ոչ կառավարական կազմակերպություն է, սակայն չափազանց սերտորեն առնչվում է Թուրքիայի իշխանական շրջանակների և հատուկ ծառայությունների հետ: Այն մեծ ռեսուրսներ ունի և գործուն և ազդեցիկ է միջազգային ասպարեզում՝ հատկապես թյուրքական աշխարհում:

Գյուլենական շարժման առանձնահատկությունն իր իսլամա-պանթյուրքիստական համակցությունն է: Այն իսլամական քարոզի հետ համատեղ իրականացնում է պանթյուրքական գաղափարախոսության քարոզչություն՝ այդպիսով ծառայելով Թուրքիայի պետական շահերի ամրապնդմանը: Հատկանշական է, որ 1999թ. Գյուլենն իր հայտարարության մեջ ներկայացնելով Թուրքիայում իսլամականության իր տեսլականը՝ նշեց, որ շարժման անդամները պետք է աննկատ ներթափանցեն պետական համակարգ, ճյուղավորումներ կազմեն, մինչև հասունանա իշխանության լծակները ձեռք բերելու հարմար պահը:²⁷⁷

Գյուլենն իր գործունեությունն Ադրբեջանում սկսել է ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո: Դեռևս 1991թ. նրա ներկայացուցիչը՝ Մեհմեթ Ալի Շանգյուլը մեկնել էր Ադրբեջան՝ իրավիճակին ծանոթանալու նպատակով:²⁷⁸ 1992թ., երբ իշխանության է գալիս ԱԺԾ-ը, Ադրբեջան է մեկնում ինքը՝ Գյուլենը և հանդիպում ունենում էլ՝ իբրեյի հետ: Արդյունքում թույլատրվում է Ադրբեջանում «Zaman» թերթի հրատարակումը և «Samanyolu» հեռուստաալիքի հեռարձակումը, ինչպես նաև մի շարք ձեռնարկությունների բացումը:²⁷⁹ Գյուլենական շարժումը վերջնականապես արմատավորվում է Ադրբեջանում Հ. Ալիևի օրոք և շարունակում է աստիճանաբար ընդլայնվել: Դա պայմանավորված էր Հ. Ալիևի բարյացկամ վերաբերմունքով նույնիսկ նկատմամբ, քանի որ վերջինները ընդգծված աջակցություն են ցուցաբերել Հ. Ալիևին՝ Նախիջևանի ինքնավարությունում նրա ղեկավարության տարիներին:²⁸⁰ Ներկայումս Նուրջու ուսմունքն Ադրբեջանում՝ հատկապես քաղաքային

²⁷⁷ Sharon-Krespin, R., “Fethullah Gulen’s Grand Ambition,” Middle East Quarterly, Winter 2009, p. 55-66, citing ATV, June 18, 1999.

²⁷⁸ А. Юнусов, “Ислам в Азербайджане”, Баку, 2004, с.187.

²⁷⁹ Տես՝ նույն տեղում, էջ 189.

²⁸⁰ Տես՝ նույն տեղում:

բնակչության շրջանակներում, ամենաազդեցիկ և գործուն կրոնական շարժումն է, որը յուրօրինակ այլընտրանք է «իրանական» շիականությանն ու Սաուդիան Արաբիայի կողմից խրախուսվող վահհաբականությանը: Գյուլենական շարժումը Ադրբեջանում վարում է բավականին մեղմ քաղաքականություն և բացահայտ հակաշիական և հակապետական գործունեություն չի ծավալում: Փոխարենը, ի տարբերություն Կենտրոնական Ասիայի պետությունների և ՌԴ-ի, Ադրբեջանն ԱՊՀ տարածքում այն միակ պետությունն է, որն առավել դրական և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում գյուլենական շարժման նկատմամբ և չի կիրառում նրա դեմ հետևողական ճնշումներ:²⁸¹

Այսպես, Ադրբեջանը ոչ միայն չի արգելել Նուրջու ուսմունքի գործունեությունը, այլև անուղղակիորեն նպաստել է նրա ընդլայնմանը: Հատկանշական է, որ ներկայումս Ադրբեջանում այդ աղանդի սեփականությունն են «CAĞ ÖYRETİM A.Ş.» կրթական կազմակերպությունը, «NIL» գրախանութների ցանցը, TÜSIAD գործարարական կենտրոնը, «Qafqaz» համալսարանը, 12 միջնակարգ դպրոցներ ու վարժարաններ Բաքվում, Սումգայիթում, Մինգեչաուրում, Ղուբայում, Նախիջևանում և այլ քաղաքներում, 11 բուհական նախապատրաստական դասընթացներ, «Xazar» ռադիոհեռուստատեսությունը, «Samanyolu» հեռուստաալիքը, «Burc» ռադիոն, «Zaman» օրաթերթը, մի շարք այլ թերթեր և պարբերականներ:²⁸²

Այդ ամենի միջոցով Գյուլենական շարժումն աստիճանաբար ավելի է ընդլայնվում՝ ընդգրկելով ադրբեջանական հասարակության ավելի լայն շերտերի:

Սակայն, հարկ է նշել, որ շարժման առաջնային թիրախ են հանդիսանում խոստումնալից երիտասարդները, ովքեր հետագայում կարող են զբաղեցնել ղեկավար պաշտոններ: Հատկանշական է, որ ներկայումս Ադրբեջանի բարձրաստիճան

²⁸¹ 2002թ. ՌԴ Անվտանգության ծառայության /ԱԴԾ/ հրամանով դադարեցվել էր, իսկ 2007թ. ապրիլին ՌԴ Գերագույն դատարանի կողմից արգելվել էր Ֆ. Գյուլենի ղեկավարության ներքո գտնվող Նուրջու շարժման գործունեությունը ՌԴ տարածքում: ԱԴԾ տնօրեն Ն. Պատրուշևի համաձայն՝ շարժման կողմից ստեղծված տարատեսակ կազմակերպությունները զբաղվել են պանիսլամիզմի ու պանթյուրքիզմի քարոզչությամբ, իրականացրել են հետախուզական գործունեություն՝ հոգուտ թուրքական հատուկ ծառայությունների: Շարժումն արգելվել է նաև Ուզբեկստանում: Տես՝ Հովսեփյան Լ., Գյուլենական շարժումն Ադրբեջանում. ներկա իրավիճակն ու միտումները, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 5, 2013:

²⁸² F. Aliyev, “The Gulen Movement in Azerbaijan”, Hudson Institute, Center on Islam, Democracy and the Future of the Muslim World, 27/12/2006.

պաշտոնյաներ, պատգամավորներ, հայտնի լրագրողներ և կրթության ոլորտի ներկայացուցիչներ ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են «գյուլենականների» հետ:²⁸³

Այդուհանդերձ, վերջին տարիներին նկատվեց Ադրբեջանի իշխանության կողմից «գյուլենականների» նկատմամբ բացասական վերաբերմունքի միտումներ: Ադրբեջանի մի քանի քաղաքներում տեղի ունեցան «գյուլենականների» ձերբակալություններ, նրանց գույքի բռնագրավվում և մի շարք թուրքական մզկիթների փակում: Այդ գործողությունները պատճառաբանված էին շարժման սուսնիական բովանդակությամբ և Թուրքիայի հետախուզության հետ կապի առկայությամբ:²⁸⁴

Այսպիսով, օգտագործելով «ազգայնական» և «խալամական» գործոնները որպես «փափուկ ուժի» կիրառման միջոցներ՝ Թուրքիան իրականացնում է իր քաղաքական ազդեցությունն Ադրբեջանի տարբեր սոցիալ-մշակութային խավերում տարածելու և ամրապնդելու հետևողական քաղաքականություն:

3.3 Քրդական գործոնը Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում

Քրդական հարցը, որպես միջազգային քաղաքական գործոն, ի հայտ է եկել Օսմանյան կայսրության փլուզումից հետո՝ Առաջին Աշխարհամարտի արդյունքում: Լոզանի պայմանագրի /1923թ./ հետևանքով քուրդ բնակչությունը հիմնականում բաշխվում է տարածաշրջանի չորս պետությունների՝ Թուրքիայի, Սիրիայի, Իրանի և Իրաքի միջև և դառնում է միջազգային և տարածաշրջանային որոշակի գործոն՝ ազդելով վերոնշյալ պետությունների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության վրա: Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում այդ գործոնը ուշագրավ դերակատարում խաղաց. եթե 1990-ական թթ. սկզբում Թուրքիան և Ադրբեջանը համատեղ մեղադրում էին հայկական կողմերին ՔԲԿ-ին սատարելու, ԼՂՀ-ում այդ կազմակերպության գինյալներին ապաստանելու և հենակետեր հիմնելու

²⁸³ F. Aliyev, “The Gulen Movement in Azerbaijan”, Hudson Institute, Center on Islam, Democracy and the Future of the Muslim World, 27/12/2006.

²⁸⁴ “В Азербайджане массовые аресты верующих суннитов”, 18/04/2012, <http://golosislama.ru/news.php?id=7829>

գործում, ապա 1995թ. հետո դարձավ թուրք-ադրբեջանական հարաբերություններում լարվածության լուրջ պատճառ: Քրդական գործոնը հետևողականորեն օգտագործվում է Մեծ Մերձավոր Արևելյան տարածաշրջանում իրենց աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերն ունեցող «ուժային կենտրոնների» կողմից: Թուրք քաղաքագետ Մեհմեթ Փերինչեկի կարծիքով, ներկայումս իրագործվում է ԱՄՆ-ի և Իսրայելի «Մեծ Մերձավորարևելյան» նախագիծը, որը նախատեսում է «Մեծ Մերձավոր Արևելքի 24 պետությունների սահմանների փոփոխություն»: Այդ համատեքստում փորձ է արվում իրագործել նաև «Մեծ Քրդստանի» նախագիծը՝ հետագայում Վաշինգտոնի ազդեցությունը տարածաշրջանում պահպանելու նպատակով:²⁸⁵ Նշենք, որ «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագիրը մշակել է ազգային անվտանգության հարցերով «ՌԱՆԴ» ռազմավարական հետազոտական կենտրոնը (RAND Corporation), որն այնուհետև հավանության է արժանացել Հորդանանի թագավորական գիտահետազոտական կենտրոնի, Երուսաղեմի Հրեական համալսարանի Հարրի Տրումենի անվան խաղաղության և այլ ինստիտուտների կողմից:²⁸⁶ Ծրագիրն ակադեմիական շրջանակներում ներկայացվեց 1997թ. Զ. Քեմփի ու Ռ. Հարկավիի «Ռազմավարական աշխարհագրություն և փոփոխվող Մերձավոր Արևելքը»(Geoffrey Kemp and Robert E. Harkavy. Strategic Geography and the Changing Middle East) ուսումնասիրությամբ: 2006թ. հունիսին Իսրայելում ԱՄՆ պետքարտուղար Ք. Ռայսը շրջանառության մեջ դրեց «Նոր Մերձավոր Արևելք» հասկացությունը որպես գործնականում իրագործման ենթակա նախագիծ: Որոշ վերլուծաբաններ այս նոր տերմինաբանության կիրառումը և Բաքու-Ջեյհան նավթային տերմինալի շահագործման արարողության ժամանակային համապատասխանությունը պատահականություն չհամարեցին: Միաժամանակ, 2006թ. հունիսին Armed Forces Journal ամերիկյան ռազմական հեղինակավոր հանդեսում տպագրվեց ԱՄՆ հետախուզության փոխգնդապետ Ռ. Պետերսի «Արյունոտ սահմաններ» հրապարակումը՝ կից Մերձավոր Արևելքի նոր սահմանագծումը պատկերող քարտեզով և «շահող» ու «տանուլ տվող»

²⁸⁵ С. Тарасов, “ Мифы о карабахском конфликте”, Москва, 2012, стр. 406.

²⁸⁶ Ն. Հովհաննիսյան, «Հայաստանը Անդրկովկասյան-Մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի գործոն», «Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և Ժողովուրդներ», Հ. 18, Երևան, 1999, էջ 17:

պետությունների ցանկով:²⁸⁷ Ըստ այդմ, ներկայիս Թուրքիայի 13 վարչատարածքային մասերի տարածքում ձևավորվելու է Քրդստան պետությունը՝ Դիարբեքիր մայրաքաղաքով: Այնուհետև, քարտեզը ԱՄՆ-ի ազգային ռազմական ակադեմիայի համաձայնությամբ ի ցույց դրվեց Հռոմում ՆԱՏՕ-ի ռազմական քոլեջում, ինչը հարուցեց ուսանող թուրք սպաների դժգոհությունը և Թուրքիայի գլխավոր շտաբի պետ, գեներալ Բյույուքանըթի պաշտոնական բողոքը:

Թուրքիան քրդական հարցը դիտում է որպես առանցքային ներքաղաքական խնդիր և պետության միասնականության համար հիմնական սպառնալիք՝ ունենալով ինչպես պատմական-իրավական, այնպես էլ ռազմական-քաղաքական հիմքեր: Արձանագրվել են փաստացի պատմական իրողություններ, որոնք իրավական ձևակերպում չեն ստացել: Այդպիսին են, օրինակ, անընդմեջ քրդական ապստամբությունները Թուրքիայում, երբ հերթական, «Արարատյան» անունը ստացած ապստամբությունը գլխավորող «Հոյբուն» շարժումը 1927թ. հոկտեմբերին հռչակեց Արարատյան քրդական հանրապետությունը՝ ճանաչման խնդրանքով դիմելով Ազգերի լիգային ու մեծ տերություններին: Այս ինքնահռչակ կազմավորումը լուծարվեց միայն 1930թ.՝ միջազգային անբարենպաստ իրավիճակում չստանալով որևէ աջակցություն: Առկա էին համաձայնագրեր Թուրքիայի, Իրանի, Մեծ Բրիտանիայի ու ԽՍՀՄ միջև, ինչպես նաև սահմանակից շրջաններում քրդերի գործունեության դեմ անվտանգության պայմանագիր Թուրքիայի, Իրանի և Իրաքի միջև:²⁸⁸ Այնուհանդերձ, քեմալական Թուրքիան ժամանակին քրդական այս շարժման թիկունքին նկատում էր եվրոպական տերություններին, մասնավորապես Մեծ Բրիտանիային: Այս իրողությունները հիմք էին տալիս 21-րդ դարասկզբին պատմական զուգահեռներ անցկացնել, հատկապես, երբ 2003-2006թթ. ԱՄՆ-ը սկսեց ձևավորել կանոնավոր քրդական բանակ Իրաքի տարածքում:²⁸⁹ Արդեն 2007թ. նոյեմբերի 4-ին թուրքական «Միլլիեթ» օրաթերթում

²⁸⁷ Ralph Peters, “Blood borders”, <http://www.armedforcesjournal.com/2006/06/1833899>

²⁸⁸ Zeynep N. Kaya, Maps into Nations: Kurdistan, Kurdish Nationalism and International Society, London, 2012, p.135-136

²⁸⁹ Новая иракская армия будет сформирована из курдов, Известия, 25 мая, 2003, Иракские курды при поддержке США создали регулярную армию, Известия, 28 июля 2006, <http://izvestia.ru/news/382759>

Թուրքիայի Գլխավոր շտաբի նախկին պետ, գեներալ Դոդան Գյուրեշը հայտնեց Թուրքիան մասնատելու ԱՄՆ-ի և Եվրամիության ծրագրի մասին:²⁹⁰

Ադրբեջանի պարագայում իրավիճակն արմատապես տարբեր է: Ի տարբերություն Թուրքիայի, Ադրբեջանում քրդական գործոնը որպես ազգային անվտանգության սպառնալիք չի դիտվում: Քուրդ բնակչությունը փոքրաթիվ է և բնիկ չէ ի տարբերություն Թուրքիայի, որտեղ, ըստ տարբեր տվյալների, 11-20 մլն բնակվող քրդերը պետության ամենամեծաթիվ ազգային փոքրամասնությունն են: Այդուհանդերձ, Ադրբեջանում, ինչպես նաև Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում քրդական գործոնը բավականին ազդեցիկ է: Վերջինս հիմնականում ի հայտ է գալիս երկկողմանի հարաբերություններում որոշակի լարվածությանը կամ անհամաձայնությանը զուգահեռ և դրսևորվում Թուրքիայի կողմից Ադրբեջանի «քրդական քաղաքականության» դեմ պաշտոնական հայտարարությունների և դիվանագիտական դեմարշների միջոցով՝ նկատի առնելով Ադրբեջանում առկա քրդական ազդեցիկ ներկայությունը: Միննույն ժամանակ Ադրբեջանն օգտագործում է դա՝ ձգտելով առավելագույնս քաղաքական շահաբաժիններ ձեռք բերել տարածաշրջանային զարգացումների համատեքստում:

Ադրբեջանում քրդական գործոնը որպես այդպիսին կարելի է դիտարկել դեռևս 1918-1920թթ. Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության օրոք Ղարաբաղում և Ջանգեզուրում քրդերից կազմված զինվորական ստորաբաժանումների կազմավորմամբ: Այդ ստորաբաժանումների ստեղծման գործով զբաղվում էին Խոսրով-բեկ և Սուլթան-բեկ Սուլթանով քուրդ եղբայրները, որոնցից Խոսրով-բեկը ԱԺՀ կառավարության կողմից նշանակվել էր Ղարաբաղի և Ջանգեզուրի գեներալ-նահանգապետ, իսկ նրա տեղակալն էր նույնպես քուրդ Չինգիզ Յիլդիրիմը:

Խորհրդային Ադրբեջանում քրդական գործոնը արդիականանում է: 1923թ. ստեղծվում է Քրդստանի գավառը (Կարմիր Քրդստան), որը, սակայն, լուծարվում է 1929թ.: Մոսկվան հասկանալի պատճառներով Ադրբեջանին օգտագործում է որպես քրդական հարցով աշխատանքների տարածաշրջանային համակարգման կենտրոն, ինչի տիպական օրինակն է 1941թ. Իրանական Ադրբեջանում խորհրդային զորքերի

²⁹⁰ Американская мина под Турцию, <http://bs-kavkaz.org/2012/06/amerikanskaya-mina-pod-turciu/>

մուտք գործելու ժամանակ 30 քուրդ առաջնորդների հյուրընկալումը Բաքվում և նրանց ներուժի օգտագործումն ընդդեմ իրանական ու Արևմուտքի երկրների ազդեցության:²⁹¹

Հայտնի է նաև, որ Հ. Ալիևը, ով, ըստ որոշ աղբյուրների, ծագումով քուրդ էր և ԽՍՀՄ ՊԱԿ-ում մասնագիտացվել էր քրդական հարցերով, 1950-1970թթ. նշանակված էր Իրանի և Թուրքիայի քրդական խնդրի պատասխանատուն:²⁹²

1998թ. նոյեմբերին, երբ սկսվել էր ՔԲԿ առաջնորդ Ա. Օջալանի կալանման գործընթացը, նախկին նախագահ Ա. Էլչիբեյը հայտարարեց, թե Հ. Ալիևը, ԽՍՀՄ ղեկավարներից Ե. Պրիմակովի հետ մասնակցել է ՔԲԿ-ի ենթակառույցների, մասնավորապես մարտական ջոկատների ստեղծման գործում:²⁹³ Հարկ է նշել, որ արդեն ձերբակալված ՔԲԿ առաջնորդ Ա. Օջալանը Թուրքիայում դատավարության ժամանակ իր ցուցմունքներով հաստատեց, որ ադրբեջանական իշխանությունները նպաստել են ՔԲԿ-ի զարգացմանն ու հզորացմանը:²⁹⁴ Ավելին, նա հայտարարեց, թե «Ադրբեջանում ՔԲԿ-ն» ներկայացուցչություն ունի, և այդ երկրի ղեկավար աշխատակիցները մեզ ֆինանսական օգնություն են ցուցաբերում»:²⁹⁵

Ինչպես նշում է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանը, ԽՍՀՄ փլուզումից հետո Հ. Ալիևը նաև Մերձավոր Արևելքի քրդերի հետ առկա կապերի շնորհիվ է 1993թ. դարձել Ադրբեջանի նախագահ, հետագայում այդ կապերը ժառանգելով որդուն՝ Իլիամ Ալիևին:²⁹⁶ Այս փաստը հրապարակել է նաև ՔԲԿ ղեկավար անդամ Խոշնավ Սիփանը:»1993թ., երբ Ալիևը գլխավորում էր Նախիջևանի Գերագույն խորհուրդը, ընդունեց ՔԲԿ ղեկավար 3 ներկայացուցիչների և քննարկեց համագործակցության հարցեր: Ուշագրավ է, որ Սիփանը նշում է, թե նույնպիսի կապեր եղել են Ա. Էլչիբեյի հետ:²⁹⁷

²⁹¹ М. Лазарев, Курдистан и курдский вопрос(1923-1945), М., Восточная литература РАН, 2005, стр.218

²⁹² Интервью с Р. Сафрастяном „Курдская карта Ильхама Алиева“, 09.04.2013, <http://www.sp-analytic.ru/popularity/1909-kurdsкая-karta-ilhama-alieva.html>

²⁹³ С. Шерматова, Курдская карта в нефтяной игре, Московские новости», 17 ноября 1998 <http://www.pressarchive.ru/moskovskie-novosti/1998/11/17/166959.html>

²⁹⁴ Монитор, No 5, 4.02. 2003, <http://www.monitorjournal.com/arxiv/heftelik-5-kurdler.htm>

²⁹⁵ Рамиз Велиев, История захвата власти и страны курдскими кланами, <http://flnka.ru/aktualnoe/1572-albaniya-azerbaydzhan-ili-kurdistan.html>

²⁹⁶ “Курдская карта Ильхама Алиева”, 09.04.2013, <http://www.sp-analytic.ru/popularity/1909-kurdsкая-karta-ilhama-alieva.html>

²⁹⁷ Коммерсантъ, №127 (1771), 21.07.1999

Եվ այսպես, կարելի է դիտարկել քրդական գործոնը, որպես կազմակերպված ուժ, Ադրբեջանի ներքաղաքական կյանքում: Ադրբեջանն ունի ազգակցական-տեղային կլանային կառավարման համակարգ, հետևաբար քրդական գործոնը, որպես կազմակերպված ուժ, կարող է հանդես գալ միայն իբրև համակարգային բաղադրիչ:

Ադրբեջանական աղբյուրների համաձայն, Հ. Ալիևը իշխանության գալով իշխանության վերնախավում ներդրեց քրդական կլանի ներկայացուցիչներին, իսկ 1997թ. ձևավորեց ՔԲԿ-ի հետ կապված կլանի ենթակառուցային ու ճյուղավորված ցանց: Ըստ այդմ, այդ համակարգն ունի երեք՝ քաղաքական (ղեկ.՝ Բ. Էյուբով, Ք. Հեյդարով), տնտեսական (ղեկ.՝ Ա. Գյոզալ) և արտաքին հարաբերությունների հարցերով (ղեկ.՝ Ռ. Վեզիրի) ճյուղեր:²⁹⁸

Հ. Ալիևի ազգակցական, ծագումով հայաստանցի քուրդ Բ. Էյուբովը նշանակվելով նախագահի թիկնազորի՝ Գվարդիայի հրամանատար, կարճ ժամանակամիջոցում դարձավ մեծ տնտեսական համակարգ ու ֆինանսական միջոցներ վերահսկող ենթակլանի գլուխ, միաժամանակ նկատվելով քրդական համայնքի ղեկավար: Նրա լիազորությունների շրջանակում էր նաև նախագահական բյուջեի ձևավորումը ու առանցքային կադրային նշանակումների որոշումներին մասնակցությունը: Մասնավորապես, Բ. Էյուբովի դրածոն է Ադրբեջանի պետական նավթային կազմակերպության նախագահ, իր ազգակից Ռ. Աբդուլլահը:²⁹⁹

Ինչպես նշում է ադրբեջանցի քաղաքագետ Արիֆ Յունուսովը՝ «Հ. Ալիևի իշխանության տարիներին, այսպես թե այնպես, ձևավորվում է քրդական կլանը, որի ղեկավարի դերում էր Բ. Էյուբովը»:³⁰⁰ Ադրբեջանական ընդդիմությունը մեղադրում էր նրան, որ իր երեք եղբայրների հետ, փաստորեն հանդիսանում էր ողջ Արևմտյան Ադրբեջանի ոչ պաշտոնական ղեկավարը: Նրա հրամանատարության ներքո են եղել 4000-10000 քրդական զինյալների անօրինական կազմավորումները, որոնք հաճախ օգտագործվել են կառավարության կողմից ընդդիմադիրների բողոքի ցույցերը ճնշելու նպատակով:³⁰¹

²⁹⁸ Монитор, No 5, 4.02. 2003, <http://www.monitorjournal.com/arxiv/heftelik-5-kurdler.htm>

²⁹⁹ А. Юнусов, “ Курды переселяются в Азербайджан”, 12.12.2007, www.islamnews.ru/news-8625.html

³⁰⁰ Տես՝ նույն տեղում:

³⁰¹ Տես՝ նույն տեղում:

Էյուբովների ենթակլանն է կազմակերպել քրդերի զանգվածային վերաբնակեցումը Ադրբեջանում, ըստ որում քրդերի տեղափոխությունը ղեկավարել է Բ.Էյուբովը, իսկ վերաբնակեցումը՝ նրա եղբայր Էյուբ Էյուբովը:

Ադրբեջանական ընդդիմադիր մամուլի համաձայն, Հ. Ալիևի նախաձեռնությամբ 1993թ. /որոշների համաձայն՝ 1995թ./ հետո Թուրքիայի Դիարբեքիրի, Էրզրումի և Բայազետի շրջաններից Ադրբեջան են տեղափոխվել մի քանի հարյուր քրդական ընտանիք, որոնց թվում գերակշռել են ՔԲԿ կողմնակիցները:³⁰² Նրանք վերաբնակեցվել են Արևմտյան Ադրբեջանի՝ Հայաստանին սահմանակից գյուղերում և Ղազախ, Թովուզ, Շամխորի, Գյանջա, Գերանբոյ, Սամուխ, Խանլար քաղաքներում:

2007թ. ադրբեջանական լրատվամիջոցներում տեղեկատվություններ են հայտնվում Նախիջևանում, Ադրբեջանի արևմտյան շրջաններում և ադրբեջանա-ղարաբաղյան սահմանագծում Թուրքիայից վերաբնակեցված 60.000 քրդերի մասին, որոնց տեղափոխում էին ՔԲԿ խորհրդանիշներ պատկերող ավտոբուսներով:³⁰³ Քրդերի վերաբնակեցումն իրականացրել են տեղի ազգությամբ քուրդ պաշտոնյաները, որոնք Ադրբեջան մուտք գործելուն պես վերաբնակիչներին հանձնել են անձը հաստատող փաստաթուղթ, այնուհետև ապահովել բարձր վարձատրվող աշխատանքով:

2007թ. այս հրապարակումներին զուգահեռ՝ ադրբեջանական լրատվամիջոցներում քննարկում է սկսվում որոշ իշխանական ուժերի կողմից Ադրբեջանի ազգագրական պատկերի փոփոխությանն ուղղված փորձերի շուրջ: Խնդրո առարկան իշխանությունների կողմից Ադրբեջանում մոտավորապես 200.000 քրդերին վերաբնակեցնելու ծրագրին էր:³⁰⁴ Քրդական լրատվամիջոցների հաղորդումների համաձայն, նախատեսվում էր Ադրբեջանում վերաբնակեցնել Թուրքիայի և Իրաքի քրդաբնակ շրջաններից արտագաղթյալներին:

Ա. Յունուսովը հատկապես վտանգավոր է համարում քրդերի նման զանգվածային տեղափոխումը, քանի որ նրանցից շատերը զինված են և հարաբերություններ ունեն ՔԲԿ-ի հետ: Նրա տեղեկությունների համաձայն,

³⁰² А. Юнусов, “ Курды переселяются в Азербайджан”, 12.12.2007, www.islamnews.ru/news-8625.html

³⁰³ Տես՝ նույն տեղում:

³⁰⁴ Տես՝ նույն տեղում:

Խանլարում ստեղծվել էր քրդական ռազմա-ուսուցողական ճամբար, որտեղ մարտական պատրաստություն էին ստանում նորակոչիկները:³⁰⁵

2003թ. հետո իրավիճակը փոխվում է, երբ քրդական կլանը ուժեղանալով, սկսում է ինքնուրույնության միտումներ դրսևորել: Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարարության /ԱԱՆ/ Հատուկ ջոկատը ոչնչացնում է քրդական զինյալների հենակետերը Խանլարի շրջանում, ինչի հետևանքով կաթվածահարվում ու մահանում է Է. Էյուբովը:³⁰⁶ Կարճ ժամանակահատվածում մահանում են նրա մյուս եղբայրները, մեկը ավտովթարի հետևանքով, մյուսը՝ անհայտ հանգամանքներում: Ինքը՝ Բ. Էյուբովը, ով ըստ International crisis group-ի, ներառված էր թուրքական հատուկ ծառայությունների կողմից ՔԲԿ հետ առնչվող անձանց ցանկում, 2003թ. սեպտեմբերին ձերբակալվում է Ադրբեջանի ԱԱՆ հատուկ գործողության արդյունքում՝ նշյալ մեղադրանքով:³⁰⁷ Արդյունքում, նա կորցնում է պաշտոնը ու ազդեցության զգալի մասը, հատկապես ԱԱՆ կողմից նրա երաշխավորությամբ Ադրբեջան վերադարձած Մուստոյի՝ նույն ինքը Խոսրով Մուստաֆակի ձերբակալությունից հետո:³⁰⁸

Ադրբեջանում գործող թուրքական «Ազերսուն» խոշորագույն առևտրային կոնցեռնի սեփականատեր Ա. Գյոզալը Իրանի Մակու քաղաքից սերված քուրդ է, ով 1970-ականներին դարձել էր Թուրքիայի քաղաքացի՝ ստեղծելով «Ինտերսուն», «Տեքսուն» (բաժնեմասի 55%՝ Իրանը) ու «Էդսուն» ընկերությունները:³⁰⁹ Հ. Ալիևի հետ նա կապվել է 1992թ. հետո, երբ Բ. Էյուբովը գտնվել է Թուրքիայում քրդական վերնախավի հետ հարաբերությունները վերականգնելու առաջադրանքով: «Ազերսուն» կոնցեռնը ևս մեղադրվում է ՔԲԿ-ին ֆինանսապես օգնելու գործում:³¹⁰

Ընդդիմադիր «Մուսավաթ» կուսակցության փոխնախագահը և «Ենի Մուսավաթ» թերթի գլխավոր խմբագիր Յուսուֆ Արիֆօղլուն, թիվ 2 թշնամի անվանելով քրդական կլանը՝ ի դեմ նախագահ Ալիևների ընտանիքի, մեղադրում է քրդերին Ադրբեջանում ահաբեկչական բազաների ստեղծման մեջ: Մասնավորապես,

³⁰⁵ А. Юнусов, “ Курды переселяются в Азербайджан”, 12.12.2007, www.islamnews.ru/news-8625.html

³⁰⁶ Монитор, № 55, 17.04. 2004, <http://www.monitorjournal.com/arxiv/55-vesiyyet.htm>

³⁰⁷ Доклад №156, Международная Группа по Предотвращению Кризисов(International crisis group) - Европа, 13 мая 2004, стр. 26-27, <http://www.gazeta.ru/2003/09/16/azerbajdzanc.shtml>

³⁰⁸ Монитор, № 64, 10.07. 2004, <http://www.monitorjournal.com/arxiv/64-adyutant.htm>

³⁰⁹ Монитор, No 5, 4.02. 2003, <http://www.monitorjournal.com/arxiv/heftelik-5-kurdler.htm>

³¹⁰ Доклад №156, Международная Группа по Предотвращению Кризисов(International crisis group) - Европа, 13 мая 2004, стр. 26-27

խմբագիր Ռաուֆ Արիֆօղլուն մեղադրում է Ադրբեջանի իշխանությանը՝ Սահմանադրական դատարանին, մի քանի նախարարների և վարչատարածքային միավորների ղեկավարների՝ քրդական կլանին սատարելու համար:³¹¹ Նա նշում է նաև, որ վերոնշյալ մարդիկ նպաստել են Իրանից, Թուրքիայից և Իրաքից Ադրբեջանում քրդերի վերաբնակեցմանը և ավելացնում. «Նրանք ազգությամբ քուրդ են, նրանց կարելի է հասկանալ»:³¹² Նշվում է նաև Ադրբեջանում գոյություն ունեցող ընդհատակյա քրդական ջոկատի կառավարամետ գործունեությունը: Ռաուֆ Արիֆօղլուն անդրադառնում է Ադրբեջանում ՔԲԿ-ի ներկայության հարցին: Նրա հավաստմամբ, ՔԲԿ-ն Սամուխի և Խաչմազի շրջաններում իր ճամբարներն ունի, որտեղ Թուրքիայից ժամանած բազմաթիվ քուրդ զինյալներ են թաքնվում:³¹³ «Քաղաքացիական համերաշխություն» կուսակցության ղեկավար, պատգամավոր Սաբիր Ռուստամխանլիի խոսքերով, ՔԲԿ-ն իր անդամներին ներդնում է Ադրբեջանում որպես ծախյալ մուրացկաններ կամ փախստականներ, իսկ որոշ ժամանակ անց երկիր են տեղափոխում իրենց ընտանիքներին ևս: Արիֆօղլուն իր հերթին ավելացնում է, որ քուրդ հայտնի ահաբեկիչներից մեկը՝ Ալի Բարնը գտնվել է Ադրբեջանում՝ իր եղբոր Բեյլավիլի ամառանոցում:³¹⁴ Նա նաև նշում է, որ ՔԲԿ զինյալ Մուստոն է ղեկավարում Ադրբեջանի ՔԲԿ բաժինը:³¹⁵ Թուրքիայի իրավապահ մարմինները պահանջել են վերոնշյալ մարդկանց հանձնել, սակայն նրանց հաջողվել է ապաստանել Գերմանիայում: Ուշագրավ է նաև, որ Ֆրանսիայում քրդական շարժման ներկայացուցիչ Սեյվան Բարզանին սպառնացել է, որ եթե Թուրքիան զորք տեղակայի Հյուսիսային Իրաքում, քրդերը ռազմական գործողությունները կտեղափոխեն Ադրբեջանի տարածք:³¹⁶ Միաժամանակ, Ադրբեջանում է գտնվում ՔԲԿ-ի ամենամեծ կենտրոններից մեկը:

Ադրբեջանում Թուրքիայի դեսպանատան աշխատակից Թուրգութ Էրը ևս վկայում է, որ Ադրբեջանի պետական տարբեր հաստատություններում, ինչպես նաև

³¹¹ Азербайджанская оппозиция назвала курдов врагом номер 2, 19.03.2012, <http://lezgistan.tv/kurds-kaya-ekspansiya/azerbajdzhanskaya-oppoziciya-nazvala-kurdov-vragom-nomer-2/>

³¹² Տես՝ նույն տեղում:

³¹³ Տես՝ նույն տեղում:

³¹⁴ Տես՝ նույն տեղում:

³¹⁵ Տես՝ նույն տեղում:

³¹⁶ Տես՝ նույն տեղում:

առևտրի ոլորտում մեծ է ՔԲԿ-ի համախոհների թիվը: Ըստ էրի, Բաքվում քրդական մշակույթի կենտրոն «Ռոնային» և նրա ղեկավարությունը բացեիբաց աշխատում են «Մեծ Քրդստանի» գաղափարի իրագործման ուղղությամբ: Էրը, առանց անուններ նշելու, մեղադրում է Ադրբեջանի պետական որոշ պաշտոնյաների և Մեջլիսի 27 պատգամավորների՝ ՔԲԿ-ին աջակցելու գործում:³¹⁷

Թուրքիան բազմիցս պաշտոնական մակարդակով մեղադրել է Ադրբեջանին քրդերի վերաբնակեցման գործընթացի և ՔԲԿ-ի սատարման համար, սակայն ադրբեջանական իշխանությունը անտեսել է դա: Ադրբեջանը շարունակաբար մերժել է ՔԲԿ-ն որպես ահաբեկչական կազմակերպություն ճանաչելու Թուրքիայի պահանջը: Չնայած Ադրբեջանի Մեջլիսում որոշ ուժերի կողմից պարբերաբար առաջարկվել են նման նախագծեր, սակայն քվեարկության այդպես էլ չեն դրվել:³¹⁸ Դրա պատճառների մասին զեկուցել է Ադրբեջանի ԱԳՆ մամլո խոսնակ Խազար Իբրահիմը, ասելով, թե Ադրբեջանի օրենքով նման գործընթաց չի նախատեսվում, բայց ԱԳՆ-ը տարբեր առիթներով քննադատել է ՔԲԿ կազմակերպության գործունեությունը:³¹⁹

Այսպիսով, կարելի է փաստել, որ Ադրբեջանում, ինչպես նաև Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում քրդական գործոնը որոշակի ձևափոխման ենթարկվեց: Եթե 1990-ական թթ. սկզբին Թուրքիան և Ադրբեջանը քրդական գործոնն օգտագործում էին համատեղ՝ հայկական կողմերին մեղադրելով քրդական ահաբեկչությանը սատարելու գործում, ապա 1995թ. հետո Ադրբեջանը սկսում է իր ուրույն քաղաքականությունը վարել քրդական գործոնի հարցում, ինչը Թուրքիայի հետ հարաբերություններում հանգեցրել է որոշ խնդիրների: Եվ եթե Ադրբեջանում քրդական գործոնը հավակնում է ապագայում վճռորոշ ուժ լինել իշխանության վերնախավում՝ ունենալով արտաքին ու ներքին քաղաքականության ոլորտներում ուղեգիծ որոշելու մենաշնորհ, ապա թուրք-ադրբեջանական երկկողմանի հարաբերություններում քրդական գործոնը կանխորոշում է որոշակի լարվածություն, պատճառ դառնալով

³¹⁷ T. Er, “AzadlıktanTiranlığa”, Ankara, 2010, s. 413.

³¹⁸ Հարկ է նշել, որ 2011թ. հուլիսի 28-ին Ի.Ալիևը Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանի հետ մամլո ասուլիսում հայտարարել է. «Ես ցանկանում եմ կրկնել, որ Ադրբեջանը պաշտոնապես ճանաչում է ՔԲԿ-ն որպես ահաբեկչական կազմակերպություն և միշտ Թուրքիայի ու թուրք ժողովրդի կողքին է՝ այդ չարիքի դեմ պայքարելու գործում»: Տես՝ “AzerbaijanofficiallyrecognizesPKKasterroristorganization”, 28.07.2011, <http://news.az/articles/politics/4141>

³¹⁹ Азербайджан признал КРП террористической организацией, 5.11.2007, <http://briansk.ru/world/2007115/89348.html>

Թուրքիայի կողմից Բաքվի «քրդական քաղաքականության» դեմ պաշտոնական հայտարարությունների և դիվանագիտական դեմարշների: Այս առումով ուշագրավ է ՌԴ Իսլամական կոմիտեի նախագահ Հեյդար Զեմալի բացահայտումը. «Ադրբեջանում վաղուց գործում են երրորդ երկրների ուժային կառույցներ...նավթամուղերը պահպանում էին թուրքական զորամասերը...այնտեղ էին գտնվում թուրքական զորամասեր, որոնք գործելու էին Ադրբեջանում հերթական հեղաշրջման դեպքում...Այժմ Անկարայի ու Բաքվի հարաբերությունները զգալիորեն սառել են: Անկարան ասում է, թե Ադրբեջանի նոր ղեկավարությունը կազմված է քրդերից: Ինչպես հայտարարել է Անկարան, Ի. Ալիևը ու նրա շրջապատը քողարկվելով թյուրքերի անվամբ, տարածաշրջանում պաշտպանում են քրդական շահերը»:³²⁰

3.4. Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքի սպառնալիքը ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությանը

ՀՀ Ազգային Անվտանգության ռազմավարության հայեցակարգի համաձայն, «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության առանցքային խնդիրն է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը»³²¹, իսկ արտաքին հիմնական սպառնալիքներն են:

1. «Զինված ուժի կիրառումը. Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետության հանդեպ զինված ուժի կիրառման բացահայտ սպառնալիքներ են հնչում Ադրբեջանի հանրապետության կողմից...Այդպիսի զարգացման պարագայում Թուրքիայի հանրապետությունը, լինելով Ադրբեջանի ռազմավարական դաշնակիցը, նույնպես կարող է նման սպառնալիք ստեղծել...»³²²,

2. «...Սահմանամերձ պետությունների տարանցիկ ուղիների խափանումը. Հայաստանի հանրապետությունն արդեն իսկ զգում է Թբիլիսի-Սուփսումի երկաթգծի և

³²⁰ Гейдар Джемаль, Турция охладела к Баку, потому что Алиевы - курды, <http://www.georgiatimes.info/analysis/72524.html?mode=print>

³²¹ Տես՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական քանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 18:

³²² Տես՝ նույն տեղում:

Վրաստանից Ռուսաստան տանող ավտոճանապարհների չգործելու հետևանքները...»³²³,

3. «Հայաստանի մեկուսացումը տարածաշրջանային ծրագրերից... Հատկապես կարևոր են Եվրոպական միության (ԵՄ) ՏՐԱՍԵԿԱ և ԻՆՕԳԵՅԹ ծրագրերը: Նշված ծրագրերից Հայաստանի հանրապետության դուրս մղմանը միտված Ադրբեջանի հանրապետության ջանքերը անմիջական սպառնալիքներ են...»:³²⁴

Ըստ մեկ այլ փաստաթղթի, ՀՀ Ռազմական դոկտրինով ՀՀ ազգային անվտանգության հիմնական սպառնալիքներ են հանդիսանում

1. «Լեռնային Ղարաբաղի հակամարտության առկայությունը, Հայաստանի Հանրապետության հանդեպ ռազմական գերազանցության հասնելու և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու Ադրբեջանի Հանրապետության ձգտումները...»³²⁵,

2. «...անվերահսկելի սպառազինման և վերազինման գործընթացը, սպառազինությունների մրցավազքը, Հայաստանի Հանրապետության սահմանների մոտ զորքերի խմբավորումների ստեղծումը, տեղաբաշխումը, դրանց խոշորամասշտաբ կուտակումները և տեղաշարժը...»³²⁶, «Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված դաշինքների ստեղծումը, ամրապնդումն ու ընդլայնումը, մասնավորապես՝ Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ռազմավարական դաշինքը...»³²⁷:

Այսպիսով, թուրք-ադրբեջանական ռազմաստրատեգիական դաշինքի՝ ՀՀ-ի և ԼՂՀ-ի անվտանգությանն ուղղված սպառնալիքները հստակ ձևակերպված են վերոնշյալ ռազմավարական փաստաթղթերում: Այդուհանդերձ, հարկ է ևս մեկ անգամ դիտարկել այն հիմնական պատճառները, որոնք կարող են սպառնալիք հանդիսանալ ՀՀ և ԼՂՀ անվտանգության համար:

Նախ նշենք, թե ինչպես են ներկայացված Հայաստանը և ԼՂ հիմնախնդիրը Թուրքիայի և Ադրբեջանի համապատասխան փաստաթղթերում: Ադրբեջանի 2010թ.

³²³ Տես՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական քանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 18:

³²⁴ Տես՝ նույն տեղում:

³²⁵ Տես՝ «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին», «Աշխատանքային տեքստեր», 2007, հմ. 4:

³²⁶ Տես՝ նույն տեղում:

³²⁷ Տես՝ նույն տեղում:

Ռազմական դոկտրինի /հիմքում 2007թ. Ադրբեջանի Ազգային Անվտանգության ռազմավարության հայեցակարգն է/ 2-րդ դրույթում Ադրբեջանի ազգային անվտանգության վրա բացասաբար ազդող հիմնական գործոնների թվում նշված են «ադրբեջանական տարածքների օկուպացման» շարունակումը և դրանցում հայկական կողմի «ավերիչ» գործունեությունը,³²⁸ իսկ 3-րդ դրույթում՝ արտաքին սպառնալիքների թվում առաջին հերթին ընդգծված է Ադրբեջանի տարածքի հայկական «օկուպացիան»:³²⁹ Հատկանշական է, Ադրբեջանի խորհրդարանի անվտանգության և պաշտպանության հանձնաժողովի անդամ, ազգայնական հայացքներով հայտնի Զահիդ Օրուջը, նշելով, որ «Ադրբեջանի ռազմական դոկտրինը նպատակ ունի վերահաստատել երկրի տարածքային ամբողջականությունը», դոկտրինն անվանել է «Ադրբեջանի օկուպացված տարածքների ազատագրման դոկտրին»³³⁰: Իր հերթին, 2009թ. Թուրքիայի Ազգային հետախուզության կազմակերպությունը/MIT/ հրապարակեց թուրքական հետախուզության համար հիմնական 10 թիրախային տարածքները և խնդիրները, որոնց մեջ նշված էր նաև Հայաստանը և ԼՂ հիմնախնդիրը:³³¹

Ադրբեջանի Հանրապետության մեկ այլ փաստաթղթում՝ Ազգային անվտանգության հայեցակարգում նշված է հետեւյալը. «Յուրաքանչյուր երկիր, համաձայն միջազգային օրենքի, իրավունք ունի պաշտպանվելու բաց եւ գաղտնի գործողություններից, որոնք կարող են վնասել իր անկախությունը, ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը եւ սահմանադրական կարգը: Ադրբեջանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության դեմ Հայաստանի կողմից իրականացվող ագրեսիվ քաղաքականությունը նման մի օրինակ է:

Չնայած արագ զարգացող տնտեսության բարեփոխումներին եւ այլ կարեւոր ձեռքբերումներին, Ադրբեջանի դեմ Հայաստանի ագրեսիան շարունակում է ստեղծել սոցիալական եւ քաղաքական լուրջ խոչընդոտներ: Այս խնդիրը, որի մեջ ներառված է տարածաշրջանը, մեծ սպառնալիք է ներկայացնում Ադրբեջանի ազգային շահերի դեմ:

³²⁸ Текст военной доктрины Азербайджана, 10.06.2010, http://www.aze.az/news_tekst_voennoy_doktriny_37501.html

³²⁹ Տես՝ նույն տեղում:

³³⁰ Վ. Դիլանյան, «Ադրբեջանի պաշտպանության ոլորտի վիճակը. ռազմական դոկտրին», 03.07.2010, <http://archive.ankakh.com/2010/07/44234/>

³³¹ Десять приоритетов турецкой разведки, 20.03.2009, www.regnum.ru/news/1140155.html

Անկախ հակամարտության լուծման գործընթացի արդյունքներից՝ ՀՀ քաղաքականության մոնոէթնիկ պետականության գաղափարախոսության պահպանումը, էթնիկ գտումները եւ տարածքային էքսպանսիան կշարունակի բացասաբար ազդել երկու երկրների ապագա հարաբերությունների վրա:

Ադրբեջանական «անվերահսկելի» շրջաններում, որոնք շարունակում են օկուպացված լինել Հայաստանի կողմից, պարարտ հող է ստեղծվում տրանսնացիոնալ կազմակերպությունների հանցավոր գործունեության, ինչպես նաեւ այլ անօրինական գործունեությունների համար:

Էկոլոգիական անվտանգության առումով այդ տարածքներում ոչնչացվում են ֆլորան ու ֆաունան, ինչպես նաեւ հաճախակի են լինում հրդեհներ: Հայաստանում տեղակայված Մեծամորի ատոմակայանը, որը տեխնիկապես մաշված է, վտանգի աղբյուր է ողջ տարածաշրջանի համար»³³²:

Այս փաստաթղթերում տեղ գտած ձևակերպումներին զուգահեռ, հարկ է նշել Ադրբեջանի սպառազինման անընդհատ աճող ցուցանիշները: Եթե 2003թ. Ադրբեջանի սպառազինության բյուջեն 163 մլ դոլար էր³³³, իսկ 2007թ.՝ 1.3 մլրդ, ապա 2012թ. այն արդեն կազմում էր 3.6 մլրդ դոլար³³⁴: Այս հանգամանքն ինքնին մեծ վտանգ է ներկայացնում ինչպես ՀՀ և ԼՂՀ անվտանգությանն, այնպես էլ Հարավային Կովկասի ուժերի հավասարակշռության տեսանկյունից: Այդ առումով հատկապես մտահոգիչ է թուրք-ադրբեջանական ամրապնդվող դաշինքը, որը տարածվում է նաև դեպի Վրաստան և ունի Վրաստանն իրենց ռազմաստրատեգիական միություն ներքաշելու հետևողական միտումներ: Դա ևս մեկ անգամ հաստատում է 2011թ. հունիսի 18-ին Տրապիզոնում Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի միջև ստորագրված հռչակագիրը / Trabzon Declaration/, որը հիմնվելով ինքնիշխանության և տարածքային ամբողջականության, հակամարտությունների խաղաղ կարգավորման, միջազգայնորեն ճանաչված սահմանների անձեռնմխելիության, ինքնիշխան

³³² Տ.Պետրոսյան, Ի. Բարխուդարյան, «Հայաստանի և Ադրբեջանի Անվտանգության ռազմավարությունները. համեմատության փորձ», 22.06.2010.

<http://www.armedia.am/index.php?action=NKR&what=show&id=1247165103&lang=arm>

³³³ Aliyev Highlights Baku's Boosted Military; Yerevan Concerned, 13/06/2013, <http://www.rferl.org/content/azerbaijan-military-buildup-armenia-aliyev/25028461.html>

³³⁴ «Алиев: Военный бюджет Азербайджана больше всего бюджета Армении, и мы этим воспользуемся», 16/01/2013, <http://www.rosbalt.ru/exussr/2013/01/16/1082178.html>

պետությունների հավասարության, պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ սպառնալիքի կամ ուժի կիրառման ձեռնպահության սկզբունքների վրա, հաստատագրում է հետևյալ դրույթները³³⁵.

- Շարունակել միջազգային կազմակերպություններում միմյանց թեկնածություններն աջակցելու քաղաքականությունը; մասնավորապես աջակցել Ադրբեջանի Հանրապետությանը որպես ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի ոչ-մշտական անդամի՝ տարածաշրջանի ընդհանուր շահերը սպասարկելու նպատակով, աջակցել միմյանց եվրոպական և եվրոատլանտյան կառույցներում համարկվելու ճանապարհին, ընդգծել տարածաշրջանային և միջազգային խնդիրներով ընդհանուր շահերի շուրջ խորհրդակցության կարևորությունը, և հետագայում ընդլայնել խորհրդակցական համագործակցությունը գոյություն ունեցող մեխանիզմներով ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԽ, ՍԾՏՀ, ՆԱՏՕ, ԵՄ և այլ կազմակերպությունների շրջանակներում:
- Նշել Ադրբեջանի Հանրապետության ԼՂ-ի և ԼՂ-ի հարակից տարածքի շուրջ հակամարտության, ինչպես նաև Վրաստանի Աբխազիա և Ցխինվալի/ Հվ. Օսիա շրջանների շուրջ հակամարտության հնարավորինս արագ կարգավորման կարևորությունը՝ հիմք ընդունելով ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և միջազգայնորեն ճանաչված Ադրբեջանի ու Վրաստանի սահմանները; ընդգծել փախստականների, ինչպես նաև ներքին տեղահանված անձանց ապահով և արժանապատիվ վերադարձը իրենց ծագման վայրերը:
- Խթանել հարաբերությունների հետագա զարգացումը բոլոր, հատկապես առևտրի, էներգետիկայի, տրանսպորտի և բանկային գործի, շրջական միջավայրի ոլորտներում՝ համատեղ նախագծերի և համագործակցության ծրագրերի, անհրաժեշտության դեպքում նաև եռակողմ համագործակցության մեխանիզմների միջոցով :

³³⁵ Trabzon Declaration, Trabzon, 8 June 2012, www.mfa.gov.az , www.mfa.gov.tr, www.mfa.gov.ge

- Արտահայտել են իրենց աջակցությունը ՏՐԱՍԵԿԱ-ին (Եվրոպա - Կովկաս - Ասիա տրանսպորտային միջանցք) և աշխատել Մեծ Մետաքսի ճանապարհի և Եվրասիական Տրանսպորտային միջանցքի, ինչպես նաև երկաթգծեր և մայրուղիներ ներառող եռակողմ տրանսպորտային այլ ծրագրերի լայնամասշտաբ գործունեության վերականգնման ուղղությամբ, կարևորել նախատեսված ժամկետում Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծային նախագծի ավարտը, որի դեպքում դա Աքթաու-Ուրումչի / Ղազախստան-Չինաստանի Սինցզյան-ույղուրական ինքնավար մարզ/ երկաթգծի հետ միասին կկազմի «21րդ դարի Երկաթե Մետաքսե Ճանապարհը»:
- Հաստատել Բաքվի Միջազգային ծովային առևտրային նոր նավահանգստի կառուցման նախագիծը, որը Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու ավարտից հետո կդառնա Արևելք-Արևմուտք Տրանսպորտային միջանցքի կարևոր օղակ, կարևորել Ադրբեջանի, Վրաստանի Թուրքիայի միջև համագործակցությունը՝ էներգետիկ պաշարները Ադրբեջանից և Կենտրոնական Ասիայի պետություններից միջազգային շուկա տեղափոխող նոր խողովակաշարային նախագծերի իրագործման նպատակով:

Այսպիսով, ներկա ժամանակահատվածում Վրաստանի վարած քաղաքականության հիմնական միտումներն ընթանում են Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքում ընդգրկվելու ճանապարհով, որի իրագործման դեպքում Հայաստանին սպառնում է եռակողմ շրջափակման մեջ հայտնվելու հեռանկարը:³³⁶

Այդուհանդերձ, ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգության դեմ ուղղված մեկ այլ սպառնալիք է թուրք-ադրբեջանական ռազմաստրատեգիական դաշինքի ծավալումը դեպի Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետություններ: Թյուրքալեզու

³³⁶ Մտահոգիչ է նաև Թուրքիա-Ադրբեջան-Իրան հարաբերությունների նոր միտումները: 2011թ. ապրիլի 16-ին Իրանի Ուրմիա քաղաքում կայացավ Ադրբեջանի, Իրանի և Թուրքիայի ԱԳ նախարարների եռակողմ հանդիպումը, որի արդյունքում ստորագրվեց երեք պետությունների միջև համագործակցության ձևաչափը որոշող համատեղ Հռչակագիր՝ կազմված 9 հոդվածներից: Հռչակագիրը պարունակում է նշված պետությունների միջև տնտեսական, քաղաքական և անվտանգության ոլորտներում համագործակցության զարգացման անհրաժեշտությունը ընդգծող հոդվածներ: Стен' Главы МИД Азербайджана, Ирана и Турции приняли совместную декларацию, состоящую из девяти пунктов, <http://www.trend.az/news/politics/1862689.html>, 16.04.2011

պետությունների համագործակցության խորհուրդը վերջին տարիներին շարունակում է աշխույժ գործունեություն ծավալել: 2011թ. սեպտեմբերի 15-ին Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի Քարտուղարության ղեկավար Հալիլ Աքընչըն հայտարարեց, որ կազմակերպության բոլոր թյուրքալեզու պետությունները կարևորում են ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորումը՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման շրջանակներում:³³⁷ Այնուհետև, 2011թ. հոկտեմբերի 10-11-ին Ալմաթիում տեղի ունեցավ Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի առաջին գագաթնաժողովը, որի արդյունքում Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի, Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևի, Ղրղզստանի նախագահ Բ. Օտունբաևի և Թուրքիայի փոխվարչապետ Բեքիր Բոզդաղի կողմից ստորագրվեց համատեղ հռչակագիր: Դա կազմված է 7 բաժիններից՝ «Ընդհանուր հարցեր», «Տնտեսական հարցեր», «Միջազգային նախագծեր», «Անվտանգության խնդիրներ», «Սոցիալ-մշակութային հարցեր», «Համագործակցություն միջազգային կազմակերպությունների շրջանակներում» և «Այլ հարցեր»:

2012թ. Բիշկեքում տեղի ունեցավ Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի երկրորդ գագաթնաժողովը, որին մասնակցում էին Թուրքիայի նախագահ Ա. Գյուլը, Ադրբեջանի վարչապետ Ա. Ռասըզադեն, Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևը և Ղրղզստանի նախագահ Ա. Ատամբաևը: Գագաթնաժողովի ընթացքում քննարկվեցին մի շարք հարցեր, կրկին անգամ կողմերը հաստատեցին իրենց պատրաստակամությունը՝ ընդլայնելու քառակողմ համագործակցությունը: Անգամ հայտարարվեց, որ համաձայնություն կա կողմերի միջև Թուրքիա - Ադրբեջան - Կասպից ծով - Ղազախստան - Ղրղզստան - Չինաստան երկաթուղային նախագծի կառուցման համար:³³⁸ Այդ նպատակի իրագործման գործընթացը սկսելու համար նախատեսված էր պետությունների տրանսպորտի նախարարների հանդիպում և արձանագրության պատրաստում:

³³⁷ Тюркоязычные государства поддерживают территориальную целостность Азербайджана Совет сотрудничества тюркоязычных государств (ССТГ) поддерживает территориальную целостность Азербайджана., 15.09.2011, <http://news.day.az/politics/288468.html>

³³⁸ На саммите Совета сотрудничества тюркоязычных государств принят ряд важных документов, 23.08.2012, <http://www.1news.az/politics/20120823115857948.html>

2013թ. օգոստոսի 16-ին Գաբալայում տեղի ունեցավ Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի երրորդ գագաթնաժողովը, որի ընթացքում Թուրքիայի նախագահ Ա. Գյուլը հայատարարեց, որ «Թյուրքական աշխարհի հիմնական խնդիրներից մեկն այսօր ԼՂ համակարտությունն է: Թուրքիան այդ հարցում միշտ աջակցել է Ադրբեջանին և հետագայում ևս աջակցելու է»: Ապա նա հավելեց. «Մենք հնարավորինս կաջակցենք այդ խնդրի խաղաղ կարգավորմանը՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում: Ես ցանկանում եմ, որ Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի նիստը հետագայում տեղի ունենա ԼՂ-ում»³³⁹:

Այսպիսով, Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքը, ինչպես նաև առհասարակ Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի ամրապնդումն ու ընդլայնումը, որպես ինստիտուցիոնալ կառույց, անմիջական սպառնալիք է ներկայացնում ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությանը:

³³⁹ Gul Wants Turkic Summit to be Held in Karabakh, <http://asbarez.com/112953/gul-wants-turkic-summit-to-be-held-in-karabakh/>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխատանքը և ի մի բերելով ատենախոսության հիմնական դրույթները՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. 1985թ. ԽՍՀՄ-ում «վերակառուցման» ժամանակաշրջանում քաղաքական ճգնաժամի պայմաններում, Լեոնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը, ինչպես նաև Ադրբեջանի ԽՍՀ-ում տեղի ունեցող ներքին զարգացումները հնարավորություն ընձեռեցին Թուրքիային համապատասխան քայլեր ձեռնարկել Ադրբեջանում իր ազդեցության հաստատման համար:

2. ԽՍՀՄ կազմալուծումից հետո Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում տարածաշրջանային գերտերություն դառնալու Թուրքիայի հավակնությունների իրագործման համար անհրաժեշտ էր ընդլայնել քաղաքական ազդեցությունը թիրախային պետություններում: Այդ իսկ պատճառով Թուրքիան սկսեց տարբեր մեթոդներով աշխատել նախ Ադրբեջանի, ապա Կենտրոնական Ասիայի թյուրքախոս պետությունների ինչպես ղեկավարությունների, նույնպես և քաղաքականապես գործուն հանրության հետ: Ադրբեջանի վրա անուղղակիորեն ազդելու և վերջինին դեպի իրեն կողմնորոշելու նպատակով Թուրքիան որպես հիմնական մարտավարություն կիրառում է ազգայնական, մասնավորապես պանթյուրքական գաղափարախոսության, «թուրքական մոդելի» գործոնի, ինչպես նաև սուննի և նուրջու թարիքաթի քարոզչությունն ու համապատասխան ենթակառույցների ներդնումը Ադրբեջանում: Թուրքիան իբրև «փափուկ ուժի» քաղաքականության գործիք «ազգայնական» և «իսլամական» գաղափարախոսությունները կիրառում է թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքական դաշտում՝ հարմարեցնելով և համապատասխանեցնելով տվյալ ժամանակաշրջանին հատուկ աշխարհաքաղաքական գործընթացների և վերաճկումների ընդհանուր միտումներին: Արդյունքում, Թուրքիան կարճ ժամանակահատվածում ապահովում է իր ռազմական, քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական ներկայությունն Ադրբեջանում:

3. Աշխարհաքաղաքական գործոնը Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները պայմանավորող գլխավոր գործոնն է: Մյուս գործոնները ածանցվում են նրանից կամ կազմում են նրա անբաժանելի մասը: Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է գործում ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ՌԴ-ի, Իրանի և Իսրայելի շահերի համընկնումն ու բախումը տարածաշրջանում:

4. Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններում որոշիչ է աշխարհատնտեսական գործոնի ազդեցությունը, որը պայմանավորվում է 1994թ. ստորագրված միջազգային բազմակողմ «Դարի Պայմանագրի» կնքմամբ: Էներգատնտեսական գործարք լինելուց զատ, այն գլխավորապես աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական կարևորագույն նշանակության նախագիծ է: Դա, ըստ էության, Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններում, ինչպես նաև արտաքին ու ներքին քաղաքականությունն ուղղորդող հիմնական գործոնն է, որը կանխորոշում է այդ երկրների տեղն ու դերը Արևմուտքի ծրագրերում:

5. Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում մեծ նշանակություն ունեցավ ԼՂ հակամարտության ռազմականացումը և հակամարտության կարգավորման խնդրի միջազգայնականացումը, երբ վերոնշյալ երկու պետությունները սկսեցին կիրառել «ղարաբաղյան գործոնը» որպես միմյանց հետ հարաբերությունների զարգացման և ամրապնդման «պատմական» հնարավորություն: Ադրբեջանում «ղարաբաղյան գործոնը» օգտագործվեց և օգտագործվում է քաղաքական վերնախավի ձևավորման գործընթացում՝ խաղաքարտ հանդիսանալով իշխանության տարբեր ուժերի համար:

6. 1991-1995թթ. Թուրքիա - Ադրբեջան հարաբերությունները մեծապես պայմանավորված են եղել Ադրբեջանի միջկլանային ու ներիշխանական պայքարում միմյանց ներուժը և ռեսուրսները որպես գործիք օգտագործելու միջոցով մի կողմից տեղական որևէ կլանի իշխանությունը, մյուս կողմից՝ Թուրքիայի ազդեցությունը Ադրբեջանում հաստատելու կամ մեծացնելու միտումներով:

7. 1995թ. «մարտյան իրադարձությունների» արդյունքում Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում ստեղծված որոշակի լարված դրության հաղթահարումից հետո երկկողմ հարաբերությունները թևակոխեցին առավել կայուն և դինամիկ զարգացման փուլ: Թուրքիայի վարչապետ Թ. Չիլլերի /1995թ. ապրիլի 12;

1996թ. ապրիլի 14-15/ և նախագահ Ս. Դեմիրելի /դեկտեմբերի 7-9/ Բաքու կատարած պաշտոնական այցերից հետո հիմնականում հարթվեցին առաջացած քաղաքական խնդիրները երկու պետությունների միջև և սկսվեց համագործակցության ընդլայնման շրջանը գրեթե բոլոր ոլորտներում:

8. Հայկական գործոնը խոչընդոտում է Թուրքիայի և Ադրբեջանի տարածաշրջանային նպատակների իրագործմանը: Ադրբեջանի միջոցով դեպի Միջին Ասիա Թուրքիայի քաղաքական-տնտեսական ազդեցության ընդլայնման քաղաքականության համատեքստում Հայաստանն ու ԼՂՀ-ն կատարում են արգելափակող, զսպիչ գործառույթներ: Մյուս կողմից, հայկական գործոնը միավորում է այդ երկու պետություններին՝ ընդդեմ ընդհանուր թշնամու «կերպարի» և իբր ազգային անվտանգության դեմ սպառնալիքի գաղափարի: Թուրքիան և Ադրբեջանը միջազգային ատյաններում նույն դիրքորոշմամբ են հանդես գալիս ԼՂ հակամարտության կարգավորման, Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման հարցերի շուրջ, պաշտոնական և ոչ պաշտոնական մակարդակներում համագործակցում են միմյանց հետ հակահայկական քաղաքականության մշակման ու իրագործման խնդրում:

9. Հայոց Ցեղասպանության 100-ամյակի նախօրեին Թուրքիան և Ադրբեջանը ծրագրում են ստեղծել կազմակերպված միասնական սիյուռք՝ հայկական սիյուռքի օրինակով՝ չեզոքացնելու հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը: Դա է վկայում 2010թ. կազմավորված Թուրքիայի փոխվարչապետի ենթակայության ներքո գտնվող՝Արտասահմանում ապրող թուրքերի և բարեկամ հասարակությունների տնօրինության» ստեղծումը:

10. Թուրքիան և Ադրբեջանը լայնորեն համագործակցում են միջազգային զանազան կառույցների շրջանակներում, տարածաշրջանային և միջազգային խնդիրների շուրջ հիմնականում հանդես են գալիս նույն դիրքորոշումներով: Առավել սերտ համագործակցություն են ցուցաբերում ՄԱԿ, ԵԱՀԿ, ՆԱՏՕ, Իսլամական կոնֆերանս, Թյուրքալեզու պետությունների վեհաժողովկազմակերպություններում: Վերջինս տարածաշրջանային քաղաքական նախագիծ է, որի գործունեությունը հիմնված է թյուրքական համերաշխության դրսևորման վրա և ուղղված է թյուրքալեզու

պետությունների, ինչպես նաև թյուրքական այլ ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների ամրապնդմանը և քաղաքական, տնտեսական, հումանիտար ոլորտներում համագործակցության ընդլայնմանը:

11. Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում միանգամայն առանձնահատուկ դեր ունի քրդական գործոնը: Վերջինը հետևողականորեն օգտագործվում է Մեծ մերձավորարևելյան տարածաշրջանում իրենց աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերն ունեցող «ուժային կենտրոնների» կողմից: Քրդական գործոնը հիմնականում ի հայտ է գալիս Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների որոշակի լարվածությանը կամ անհամաձայնությանը զուգահեռ և դրսևորվում Թուրքիայի կողմից Ադրբեջանի «քրդական քաղաքականության» դեմ պաշտոնական հայտարարությունների և դիվանագիտական դեմարշների միջոցով՝ հիմք ընդունելով Ադրբեջանի քաղաքական ու տնտեսական վերնախավում առկա քրդական ազդեցիկ ներկայությունը: Միևնույն ժամանակ Ադրբեջանը քրդական գործոնն օգտագործում է, ձգտելով առավելագույնս քաղաքական շահաբաժիններ ձեռք բերել տարածաշրջանային զարգացումների համատեքստում:

12. 2002թ. հետո, Թուրքիան որդեգրում է նոր քաղաքական ուղեգիծ՝ «զրո խնդիր հարևանների հետ» բանաձևի շրջանակում առաջնահերթությունը տալով գործուն արտաքին քաղաքականության իրագործմանը հատկապես նախկին Օսմանյան կայսրության տարածաշրջանում: Այդուհանդերձ, Թուրքիայի կողմից նոր արտաքին քաղաքական հայեցակարգը պետք է դիտարկել ոչ այդքան ռազմավարական, որքան մարտավարական փոփոխություն՝ պայմանավորված աշխարհակառուցման նոր գործընթացներում իր համապատասխան տեղը զբաղեցնելու և աշխարհաքաղաքական վերաճակվորումներին համահունչ լինելու անհրաժեշտությամբ: Ուստի, ռազմաստրատեգիական, ռազմաքաղաքական և տնտեսաքաղաքական տեսանկյունից Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղեգիծը շարունակում է մնալ գործնականում գրեթե անփոփոխ՝ ենթարկվելով միայն ժամանակակից «խաղի օրենքներին» համապատասխան մարտավարական ձևափոխումների և հայեցակարգային վերաճակերպումների: Այս

առումով, 2002թ. հետո Ադրբեջանի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականության ռազմավարությունը ևս մնաց գործնականում անփոփոխ և հիմնավորվեց որդեգրված նոր հայեցակարգում: 2010թ. «Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ աջակցության մասին» համաձայնագրի ստորագրումը երկու երկրների հարաբերությունները տեղափոխեց որակական նոր հարթություն:

Ունենալով կայուն գաղափարական հիմք և քաղաքական համապատասխան նախադրյալներ՝ այս պայմանագիրը կարող է առանցքային նշանակություն ունենալ տարածաշրջանային հետագա զարգացումների վրա:

Թուրք-ադրբեջանական ռազմավարական համաձայնագիրը ներկա աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում հանդիսանում է միջազգային ուժերի հարաբերակցության հավասարակշռությունը խախտող և ազդեցությունների հաշվեկշիռը փոխելուն նպատակաուղղված ապակայունացնող գործոն: Թուրք-ադրբեջանական դաշինքը ՀՀ ու ԼՂՀ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիք է:

13. 2008 թ. ռուս-վրացական «Հնգօրյա պատերազմը» խթանեց Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական զարգացումների ընթացքը: Պատերազմի արդյունքում՝ Վրաստան-Ռուսաստան դիվանագիտական հարաբերությունների խզումով ստեղծվեց իրավիճակ, երբ ռազմավարական կարևոր դիրք ունեցող Վրաստանը որպես տարանցիկ երկիր կասեցնում է Ռուսաստանի տեղաշարժը տարածաշրջանում՝ նպաստելով Հարավային Կովկասում Թուրքիայի առաջխաղացմանը: Ներկա ժամանակահատվածում Վրաստանի հանդեպ Թուրքիան և Ադրբեջանը վարում են քաղաքական ու տնտեսական վերահսկման լծակներ ու մեխանիզմներ ստեղծելու աստիճանական և նպատակաուղղված քաղաքականություն, որի արդյունքում Վրաստանն արագորեն ընթանում է Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքում ընդգրկվելու ճանապարհով: 2008թ. ռուս-վրացական պատերազմի արդյունքում մեկուսացվելով Ռուսաստանից և պաշտոնապես հրաժարվելով ԱՊՀ անդամակցությունից, Վրաստանն իր հետագա զարգացումը կապում է Արևմուտքի /վարելով եվրոատլանտյան կառույցներին

համարկվելու քաղաքականություն/, իսկ տարածաշրջանային մակարդակում՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Թուրքիան Վրաստանի համար դիտարկվում է որպես ՆԱՏՕ, Եվրամիություն և այլ Արևմտյան կառույցներին կապող օղակ, իսկ Ադրբեջանը՝ իրեն կենսական նշանակության էներգապահովման աղբյուր: Ուստի, Վրաստանը վարում է բազմակողմանի համագործակցություն ևԲ Ադրբեջանի ևԲ Թուրքիայի հետ: Բացի այդ, Վրաստանը, միակողմանիորեն, պաշտոնապես երկու պետություններին ճանաչել է որպես ռազմավարական դաշնակիցներ: Այսպես, ընթացիկ գործընթացների արդյունքում, առավելագույնը միջնաժամկետ հեռանկարում, Վրաստանը կարող է հայտնվել Թուրքիա-Ադրբեջան դաշինքի ամբողջական ազդեցության գոտում և վերահսկողության ներքո:

Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքը, ինչպես նաև առ հասարակ Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի որպես ինստիտուցիոնալ կառույց ամրապնդումն ու ընդլայնումը անմիջական սպառնալիք է ներկայացնում ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

1. ԱԳՆ Սահմանակից երկրների վարչության ընթացիկ արխիվ, 13.06.2012, 28.09.2012, 08.11.2012, 15.03.2013

Փաստաթղթեր

2. Արձանագրություն Ադրբեջանի Հանրապետության ԱԳՆ-ի և Թուրքիայի Հանրապետության ԱԳՆ-ի միջև համագործակցության մասին, Բաքու, փետրվարի 28, 1992
3. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն
4. Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին
5. Доклад N°156, Международная Группа по Предотвращению Кризисов(International crisis group) - Европа, 13 мая 2004.
6. Конституционный акт о восстановлении государственной независимости Азербайджана, 18.10.1991.
7. Соглашение о создании Содружества Независимых Государств, 08. 12.1991.
8. Текст военной доктрины Азербайджана, 10.06.2010, http://www.aze.az/news_tekst_voennoy_doktriny_37501.html
9. A national security strategy for a new century, The White House, October 1998.
10. Central Election Commission of the Republic of Azerbaijan, Elections and Referendums, 1991.
11. Dış Ticaret İstatistikleri, Türkiye İstatistik Kurumu.
12. Georgia: Foreign Policy Strategy 2006-2009.
13. Interfax Petroleum Report, December 11-18, 1992.
14. Trabzon Declaration, Trabzon, 8 June 2012.
15. Türkiye, Ermenistan, Azerbaycan, Gürcistan Muahedenamesi, Kars, 16.03.1921.
16. Khomeini R., “Islamic Government”, Alhoda, UK, 2005, p.137.
17. Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Dostluk, İşbirliği ve İyi Komşuluk Anlaşmasının Onaylanması Uygun Bulunduğuna Dair Kanun, Ocak 24, 1992.
18. Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Stratejik Ortaklık ve Karşılıklı Yardım Anlaşması”, Bakü, 16 Ağustos, 2010.

19. Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında İşbirliği ve Dayanışma Anlaşması, 02.11.1992
20. Türksoy'un Kuruluşu ve Faaliyet İlkeleri Hakkında Anlaşmanın Onaylamasının Uygun Bulunduğuna Dair Kanun, Kanun No. 3973, 22.02.1994.
21. Ulkucu Komando Kamplari. AP Hukümetinin 1970'te Hazırlattığı MHP Raporu, İstanbul, 1997.

Հուշագրություններ

22. Ализаде З., Агаев Р., Азербайджан. Конецвторойреспублики (1988–1993 гг.), изд. Дом “Граница”, Москва, 2006, 615 с..
23. Земцов И., Партия или мафия? Разворованная республика, LesEdeiteursreunis, Paris, 1976, 126с..
24. Гусейнов В., Больше, чем одна жизнь, Кн. 1, 2, изд. дом “Красная Звезда”, Москва 2013. 384 с., 424 с..
25. Оруджев Э., Шуша. Май 1992г. Свидетельство очевидца, 2008, <http://azdiaspora.org/>
26. Садыгов И., Записки полковника, 16/03/2012, http://www.radioazadlyg.org/archive/isa_sadigov
27. Demirkol F., Diktatörleri uyku tutmaz, Der Yayınları, İstanbul, 2002, 328s..
28. Er T., “Azadlıktan Tiranlığa”, Sarkaç Yayınları, Ankara, 2010, 448s..
29. А. Муталибов, “В 55 лет мне пришлось начать с нуля”, Политический журнал, 24. 05. 2004.

Մենագրություններ

30. Դեմոյան Հ., Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը, Երևան, 2002, էջ 136:
31. Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում/1970-2001թթ./, Երևան, 2008, էջ 294:
32. Altstadt A., “The Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule”, Hoover Institution Press, Stanford, CA, 1992, p. 334.
33. Arpacık, Y., Kan Fırtınası, İteriş Yayınları, İstanbul, 2005, p. 261.
34. Awde N., Hill F.J., The Azerbaijanis: People, Culture and History, Bennett & Bloom, London, 2009, p. 224.
35. AydemirŞ. S., Suyu Arayan Adam, Remzi Kitabevi, İstanbul, 1997, s. 488.

36. Bolukbaşı S., *Azerbaijan: A Political History*, I. B. Tauris, London, 2011, p. 304.
37. Brzezinski Z., *The Grand Chessboard: American Primacy and Its Geostrategic Imperatives*, New York: Basic Books, 1998, p. 240.
